

ԱՐԴԻԳ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա Գ Ի Բ

№ 2 1900

ՓԵՏՐԻԿՈՐ

1900 № 2

ՏԱՄՆԵՐԿՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

երես	
1 ՊՈ-ՕՇԵԱՆՑ, ԳԵՐՃ	139 Յունօն (վեպ, շարունակութիւն),
2 ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԱԽԵՏԵՔ	167 Ընկերիս լիշտագուկին (բանասդ.),
3 ՆՈՑՆԸ	168 Տիեզերական զանզը (բանասդ.),
4 ՏԵՐ-ՄԻՐՍՔԵԱՆ, ՅՈՎՃ.	169 Անցած զնացած օրերից: Հրաշեռու՝ դոքոր.
5 ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԱԽԵՏԵՔ	185 Թափւեցին տերեններն... (բանասդ.),
6 ԿՈՊՊԵՇԻց Մ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ	186 Կայսերական ծնունդ (պազմևածք):
7 ՈՒՒԿԵՇԻց ԹԱԻԱՐԲԵԳԵԱՆ	192 Դուռն առաջ (բանասդելծ.):
8 ԹԱԻԱՐԲԵԳԵԱՆ, Վ.	193 Աշնան լացը (բանասդեղծութիւն):
9 ՅՈՒՇԱՆԻՍԵԱՆ, ՄԻՐԱՅԵԼ.	194 Սոցիալական չարաքերութիւնները:
10 ՏԵՐ-ՊՈՂՈՍԵԱՆ, Ա.	207 Հոգեպաշտութիւնը և նորա մետա- ցորդները (վերջ):
11 ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵԶՋԵԱՆ, ԳԵՐԻԴ.	219 Գերմանական օգնութեան բնկերու- թիւն Տաճկահայերի համար. III.
12 ՎԱՐԴԱՆԵԱՆՑ, Գ.Բ.	230 Տոլսուոլի՝ «Յարութիւն» վեպը:
13 ՅԱՐՄԱՐԵԱՆ, Ս.	236 Պարսկաստանից, VI.
14 ԽՄԲ.	240 Պատերազմը Հարաւ-Աֆրիկական:
15 ԽՄԲ.	258 Զանազան լուրեր.


Տեղեկատու եւ Յայտարարութիւններ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Տ. Մ. ՌՈՏՊԵԱՆՑԻ

Տպոգրաֆիա Տ. Մ. ՌՈՏՊԵԱՆՑ, Գօլ. որ., թ. № 41.

1900



ՄՐԿՅԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍՈՋ ԳԻՐ

№ 2 1900

ՓԵՏՐԻԱՄՐ

1900 № 2

ՅԱԽԱՐԱՐԱՐԱՐԱՐԱՐԱՐ

~~~~~

ԹԻՖԼԻՍ

Տպարան S. M. Պօլիստանը

Տիպոգրիա T. M. Ռոտինյանց Գոլ. պր., ճ. № 41.

1900



ДОВОЛЕНІ ПРИДУМОВОЮ ДІАЛОГІЮ

ЧИСЛІВІЛІ

Дозволено цензурою. Тифлісь, 23-го Февраля 1900 г.

# ՅՈՒՆՈՆ

ՊԵՐՃ ՊՈՅՇԵԱՆՑԻ

(Շարունակութիւն <sup>1)</sup>)

Զ.

— Դէհ, շուազենք՝ քանի օր կայ, ասում եւմ ժառավիս, այլ ևս  
առաջներիս զիւղերը մրնելու չենք, այս զիշեր իջևանը Ա. զիւղի  
տէրպէրի պուն է. ամենացարմար սենեակն է ողջ նոր-Բայազիդի  
գաւառի զիւղերի մէջ, քանի օղնականը չի եկել, մենք մեզ հա-  
մար պեղիլուկ անենք:

— Աւելի լաւ չի լինիլ, աղայ, փորձանքից հեռու կենանք,  
մեր ճանապարհը շարունակենք, ինչպէս մրկումդ Դրել էիր, էս  
զիշեր առաջներիս զիւղումը մնանք. թող օդնականը գայ, անց  
կենայ, թող փորձանքը հեռանայ:

— Մի զիշեր էլ լուերի ձեռքից հանգստութիւն չփեանենք:

— Եթէ ուզում ես լուն քեզ չընեդայնի, հրամայի՝ դուրսը,  
ոսյլի վրայ քեզ համար տեղաշոր քցեմ, էնպէս քնիր, որ էզուց  
արել ճաշուայ պեղը զայ՝ դու դեռ զարթնած չըլինիս... վայ, վայ,  
վայ, խօսքը փոխեց ծառաս, աղայ, աղայ, մի յեպ մրիկ փուր դես  
էն ինչ փոշի է բարձրացել... այ, այ, այ... ինչ շաբառը հն, մնց  
քշում...

<sup>1)</sup> Սկիզբը Մուրճ 1900 թ. № 1,

Յեւր նայելու ժամանակ չունեցայ, մէկը ձին լորած՝ եփեխցս հասաւ, սուրը զլխիս շողացրեց ու գոչեց.

— Հը՛, մնց ես զլուխդ հաւի ձագի պէս թռցնեմ, դու քանի՞ զլխանի ես, որ էսպէս զլուխը մի սոխ ժամանակ՝ մի ծառայի յուսով անահ, աներկիւղ գտաւառ ես ընկել, մանդալի:

— Ընչի՞ պիորի վախենամ, ծիծաղելով պապասխանեցի ես, քեզ պէս ձիաւոր ունիմ եփես քցած, զողը որ կը գայ, ինքս յեւ կը քաշուիմ, քեզ կը հրամայեմ հետը կոռւելու:

— Լաւ պարասխան էր, ծիծաղելով թռը պարեանը Դրեց իմ վաղածանօթ օղնականն և աւելացրեց.

— Հանաքը մի կողմը, մի յեւր նայիր:

— Այս յառաջ բարին, աշխարհքն եփեխցս ես ձղել, Օսմանցուի երկիրն այս կողմն էլ չի, թէ ասեմ՝ գնում ես Ելդիզ քեօշքը ցաք ու ցրիւ դալու:

— Լաւ նմանացրիր, հաւանեց սրախօսութիւնս օգնականը, գնում եմ մի պսպիկ Ելդիզ քեօշք հիմքից քամուն դալու. եթէ կուզես՝ ինձ ընկերացիր, գնանք էս դիշիր Ա. գիւղը ու բարի աշքովդ կը դեսնես այնտեղի Ելդիզ քեօշկի երկիրն անհանգիստ անող բռնակալին:

— Աւշակի Ա. դիւղն եմ գնում ես, ասացի, ինչ արած լուերը հոգիս հանեցին, մարմինս որ դեսնես, կը կարծես, թէ ծաղիկ եմ ընկել. իսկ Ա. դիւղի քահանային, ասում են, մաքուր սենեակ ունի, մի գիշեր, գոնէ, հանգիստ աչքս փակեմ:

— Երաւ է, պարասխանեց օգնականը, միակ յարմալաւոր սենեակն այս դաւառում՝ Ա. դիւղի բէրդէրն ունի, ես էլ այնքեզ պիսի իջնեմ, թէւ քիչ փոքր է, բայց երկուսիս կը բաւէ, մանաւանդ, որ դժուար՝ թէ ես այս գիշեր միջոց ունենամ ծածկի դակ:

— Ասա, ուրեմն, դեսնենք՝ բնչու ես հարիւրի չուփ ձիաւոր եփեղ գցել:

— Աւրեմն դու չլդիգեմ, Ա. դիւղումն է, աւաղակների թագաւորի Ելդիզ քեօշկը:

— Որ նվ լինի:

— Յունօն, Յունօն, աշխարհքը դակ ու վրայ շրջող անիծածը,

որ մի քանի գարի մեղ ոչ քուն է գուլիս, ոչ հանդիսոր։ Յոյս Աստուած, վերջապէս, այս գիշեր կազակուինք այն գազանից, այն առիւծից։ Կամ վանդակում կը կապենք, կը կաշկանդենք, և կամ մի կոր արճճի (գնդակ) զուրբան կանենք։ Իսկ երբ գազանների թագաւորը կը զլորուի, նրա սրորադրեալ գայլ ու աշուշներին, մեր շներն էլ կարող են խեղդոփել։

—Իսկ եթէ Յունօն ու իր ընկերները բոնուին, աւազակների հորը կը կորուի ձեր գաւառիցը։

—Քեզ կարող եմ հաւափացնել, որ չըկան ուրիշ աւազակներ, որ Յունօնի պէս աշխարհ հոփացնեն, էնքան լինի՞ Յունօն իր խմբով մեր ճանդն անցնի, ոչ թէ միայն մեր գտւառը, մեր հարեան Սիսիանն ու Դարալազեազն էլ կը հանդստանան և...»

Օգնականը մոռացաւ իր խօսակցութիւնը, գասմնեհնդի չափ հետեւակ զիւղացիք դիմացի լեռնաթմբից ցած եկան, գլխարկները հանեցին, զլուխ իջեցրին ու առջել շարուեցին։

—Արքերի՛ մեռնեմ, աղաց, խօսեց նրանցից մինը, ճար ունիս՝ գիս, չըկայ երկու ժամ՝ եօթն աշքանի արեւը մարդ կ'էրեր, երեսուն ձիաւոր, սիլահ, ասպապ (զէնք) կապած, այնալու թուանքները (ափողոդի հրացան) կռներից կախ՝ մրան մեր ոչխարի մէջ, հարիւր զլուխ մասք ոչխար չոկեցին, դրին իրանց տռաջը, քշեցին, սարն անցկացան, լնկան Դարալազեազի սինուռը (սահման)։

—Դուք մրգեղից եք, հարցրեց օգնականը։

—Հրամանքիդ արդ անեմ, մենք վերի Դ. զիւղիցն ենք. ոչ խարը քշում էինք զիւղը կթուելու, երեք շորս սուրու (հօս) իրար եփեից գալիս էին ու զողերն եկան, դունին, դարան, մեր գունը քանդեցին։

—Յերոյ դուք լաւ տեսաք, որ թուրքեր էին։

—Դուրբան քեզի, որ թուրք չըլինէին, լնչի՞ դողութիւն կանէին։

—Օգնականը երեսիս նայեց, ծիծալեց և հարցրեց.

—Ասում էք՝ ոչխար շափ դարան համ։

—Նմոր, շնոր, մեռնեմ քեզի, 100, 500, 200, 700...

—Տօ, սնաւեր, թերանիցդ հօք քրեհ չեն ուզում, խօսովի կոյ-

քին բոռնց քով թրիկացրեց կոնարակից մօրին կանդնողը և կամաց փափաց, կը մեռնես, որ տաս 1000, 2000:

— 7000, 6000, 5000... շիոթուած կտկագից խօսողը:  
0գնականը դարձեալ աչքով նշանացի արեց ինձ և ասաց:  
— Տղեք, լաւ գնորդեցիք աւ ազակներին, Յունոն մշջերը հօ չէր:  
— Ասպածու սէրն, աղայ, Յունոն մեր եղբայրն է, մեր արխան (Հոգանաւոր) է, Յունոն մեզ վեաս կը դամց:  
— Ասում էք՝ երիսները լաւ դեսաք ու ճանաչեցիք, որ թուրքեր էին:

— Հոգուս մեղք չեմ անիլ, աղայ ջան, մէջ մրաւ մի սպիտակամօրուս ծերունի, Երուաղէմ զնաշած՝ լոյս Գերեզմանի լոյսը դեսած մարդ եմ, քո գլուխն եմ երդւում, որ թուլիների (աւազակ) երեսը չըկարողացանք տեսնել, զլուխիները բաշլուղներ էին փաթաթել, կը նմանէին մեր Սկանայ հայր սուրբերը: Մեղայ Ասպածու, մինը, թէ որ դեղին չուխայ չունենար, սև հազած լինէր, ես կասէի՝ հէրտան իւզ ու պանիր հաւաքող հայր սուրբն էր, որ մեր դանն իջած էր:

— Հալիւնը, մօրուքից չես ամաչում, աւազակին վարդապեպի ես նմանացնում, միջամրեցի ես:

— Ես մեղայ Ասպածու, աղայ ջան, ծեր մարդ էի, աչքերս լաւ չեր դեսնում, կը բաշխես սխալութիւնս, զղաց մարդը:

— Տղեք, ասաց օգնականը, ծեր պապմած աւազակների ձիանց մէջ ճակապը ծաղիկ, կարմիր մափակ կմք:

0գնականի դուած հարցի վրայ ես խիստ զարմացայ. Նադօյի մափակի ճիշդ նշաններն ին:

— Կար, աղայ, կար, բայց քո ասածը չէր, դրականապէս շեշտեց մի երիտասարդ, որը ըստ երեսնութին՝ որոշում էր իւր շարժունքներով ու արտաքինով իւր համագիւղացիներից և նկատում էր, որ փոքր ինչ դաշուած է:

— Ես ինչ եմ ասում, խոժոս դէմքով դարձաւ երիտասարդին օգնականը:

— Հրամանքդ. Յունօշին ես կարծում, բայց մեզ կողոպսողների մէջ ոչ Յունոն կար և ոչ իւր մարդիկը. բոլորը շարաբաշցի թուրքեր էին, լուրջ խօսքերով պափախանեց երիտասարդը:

— Դէ, անպիտաններ, գոռաց յանկարծ օգնականը, տես՝ ի՞նչ-  
ովէս խօսքը մէկ արած՝ ուզում են պաշտպանել աշխարհաւեր ուա-  
զակազերթին, ես ձեզ բոլորիդ բանվումը կը փթացնեմ, եթէ ճըշ-  
մարիդը չասէք. նշաններից երեսում է, որ Յունոն ինքն է եղել, որ  
աշքներդ հանում է, բարին՝ 12 ամիս՝ հացերդ ուզում է ու երեսը  
ծածկած ձեր ապրանքը ուանում: Զեր ոչ մի խօսքին հաւափ չի  
կարելի ընծայել, ասում էք երեսուն ձիաւոր էին ու ցիմարաբար  
չէք մրածում, թէ այդքան մարդը հաղարաւոր ոչխար չի կարող  
ձիու թամբին դրած փախցնել:

— Տօ՛, աղայ, զլիսիդ մեռնեմ, մենք որ կանք՝ երկու որնանի  
անասուն ենք, մենք հազարներ պեսել ենք, որ հազարների հաշիւ-  
քանք, թէ հրամանքդ դիրես, որ շար ասացինք, հրամայի՝ քսան  
շինենք. վերջանաց գնաց, ասաց միւսը:

— Այ, հիմի խելօք ես խօսնում. լսեցէք՝ երբ որ ԱՀՍտչին՛  
(քննիչը) կը հարցնի, 25-ից աւելի շասէք և ցոյց ոտուէք, որ Յու-  
նոն ինքն էր: Եթէ այդպէս կը վկացէք, ես ձեզ կը պաշտպանեմ ու  
25-ի տեղ՝ 50 ոչխար ձեզ կը հասցնեմ: Իսկ եթէ Յունոյին չէք  
ցոյց պալ՝ ճիպուրի դակ ձեզ կը մահացնեմ:

— Բաշ ուստիա, աղայ ջան, քո խաթեր՝ Յունոն էր՝ որ կար, ախ,  
Ասրուած նրա կնուռը կոտրի, երեսում է՝ դնաւեր Յունոն ուզում է  
ոչխար պահել. շան զարմն իմ փաշկակալած, լսի պէս ճերմակ սէջիզո-  
էլ գարաւ:

— Եւ, ի հարկէ, լու ճանաչեցիր, որ Յունոն էր, Յունոն, Ա.  
զիւղացի Յունոն, էնպէս չէ, շեշտեց օգնականն երեք անգամ:

— Աչ, Յունոն չէր, ձայնը բարձրացրեց հասկացող երիտասարդը,  
ես նորից կրկնում եմ, որ Յունոն չէր, թուրքեր էին:

— Գու գլուխդ քարն ես դալիս, որ այսքան պատուական  
մարդկանց խօսքին հակառակում ես. ի՞նչ էք ասում, սիրելիքի  
Յունոն էր, թէ չէ:

— Յունոն էր, Յունոն էր, ձայն ձայնի դուին բոլորեքեւան-  
քացի այն մէկից:

— Աղայ ջան, գողերն իրանք ասացին, թէ գնացէք, դիւանի  
դրանն ասացէք, որ Յունոն էր ձեզ թալանողը: Ճակառը ծաղիկտ  
կարմիր մաղեանի վրաց նսրած՝ ինքն ասաց, որ ինքը Յունոն է:

— Նամու լաւ, հէնց էդպէս էլ կը պարասխանէք, ասաց օգնականը. Դէհ, հիմա վերադարձէք ձեր փները, էգուց առաւօր կը լսէք, որ Յունոն կենդանի, կամ մեռած՝ մեր ձեռքին է:

— Հապան մեր ոչխարները:

— Ձեր ոչխարները դուք շուրջով յետ կարանաք:

— Ո՞ւ մից:

— Եդ իմ զործս է, ասում եմ՝ կը սփանաք՝ ուրեմն կը սրանաք. մի առաւօր կը զարթնիք ու կը տեսնէք, որ մի հօտ ոչխար ձեր աղալների (փարախ) առաջին, առանց հովուի, առանց շների արածում էն. կը վերցնէք, ձեր մէջ հաւասար բաժին կանէք, բայց վայ ձեղ, եթէ մէկն ու մէկին զրկէք:

— Ենորհական ենք, գլխիդ շուրբան, զլուխ իջեցրին գիւղացիք և երեսները շրջեցին:

— Սսրուած ինձ հարամ անմ ուրիշի սեպհականութիւնը, ձեռքը թափ տուեց ճշմարգախօսն և յետ դարձաւ:

— Ենչու դու պահանջեցիր հակառակ ճշմարգութեան վկայելու և ընչու վիրաւորեցիր ուղիղ խօսողին, որ ինչպէս երեսում էր, այբ ու բենի հորին առած մարդ էր, հարցը ես օգնականին:

— Այսօր մեր ուշադրութեան զլիսաւոր առարկան Յունոն է, պարասխանեց օգնականւ. մենք ամենացն միջոց զործ պիտի դնենք Յունոյին ձերբակալու. այդ միայն հնարաւոր է այն ժամանակ, երբ ժողովրդի ու աւազակապետի մէջ թշնամութիւն կը մտնի, իսկ երբ ժողովուրդը մեզ օդնի, Յունոն կալանաւորուի, աշխարհն իսպառ կը խաղաղի:

Խմ և օդնականի հայեացքներն խսպառ դարբերւում էին իրարից, ես աւելի համերտչին էի իմ նախկին ուղիկից նադօյի հետ. վերջինիս ասութեամբ՝ ամեն մի հաւաղող, իւրաքանչիւր անշնորհք խաբերաց Յունոյի անունով է ասրսափ ազդում ժողովրդին:

Արեն արդէն մայր մինելու մօպ էր, որ մենք ուռք դրինք Ազ զիւ զի հանդը:

— Կու քշիր, գնա, քահանայի տանն իջիր, իսկ ես գիւղի գլխավերեօվ պատցաւ եմ զործելու և Յունոյի տունը յանկարծակի շրջապարելու, հեշտացնել պարագիլ պուր, մինչեւ ես զործավերջացնեմ ու զամ, ասաց օգնականն և ճանապարհից շեղուեց:

Է.

Հիւրասիրութիւնը հայ ազգի բնորոշ յափկութիւններից միննէ։ Մարդասիրական այդ բնոյթն ընդհանուր է ամբողջ Արևելքում։ Պարսիկ, Քուրդ, կամ Մաքր, Ասորիք՝ արևելեան աշխարհի միօրուայ ուժեղ պարրերը բոլորիքեան հիւրասիրութեամբ գերազանց են եղել արևմտեան համազօր ազգերից։ Նախկին արևելեան աշխարհականների այժմեան չքացած, կամ չքանալու դուռը հասած յեփնորդները՝ իւրեանց աննախանձելի ու անապահով վիճակի և մորաւոր ամլութեան մէջ՝ դարձեան նոյն հիւրասէրներն են։ Խոլածական մոլեռանդ խորութիւնը՝ եթէ՝ յաջողել է մի ամուր անջըրպեր հասպարել Մեքքայեան մարդարէի աւանդապահների և ուրիշ կրօնների հետեւորդների մէջ, բայց դարձեալ խոպառ. չի կարողացել չքացնել արևելքին յափուկ հիւրասիրական գովելի յարկութիւնը։ Դալով արևելքի փոքրիկ զաւակի՝ Հայ ազգի այն առաելութեանը, որ արժանացել է հանուր քրիստոնէութեան ժամանակազրական գրաբերում աւետարանի անդրանիկ աշակերտը լինելու պայունին, մենք պարզապէս կարող ենք լուծել այն հանելուիլ, թէ ընթիցն է, որ հայի մէջ հիւրասիրութիւնը կրնապատիկ, եռապատիկ ու քառապատիկ աւելի է իւր արևելցի դրացի, խլամադաւան ազգերից։

Եար հասկանալի է, հայ ազգի հիւրասիրութեան բնածին յարկութիւնին միացել է և աւետարանի մարդասիրական վարդապետութիւնը, և հայը՝ ըլնացած իւր կրած, անհամար, հողեկան և մարմնական, անցածով պայմաններին՝ դարձեալ մինչև այսօր եղել է հիւրասէր, կայ և կը մնայ նոյնը։ Բաւական է միացն յոռեպիսութեան և թերահաւարութեան մէջ յամասուած այլազդուն՝ ի՞նչ ալլզի, կամ մը աշխարհի զաւակ լինէր՝ միենոյն է, գնար Հայի աշխարհը, մի ծայրից մգնէր, միւսումը դուրս զար և դադար կը դար այնպիսին իւր բացասական կասկածութեանը։ Նա ի լույս աշխարհի կը հաշակէր, թէ հայից հիւրասէր ազգ չըկաց աշխարհիս երեսին։ Անցիր հայի շեմքը, մորիր նրա աղքատիկ յարկի ներքոյ և կը Փեսնեաւ նա իւր մի սուռն լիքը գառնուկների բերջին պապաուը կը կորէր և լայնասիրոր հաճութեամբ քո առաջը կը դնէր, ովք Ասորուծոյ հիւր։ Միայն ես ինքդ, թէ պասնաւոր ընկեր-

Ներ ունիս, հետեւակ ևս հիւր եկել, թէ բայի ձեր հեծած զրասպ-ներից՝ մի քանի ծառաներ, վարձկան բռնակիրներ, մինչեւ իսկ պա-տրահական ուղեկիցներ ևս ձեզ հետ էք բերել, վեասն ի՞նչ, դուք քոլորդ կընդունուիք ուրախ ու սրբաբաց, մեծարանքներ ու պա-տրիւներ կը սրանաք, և մի հատ փող ձեր գոզած քսակից չէք հանիլ, ձեր քսակը լիքը կը մրնէք հայի աշխարհը և լիքը դուրս կերթաք:

Հայի այս բնագուր և քրիստոնակուր յարկութիւններին քա-չածանօթ եղուը, ձեզ եմ հարցեում, կմրող էր չըշփոթուիլ ու ըլ-զարմանալ, երբ իւր յիմած օջաղում իրեն սառնութեամբ ընդու-նելու նշալներ է նկատում, այն էլ՝ մի անձնաւորութիւնից, որի վրաց ամենամեծ պարտականութիւնը կայ՝ իւր մշտական աւանդածը նախադէս ինքը կապարելու:

Ես ինքս էի մոլորուղ սաւոն ընդունելութիւն գոյած հիւրը, Ա. զիւղի հարուար ու բարեկեաց քահանան էր թժու դէմք և դհամ աչքեր ինձ ցոյց տուող տան տէրը:

Հոգեւոր պաշտօնեան՝ մարմնաւոր պաշտօնէի հետ նստած էին պէրպէրի տան դիմացի ծառավարդ պարտիզում՝ և գինի էին վայե-լում, երբ ևս ծոանց փողոցն անցաւ և ձիուս սանձը քաշեցի քա-հանացի բագի դռան առաջին:

Ծառաս արդէն իջել էր իւր ձիուց և մօտ վագել, պինդ բըռ-նել իմ ձիուս սանձն ու ասպանդակր, որ օգնի ինձ իջնելու: Բայց եօ չէի շարժուում տեղիցս և շուարած նայում էի դէպի պարուէզ, դէպի այն երկու մարդը, որոնք կոչուած են գիւղի հոգեւոր և մարմ-նաւոր պետերը լինելու: Տէրպէրին ճանաչելուց առաւել հեշտ բան չըկայ, մօրուքն ու Փարաջէն իրան մատիւում են, իսկ դա-նուգէրին ճանաչելն էլ հեշտացել է այն օրից, երբ տանուուէրական շլթան կրելու օրէնքը լոյս գիսաւ:

— Օրհնեա տէր, բարի բիկնն, դանուուէրէր, ձայն դուի ևս թամրի վրացից, տեսնելով որ նրանք երկուսն էլ կանգնել են տեղե-րից ու կամաց վսփսում են:

— Ասորուած օրհնեսցէ, հազիւ լսեցի իրիցի կոկորդում խեղդ-ուած ձայնը:

Եւ տէրպէրն ակա հայից ուղերը դանդաղաբար շարժեց դէպի քնձ: Տնիուուէրն էլ նրան հեղեւեց:

— Հիւր չէթք կամենալ, տէր հայր, ասացի ես:

— Հիւրն Ասրծունն է, պարզն, համեց...

— Զէ, տէրտէր, չի կարելի, ես չեմ թողնիլ, ես չեմ կարող, ես սիրիրական լինելու միվք չնախմ; զուր ես համեցէք անում: Աղաց ջնն, դարձաւ ինձ տօնուրէրը, կը բաշխես, գլխիդ դուրբան, ոչ տէրպէրն էս գիշեր իրաւոնք ունի իր դուռն ուրիշների համար բաց անելու և ոչ մեր գիւղումը քեզ նման պատուելի մորդին վայել սենեակ ունինք. խնդրեմ, զնաս, վանքումն թջնես:

— Ի՞նչ վանք:

— Մենք մի վանք ունինք մեր գիւղի կողքին, մի վարդապետ էլ կաց մէջը, զնա էնորել իջիր. վարդապետի խուցը պատիկ է, բայց երկուսիդ տեղ կանի: Գղիր, գղիր, ձայն տուեց վանուրէրը ծառի եգուը կանգնած գիւղացուն, որին ես չէի նկատել, շուրջ, մի վաղց կանչիր, աղացին դանի հայր սուրբի մօռ, ասա՝ վանուրէրն ասում էր՝ լաւ պատիւ տուր:

— Բայց ընչի համար, տանուրէր, ուրիշի դան վրայ այդպիսի իրաւունք ես գործ դնում; հարցը գիւղապետին:

— Տէրտէրի տունն էսօր իրանը չի, աղաց ջնն, պարասխանեց տանուրէրը, ես էլ, իմ գիւղն էլ, մեր տէրտէրն էլ, մեր ոլջ գաւառն էլ իշխանաւորինն ենք՝ երբ որ իրան պէսք է: Ես երեկուանից հրաման ունիմ մեր օգնականից, որ տէրտէրի սենեակն իր համար պարբաստեմ և ուրիշ մարդ տուն չըթողամ: Հիմի որ հրամանքդ ներս մոնես, սիրուդ կը փառաւորուի, մեր գիւղումն ինչքան կարստես ու խալիչէք կացին՝ փոռուած են էնորել. տէրտէրի խաս խաս բարձերը հերիք չի եկել, զրկել եմ մեր գտաւաւի ամենահարուստ մէլիք Մրգոյնց գանիցն եմ լաւ, խսրակ, նոր ու խսս վեշաշոր բերել տուել. երկրի տէրն է, գալիս է, ես հրամանոցդ մնց տուն թողամ: Կը բաշխես, աղաց ջնն, ես չըգիտեմ՝ դու նվ ես, բայց ովկուզի լինի՝ թէկուզ դու՝ թէկուզ քո ծառայի ծառան՝ ուրիշ անդամ՝ գլխիս վրայ տեղ ունի:

— Վնաս չունի, ժպասցի ես, դու, տանուրէր, պաշտօնդ կապարի, քո օգնականին պատիւ տուր, որ արդէն հետո եկաւ և քշեց, գնաց գիւղի վերի կողմը, իսկ տէր հայրը թող ինձ, նկերակցի, իր հետ միասին զնանք ձեր վանքը. երբ դու կը տեսնես քո օգնա-

կանին, յայտնիր իրան, որ այս ինչ մարդն եկաւ տէրպէրի տանն իջնելու և ես ներս չընդունեցի, ուղարկեցի վանքը:

— Ներողութիւն, տէր իմ, շփոթուեց տէրպէրը, նա երբ անունս իմացաւ, մօտ վազեց, ձիուս սանձը բռնեց և ասաց.

— Խնդրեմ՝ իջնես, մեր փնտեցիներին կը լրկենք հարեանի գուն, հրամանքդ հացարանը կը հանգստանաս:

— Զէ, տէր հայր, աւելի լաւ է, միասին գնանք ձեր վանքը՝ այնպեղ մի անկիւն կը գտնենք անշուշպ՝ մի զիշեր պապապարուելու համար: Ուրեմն, հրամացեցէք, տէրպէր, հեծնել ծառալիս ձին, թող նա ուրքով գայ, մենք քեզ հետ խօսելիքներ և գործելիքներ, ի պաշտօնէ, ունինք և դու ինձ անհրաժեշտ ես:

Տէրպէրը չըհամաձայնեց ձի հեծնելը, նա ձիուս սանձը ձեռքից մի քանի ըսովէ թողեց, ներս գնաց իւր գունը և շուրջով դուրս եկաւ ու դարձեալ ձեռքը ձգեց սանձին ու քայլ առ քայլ ինձ հետ միասին զրուցաբրելով՝ առաջնորդեց ինձ դէպի վանքը:

Աէս ժամ անցած՝ մենք վանքումն էինք:

Ժանդառքն արդէն կոխել էր, անծանօթ մարդի համար յժուար էր վանքի մասին զաղափար կազմել, բաց 13 օրական բոլորակ, գիշերացին լուսաւորի շնորհիւ՝ ես հրացաց հինաւուրց մենասրանի անասիկ դիրքի և զեղեցիկ ճարպարապետութեան վրայ: Լուսինը դիմացից աւելի վեհապանծ կերպարանք էր պալիս խոր ձորի հասդարյան ու ապառաժով լանջին ցենուած, կիսաւեր սրբավայրին Մենասրանի բարձրութիւնից տարածուած սփուերը մի զարզանդելի սրբազն պարկառալից տպաւորութիւն էր թողում հեռուից նայողի վրայ: Կարծում էիր, թէ մի երկրորդ ժական վանքի ուրուազիծն էր ծրագրուած քարակոցուրի մէջ, համասփիւռ թագաւորած խորհրդաւոր լուութիւնն ընդհագուռում էր իմ ետէրպէրի կամաց քշիչողով և ձորի հունի միջով վազող բարակ առուակի կարկաչիւնով:

Մեր ձիանոնց սփնաձայնն էր անշուշպ, որ անհանդիսաւ էր արել վանքի սակաւամիւ բնակիչներին: Յանկարձ՝ մի փոքրիկ դուռը բացուեց և ճրագի լոյսի մէջ երկեցին երկու մարդկացին սփուելիներ:

— Յառաջ դնա՛, գիւս, հզ են այսպէս տարաժամ՝ ացցելուները լսեցի խցի դոնից կարգադրութիւն անող մի ձայն:

—Վահն, բացականչեցի ես, Թ. ծերունի վարդապետը:

—Ծանծթ էք, նա ինքն է, հասրափեց տէրտէրը:

—Ի՞նչ ուրախ եմ, Աստուած օգնական Թ. հայր սուրբ, չընամբերեցի ու ձայն փուի ես և թռայ ձիուց:

—Հայ, Աստուած պահապն, քո զալուսորդ բարի, այ անսպասելի հիւր. շնուր, մահպեսի, քաշիր պարոնի ձին և ճուղեր բռնութիր, մեր պատուական բարեկամը քաղցած կը լինի, կարգադրեց հայր սուրբն իւր հետ եղած անձնաւորութեանը:

—Նեղութիւն մի՛ քաշիլ, հայր սո՞ւ րբ, միջամկեց քահանան, հէնց հիմի ամեն բան մեր տանից կը զայ, ափսոս միայն, որ սամավար դու չունիս, մերն էս իրեկուն իմ իրաւունքից դուրս է, օգնականի համար է. իսկ քեզ յայսնի է, որ մեր գաւառումը սամավար երկու հար կայ. մինը մերն է՝ մէկէլը մէլիք Մրգոյենցը: Քու էլ, հայր սուրբ ջան, մի սամավարն ի՞նչ է, որ քանի անգամ ասել եմ, չես առնում, աւելացրեց քահանան:

—Անսա չունի, պարախանեց վարդապետը, միսուն տարին էի մրել, որ առաջին անդամը սամավար փեսայ, էսօր ես ութասուն տարեկան եմ, ուրեմն 31 տարի է՝ մեր երկիրը սամավար է միել. ես այդ ցիմար բանը ըստիրեցի. ինձ համար մի բաժակ տաք կաթն աւելի լաւ է, քան թէ ձեր մխոր տան առարալից իջած կաթիլքաջուրը, որին դուք թէյ անունն էք տալիս:

—Միանգամացն համաձան եմ, ասացի, հայր սուրբ ջան, մեզ թէյ պէտք չէ, տաք կաթն աւելի լաւ է և առողջարար, մանաւանդ՝ ինձ պէս գիւղական, անարար կաթի կարօտ մարդու համար, որը կրկնակի գին տալով անդամ՝ չի կարողանում քաղաքում լաւ կաթը ձեռք բերել, քաղաքացիների գործածած այդ առողջարար և մնադապու հեղուկի կէսը ջուր է ու զանազան վնասակար խառնությներ: Զառամելութեան տարիներն անցրած՝ մօդ մի դարի վրայ ծիծալով, աաշմոս ու նարեկի սիրահար հայր սուրբի հասակը թող մեզ չըցամառեցնի լնդհանրապէս տիրած, կանխակալ նախապաշարմունքների մէջ, վարդապետի ձիւնափայլ խիոր մազերի արմադներն ամբայած էին, անշուշտ, մի թարմ՝ ուղեղի ծալքերում ժամանակի հետ թեիթե ընթացող, ժամանակակից լուսաւոր գարդափարների տէր էր ծերունին, քաջառողջ ու կացրառ ծերունին.

նրան գիտեածն ինձանից ոչ ուսկաս կը զարմանար մի այսպիսի  
անախըռոնիզմի (ժամանակագրական վրխակ) մասին:

Սյապիսի նպատաւոր կարծիքն առաջին օրը շէք՝ որ ես ու-  
նեցայ մէջու վարդապեպի հետ վերջին գիտակցութիւնս պասը բա-  
րի յառաջ էր՝ մի ուրիշ կիսաւեր վանքում նոյնը մնացել էր նա-  
իւր կորովի ձայնով, իւր կրակու աչքերով, իւր հակացական կաղ-  
մուածքով և մեծ եւանդով։ Տասը դարի յառաջ թերթածն նրա-  
մագիենադարանը նոյն և մի կարգաւորութեամբ փոխուել էր Ա.  
գիւղի վանքը՝ զբքերի քանակը կը ինակի աւելացրած։ սրբագան մո-  
փեաններին կից՝ շարուած էին դարակների վրաց գաւառներից ժո-  
ղոված, բորբոսներից ու մկների ապամներից ազագած, հին հին  
ձեռապիրները, որոնց իւրաքանչիւրի ծալքում զերեղուած էին բա-  
նասէր վարդապեպի քննադարուկան հարուածները։ Ներքին դա-  
րակներում ժամանակակից զբքերի ու պարքերական հանդէսների  
հաւաքածուներն էին դասաւորուած։ Եւ այդ բոլոր մագիստրներն  
ու պարբերական հրատարակութիւնները, վաղի գերտէրի նման,  
կուլ էր տուել հայր սուրբը։

— Էաւ, որ ծերացել ես, հայր սուրբ, կարակարսնեցի ես,  
ապա թէ ոչ, վիստական զբքերի համեմունքներից ոշջախոնութեան  
վարժ ճաշակոյ կը փառնար և գայթակշութիւն յառաջ կը դարւ

— Սիսալ ես, սիրելի բարեկամ, պատասխանեց վարդապեպը,  
ակնարկածդ համեմունքը բնութեան գնդեսի նուրբ ճաշակի ար-  
դիւնքն են, իսկ այդ ամենազէպ գնդեսը՝ բնութեան արարիչը՝  
ինքն է սիրոյ համեմունքի անսպառ աղբերը։ Սարուած սէր է,  
ասում է առաքեալը, իսկ էր չունեցողը ոչինչ է, սէրն է, որ մէ-  
կին առաջնորդել է մարդկութեան յարագեւութեան ուշիով,  
միւսին հայրենասէր ու կրօնասէր է արել, երրորդին սիրոյ զոհ է  
արել ավան արքացութեան Ապոււծոյ և ալլն։

— Երբորդների ներքոյ ուրեմն թագնուած էք և դուք, այն-  
պէս շէ։

— Ես միայն պատահական անարժաններիցն եմ, համեսպութիւն  
արեց վարդապեպն և անձնագովութիւնից խոյս պալու նպագակաւ՝  
հարցը փոխեց։

Եսոր ու շար խօսեցինք այդ երեկոյ վարդապեպի հետ, պէր-

պէրենց լրանից եկած շաայլ ընթրիքից անցանք օգնականի գործին:

— Եսու իզուր է նեղութիւն քաշել պարօն օգնականը, շեշպեցին միտուին պէրգէրն ու հայր սուրբը, Յունոն հինգ օր է, դանիր չի:

— Ես շար լաւ զիտեմ, որ դանին է, պերգեցի ես, նադոն ինձ տաց, որ Յունոն դանին է և ընկերների հետ իր խորերն է հնձում:

— Ի՞նչ նադօ, հարցրեց քահանան:

— Զեր զիւղացի նադօն, Յունոցի քեռու պշան, որ նոր բայտա զիդից սկսուծ՝ երեք օր հետո ուղեկից էր:

— Ո՞վ, նադօն, մպաց պէրգէրը խորհրդաւոր ակնարկ ձգելով վարդապետի երեսին, եթէ; զիւղն իմն է, եթէ 40 դարի է իմ ժողովրդին բոլորին ևս եմ մլրպել ու շափաքերականում գրել, քեզ կարող եմ հաւաքացնել, որ իմ ցուցակի մէջ նադօ անուն չի մկնել:

— Վո խօսքով, ուրեմն, ես սնւկ եմ ասում, կամ արբան եմ եղել, վշպացայ ես, որ իմ երեք օրուայ ուղեկցի անունը մոռացել եմ:

— Մեջ Ասրուծոյ, պարոն, մի՛ նեղանալ, հրամանքու չէ՞ բայց մեծութիւնիդ հանապահնի ընկերը կարող էր Վարթօ, Դաւո, Նաւո, Մարտ լինիլ և քո առաջին նադօ ձեւանար:

— Դրա դէմ խօսք չունիմ, բայց ի՞նչ կարիք ուներ մարդը միանձանօթի մօս անունը վիտինելու:

— Մարդ չե՞նք, օրհնուած, մարդիս միաքն անփակ ծովէ: Ենպէս չի, հայր սուրբ, չէր կարող մի Սհօ, մի Աւօ անունը փոխել, նադօ դառնալ:

— Ացպէս էլ եղել է, բազէն սնւկեկութիւն է ունեցել դարանած թակարթի համար և հեգեւելով որսորդին ուրիշ անուան դակ՝ հեգը ծածկել է, բայց սնւկը չի իմացել, թէ աքաղաղի պոչներեւում է փէշի դակից:

— Թրամիկ թրուխիկ, հրացանների ճարճագումներ աղմկեցին շրջակացքը, աղմուկ զոսում—զոչում արձագանք էին դալիս ձորի ժայռերին և դիսում մեր ականջին: Հետզհետէ ձայները պարզ ոււմ են, կանանց ու երեխանների ճչոց ու ծլրպոց, լաց ու վայնասուն, անեծք ու հայհոյանք իրար խառնուած պարզ մթնորդին մէջ՝ որոշակի լաւում էին ոչ հեռուից:

— Եսարեղ հն դալիս, հայր սուրբ, նկարեց և յայտնեց քահանան ու առելացըց:

— Դրանց մի հարցնող լինի, թէ, վարդապետն իր հսմար շաբը տեղ ունի, որ դուք էլ՝ ձեր պները թողած հաւաքւում էք զլիին:

— Ե՞նչ անեն խշճուկ մոլորուածները, կարծել են, թէ զիւղն աւեր են փալիս, թողել են փախել մեզ մօպ. վանքերը նոր հօ չեն նեղեալների ու հալածեալների ապատրանարան, կարեկցեց վարդապետը, մեր վանքերից շատերն այդ իսկ նպատակով էլ շինուել են, վանքերի ամուր, եօթը դակ պարիսպները գաւառներ են սպաշտապանները, իրանց ներսի կողմը, հապա էլ ի՞նչ է մեր վարդապետներիս նշանակութիւնը, եթէ ժողովրդի նեղութեան օրերում նրանց կարիքին չըհասնենք:

— Բայց չէ որ այսօր էդ կորիքը չի զդացւում, ընդդիմաբանեց քահանաւան, վարչութիւն է, իր աշխարհն անհանգիստ անողի եփեիցն է ընկել, ուզում է բռնել, խաղալ գիւղացիք ընչի պիտի գները ձգեն, իրանց դռները կրնիի վրայ բաց թողան ու յոյսները մի աւերակ անդուռն ու անպատճէշ վանքի, մի ծերունի խելճ վարդապետի վրայ դնենք ևս բոլորը Դրժոյենց Հոռոմի արարքներն են, անպիտան պատահի ձայնը պարզ լսում է, երևի օգնականը շրջապատած է եղել իրանց թաղը ու նա էլ իրաւունք է խնդրել օգնականից, դասնից աւել գերդաստան եփել զցել ու բերում վանքը:

— Հայր սուրբ ջան, կարգիթ մեռնիմ, օգնիր, զիւղն արիւնը դարաւ, ծիչ արձակելով չոքեց իւր հետ եղողներով մի պառաւ, վայ զլիսիս, մեր թաղը մոխիր կփրուեց, մի մորիկ տուէք, ձեր ոպներին դորբան, անփեղ մնացիսք:

Պառաւ Հոռոմն ամենից շուպ էր նկապել, երկինքն ամբողջ շառագունել էր, կրակի բոցերն ու ամպամած ծուխն իրար տեղի պալով, կամ միմեանցից առաջկրուկ անելով չքանում են օդի մէջ:

— Անպատճառ դանն է եղել Յունոն, չի ուզեցել անձնագուր լինել և օգնականը դուռնը կրակ է դուել, ինթադրեց տէրտիրը:

— Հայր սուրբ ջան, ի՞նչ պիտի լինի մեր ճարը, հարիւր խմակերներ հիմի խորովածի պէս ճութճութում են կրակի մէջ, էս ի՞նչ ցասում էր, տէր Աստուած, կուրանամ ու խաւարիմ ես, մնց չկարողացայ ճարը կտրած աղջկանս ու թոռներիս էլ վերցնել:

— Ոչինչ, ոչինչ, Հոռոմ՝ մայրիկ, վեր կաց, Աստուած ողորմած  
է, Աստուած անդէրների գուշն ու օդնականնէ, մասիթարում էր վար-  
դապետը:

— Միայն Յունոյի դունն է, հասկացաւ տէրբէրը, գիւղին մնաս  
չի դիպել, միիկ դուէք, կրակը նսպում է, երեղում է Յունոն չի  
ուզեցել բնից դուրս գալ, կրակել են դունը:

Վարդապետը հրամացեց իւր ծառալին դանել պեղաւորել զիւ-  
շից եկողներին:

Վերջապէս քիշ քիշ հրացանների ձայները դադարեցին, հրդեհն  
սկսեց նուազիլ, աշմակը հանդարբեց:

Մինչ վարդապետի հրամանով նրա ծառան պարրասպում էր  
դնալ լուր բերելու, ինքն օդնականն երեք չորս ձիաւորով եկաւ և  
վանքի բակումն իջաւ:

— Հմ՛, շրապեցի հարց դալ ես:

— Ե՞ն, զուր ջանք և անօգուտ վաստակ, անիծածը հողեղին  
չի, սաբանաց է, աւազի հատրիկի նման չքացաւ աչքներիցս, զուր  
գեղը խեղճ զիւղացիներին անհանգիստ արինք. ցիմար ու անհաս-  
կացող մարդիկ են, որքան հաւաքացը, թէ ձեզ մնաս չի շիպչիլ,  
չեղաւ, մանաւանդ կանացքն ու երեխացքը՝ պնւրը թողին, դաշտի  
երեսն ընկան:

— Տները կրակեցիր:

— Միայն Յունոյի դունն էի ուզում կրակել, որ մեզանից լիե-  
լոք դուրս եկաւ, խոսքայաւ անձնադուր լինելու:

— Աւքն զիւղին ոչինչ մնաս չեղաւ:

— Միթէ ես թոյլ կը դացի:

— Պատմիր գեսնենք:

— Ժամանակ չես դամ քիշ հանգստանամ. պարասխանեց օդ-  
նականը, գնացի տէրդէրի դունը, կարծեցի հեշտացեռը պարրասը  
կունենաս, որ մի բաժակ թէյովլ չորացած կոկորդս փափկացնեմ.  
ասացին՝ որ վանքն ես եկել. ես էլ ամենեին չիջայ, ուղղակի քշե-  
ցի այս կողմը: Աստուած օդնականն, հայր սուրբ, հիւր չէք կամե-  
նում. դարձաւ օդնականը վարդապետին և առանց նրա հաճութիւնն  
առնելու միաւ խուցը:

Հ.

— Կնչպէս երևում է, Յունօյին նախազգուշացրած են եղելք մի բաժակ տաք կաթը խմելուց յերոյ՝ սկսաւ իւր պատմաւթիւնն օգնականը։ Երջապարում եմ տունը, կարծելով՝ թէ ինքն էլ, իւր ընդանիքն էլ ներսն են. մշտ ուրախ էի ոչ աշնքան իրան ձերբակալելու, որքան նրա, հուրի մալաք, գեղցկուհի կնոջը տիսնելու համար, ասում են, որ շատ սիրուն է։

— Յունօ, իմ հրամանով՝ փակուած դրան առաջից ձայն է տալիս գիւղական տանուրէրը, աղայ օգնականը հրամայում է՝ Դուրագաս, իր ոսքերն ընկնիս, թէ չէ տունդ զլիսիդ կը քանդի։

— Զեղ զուրբան, գնացէք, հեռացէք, լուռում է ներսից մի բարակ կանացի ձայն, որից մեռնիմ, կնքաւոր, կը բաշխես՝ որ սանամէրդ իր պատպանձուելու լեզուն առջևդ պարզում է<sup>1</sup>, Բնչ անեմն նեղն եմ ընկել, էն կանաչ մեռոնը կը սիրես, որ իմ տունն ես բերել, աղաչանք արա օգնական աղացին, որ մեզ հանգիստ թողնի, Յունօն հինգ օր է տուն չի եկել, ես հմ ու քո սաներդ։

— Դու հիլ ես, աչ կին, ձայն եմ գալիս ես։

— Սանամէրս է, աղայ, Յունօյի ընդանին, պատասխանում է ինձ գանուրէրը, ծառադ Յունօյի կնքաւորն եմ; թաղն էլ ես եմ րոնել, երեխէքն էլ ես եմ զրկել։

— Դու Գիւլծն ես, ու շք ըլդարձրած պանուրէրի մանրամասն քացարութեանը՝ հարցնում եմ ինքս Յունօյի կնոջը։

— Հրամանք, աղայ, Յունօյի ընդանին եմ։

— Մարդիդ ասա, թէ քեզ սիրում է, թող Դուռը բաց անի, Դուրս դաչ, իր յօժար կամքովը բոնուի, թէ չէ հերս հարիւր ձիւոր ունիմ, կը հրամայեմ՝ երթիկից ու բանալու ծակից քեզ էլ երեխէքանցդ էլ դնդակահար կանեն, սպառնում եմ ես։

— Զեղ ասում եմ, որ Յունօն էսպել չէ, լուռում է ներսից նոյն կանացի նուազ ձայնը։

— Ընչի՞ սուր կասես, կնիկ, գոչում է յանկարծ ներսից Յու-

<sup>1</sup> Հայկական հին սովորութեամբ՝ սանամալը ոչ միայն իրաւունք չունի իւր կնքահօր հետ խօսելու, կնքահօր շուաքն անդամ դեմքնելը մասհացու լանցանք է։

նոն, հասկա կողքիդ ես շմմ կանդնած։ Մէկ չէ, ես չըշուրս դամ՝  
իմ գիւլլէն (գնդակը) դուրս գայ։

—Եւ թնչ էք կարծում, հայր սուրբ, զարմացած ոլարմում  
էր օդնականը, Դրան սովորակից (բանալու տեղը) Փրաքեց առաջին  
հրացանը և գնդակը վայր ընկաւ ճիշպ ուրբիս մօփ։

—Աղայ, ձայն դուեց ներսից Յունոն, խելք ունիս՝ փորձանքդ  
քաշիր, հեռացիր, հօ պեսար, ուզէի՝ կսպանէի, բայց կնոջ ու երես-  
իրէքանց աէր ես, խեղճ եկաչ, գիւլլէս որքիդ առաջին՝ գեգնումը  
թալեցի։ Թէ չես հաւարում; ահա երկրորդ գիւլլէս էլ ձիուդ  
ականջը կը ծակի, պինդ նարի թամբի մէջ, աղայ, եկաւ. հա՛ Անի-  
ծածը սուր չէր ասում, ձիս երկու որքի վրայ ծուլ ծուլ եղաւ,  
քիչ մնաց՝ ինձ վայր էր գցում։ Իրբ խեղճ անասոնն զգաց տժժան  
գնդակի հարուածն իր փոքրիկ ականջին։

—Արձակեցք հրացաններդ, կարգադրեցի ես։  
Զիաւորներիս գնդակները կարկափի պէս դիպչում են Յունոյի  
փակ Դրանը։

—Սոլնակի ծակին աչքեցէք, հրաման դուի։  
—Ամայ գլխիս, գիւլլէն երեխիս Դիպաւ, ճիչ արձակեց ներսից  
Յունոյի կինը։

Կնոջ աշէխարշ լայը, մանուկների ճչոց գռողոցը սիրաս ցա-  
ւեցրին, բայց ես ափամներս սեղմեցի և գոչեցի։

—Անիրաւ Յունո՛, չես խնայում կնոջդ ու երեխաններիդ, ըն-  
չու չես անձնարուր լինում։

—Երկու երեխաց են, աղայ օգնական, սպագասխան դուեց  
աւաղակը ներսից, քո ցաւը գանինին, իմ հոգսը՝ կնիկս է, խնդրում  
եմ, երբ ինձ ճանգելուց յետոյ՝ սրան էլ կը բռնես՝ գար քո կունը,  
Խանումիդ առաջին ղարաւաշ (աղիսաին) պահիր, ու էնպէս արա,  
որ նամուաը պեղը մնայ։

—Եթէ այդպէս է, ասում եմ, դուրս արի։  
—Էնպէս խօսք ես ասում, աղայ օդնական, սկսեց ծալրել ինձ  
ներսից ձեր Յունոն, որ խաշած հաւի ծիծալը կը դայ. հէր օրհնած,  
ես, որ ուզենամ դուրս դալ, դու ուրախ չըպիտի լինիս. ախար,  
նեղութիւն ես քաշիլ, եկել ես, հրամացի էդ կորիճ ձիաւորներիդ  
դունս քանդեն, ներս մդնեն, իրանց ձեռովը կոներս քամակիցս կա-

պեն, բերեն առաջիդ բերանքս իվեր շպրտեն, դու էլ կաց ու փառաւորուիր: Զէ, աղայ օգնական, խելօքութիւն չիս անում, հսօր որ ինձ բռնես, էզուց քո քաջութիւնիդ համար պաշտօնդ կը բարձրացնեն: Հանաքն էն կողմը, օգնական, շարունակեց Յունոն, գիլի աւերաբաներդ ականջս չեն մդնում, 100 ձիաւոր չէ, որ 1000 էլ ունենաս, ես քեզանից երկիւղ չունիմ: Քեզ կրրական ասում եմ, որ մինչև ինձ կինդանի, կամ մեւած՝ իմ տանից ուժով դուրս չըհանես, ես իմ դուռը յօժարութիւնով առաջիդ բաց անողը չեմ, զուր ոչ խօսքդ խարջիր, ոչ պատիւդ կորցրու:

—Բարձրացէք կտուրը, հրամացեցի ես և երթկից՝ հասած ծիրանների նման գնդակներ շաղ տուէք դրա քունջ ու պուճախը, մի՛ խնայէք ոչ իրան, ոչ ընդանիքին: Եոլորովին զօւր. մթութեան մէջը իմ ձիաւորներիս գնդակները փշանում էին, իսկ Յունոն հէնց իմանա՞ կապու լինէր, որ գիշերը գիսնում է: — գնաց շազախիդ ձին, զոչում էր առաջ, և հրացանն արձակում ու ձի սպանում: — կորրուեց կողքիդ կանգնողի որբը, ձայն տուեց նա ու խօսքը չըվերջացրած՝ խեղճ ձիաւորներիցս մէկի ծնկան խուփը փշրեց, — ժուաւ աջակողմիդ չափարի մօջալ փափախը (ոչխարինի գլխարկ) գոռաց նա՝ և զնդակիը ծակից որոշած մարդի գլխարկն ու անցաւ:

—Վերջին անգամը քեզ հասկացնում ու մեղքս ինձանից թափ եմ տալիս, օգնական, ու քո վիզդ եմ փաթաթում, զոսաց Յունոն, խեղճ արի քո մարդկանցը, ասա թուանքները տեղը դնեն, թնչ են արել ողորմելիքը, ընչի՞ ես մարդկանց արիւնի տակը մրնում, մայր կունենան, քոյր, կին ու երեխէք կունենան, ամէնքը քեզ կանիծեն, որ պարար իրանց սիրեկանին կեանքից զրկեցիր: Աշաշանքս առ, օգնական աղայ, քաշուիր, հեռացիր, ինձ էլ խեղճ արի, հերիք է՝ ինչքան արիւն եմ թափել:

—Եթէ էդպէս է, ասում եմ, դուրս արի, անձնայուր եղիր:

—Խօսքս խօսք է, աղայ, անողը չեմ, ինչ կարու ես՝ մի՛ խնացիլ, ասաց Յունոն ու լոեց:

—Տղմյք, հրամացեցի ես, շուպով քանդեցէք հարևանների կորներում դէզ դրած խորերը, շարեցէք էս անիծածի տան շուրջը, նաւթ շաղ տուէք վրան և կրակ տուէք, թող ինքն էլ, իր սիրուն էինն էլ, իր երեխէքն էլ մոխիր դառնան ու աշխարհքը հանգապանաց:

Նորից Յունոցի կնոջ ու երեխաների ճշոցն ու ծլլորոցն երկինքը բարձրացաւ:

—Դուրս գնա, Յունո ջան, թէ երեխաներիդ արևը կը սիրեա, լուսում էր ներսից կնոջ աղաչանքը:

—Անկարելի է, պատասխանում էր Յունոն:

—Եթէ անմեղ գառնուկներիդ չես խզում, իմ սիրու համար դուրս գնա, զլուխոդ զնդանը կոխիր, կրկնում էր կինը:

—Որդեղ ես՝ Էսքեղ էլ դու, Գիւլօ ջան, Էսքեղ էլ իմ սիրուն ձագուկներս, թող էս գունը մեր գերեզմանը դառնայ, դու չեղած ես ընչի ապրեմ, ես չեղած՝ երեխէքիս ով տերութիւն անի. մեր արիւնը օգնականին եմ բաշխել, ասաց Յունոն:

—Քարասիրու գաղան, գոռացի ես դրսից, այսուհետեւ ես անպարս՝ դու պարտական, գունդ կրակ եմ դրալիս Տղայք, հրաման արձակեցի ես, վառեցէք:

Նոր էին սկսել մեր մարդիկը մի երկու տեղից կրակ դուել հեռու թափած խոգերը, որոնք ես դիրմամք դարսել էի դուել,

որ Յունոն ներսից ձայն գուեց.

—Խօսքս յիւր եմ առնում, օգնական աղայ, իմ մելքն էն մարդի վիզը, որ առաջին անգամն ինձ արենալարս դառաւ:

—Աւրեմն, նախ՝ դուրս թափիր սողնակի ծակից բոլոր գէնքերդ, ձայն գուելի ես, յետոյ՝ դուադ բաց արա՛, առանց զէնքի անձնագուուր եղիր:

Ասածս կարարեց Յունոն. միմեանց եպսից՝ չորս ապրձանակ և երկու հրացան սողնակի ծակովը նա դուրս շպրուեց:

—Տղայք, հրաման գուելի իմ մարդկանցը, շուրջ բոլորեցէք, բռլորապոյզը նեղացրէք ու եթէ գումնիք, որ միսք ունի փախչելու, իսկոյն բռնեցէք, կամ հարիւր գնդակ միանգամից վրան շաղ գուեցէք:

Սրդարեւ, դուռը բացուեցև դուրս եկաւ Յունոն գլուխը կախ՝ ու մօպ եկաւ ինձ:

—Հինդ քայլ հազիւ էր մնացել, յանկարծ ծոցից՝ թէ որդեղից՝ մի ընկօլիմեր երեւաց ձեռքին. մէկ, երկեւ, երեք, արմաք, սրմք, տրմք, տրմք՝ և ոչ միայն ես, բոլոր իմ ձիաւորներս շիոթուեցան, թեներով աչքները բռնեցին, ինչպէս մի վախկուր երեխաց, որ ընկերի ապրակին իրան չը դիսէլու համար՝ անձնապաշտպանութեան այդ

միջոցն է գործ դնում հետ ու յեր քաշուեցին իմ ձիաւորներն ու էն սափանին ճանապարհ փութն . սարանաց չեր՝ հասպա ինչ էր, երի ակայսցեք՝ մի վոքրիկ վիերուր՝ սասպիկ քամու առաջն լնկած: Ել հեպքը կերեամց: թէ ինչպէս արագութեամբ կարարեց Յունոն այս գործը, խօսք չեմ զբնում պատմելու: Այսքանը միացն լսեցի.

— Օգնական աղաց, որդեղ քոնը պատմես, իմ էլ հետին ասա:

— Այս անգամ էլ ձեռքիցս ազարուեցիր, Ճարահարեալ դոչեցի երեխց, բայց եթէ այնպէս չանեմ; որ չոքէ չոք գոս, որոքերս ընկնես, իմ անունս թող զաւառի տիրոջ օգնական չըլինի. կոոչդ ու երեխաներիդ բանութումը կը վթացնեմ. այն ժամանակն՝ եթէ մարդ ես, արի, սիրուն Գիւլօյիդ կորցրած նամուսը տեղը բեր:

— Կամաց, գոգդ լայն պահիր, աղաց օգնական, Ճալրեց ինձ անիրաւն ու կաթիլ ջուր դառաւ, խառնուեց Սևանաց ծովի հետ: Հիմի թէ մարդ ես, գնա դորիր, վիզը ծռած՝ խոսքովանեց իւր պարգութիւնն օգնականն և աւելացրեց:

— Ի՞նչ էք կարծում, հայր սուրբ, աղեցինք, մաղեցինք, քունչ ու պուճախ քը քրիցինք, տանը տեղ չը թողինք՝ հարիւր անգամ գոակն ու վրայ արինք, մկան ծակերն էլ բրեցինք ու փորեցինք՝ չըկան, չըկան ոչ ինքը, ոչ կինը և ոչ երեխայքը: Էլ չը գիտեմ՝ միշտ պակին էր թագցրել նրանց, թէ գերինն էր ճշել, մէջը պահել:

Շար որ հոգեհան եղանք, գոանջուեցինք ու ձեռնունայն մնացինք, հրաման գուի իմ մարդկանցը, որ դանուուիէրի հետ ողջ գիւղը խուզարկեն, գոնե ընդանիքին բռնէինք մի քանի օրով: Ինքս էլ լսելով դարցաւ ինձ օգնականը, որ դու թողել ես գէրտէրի դունն ու վանքն եկել չը զնացի քահանուցի սենեակը, ուշլակի քշեցի այս գիւղ, Ասրծով՝ քիչ ժամանակից լուր կունենանք, որ կինն ու երեխայքը ձեռք են ընկել:

— Յունօյի կողմից՝ ձեռքերդ միանգամայն լուացէք, պարսն օգնականն, մէջ մուաւ քահանան, թռչունը վանդակից թուիլ է, էլ չի բռնուիլ, իսկ կնոջն ու երեխաներին բռնելու համար՝ զուր ես խեղճ գիւղացիներին անհանդիսաւ անել դուել, մի շաբաթից աւելի է, որ Յունօյի կինն ու երեխաները նոր-հայազիդ հիւր են գնացել իրենց, չըդիպեմ, ի՞նչ ազգականի դունը:

— Ի՞նչ ես ասում, գիշ հայր, եթէ իմ ականջներս խռով լինեին,  
հարիւրից շաղ մարդ կար այնպել, բոլորը կը վկացն, որ Յունոցի  
կինն ու երեխացքը տանն էին, ես պատմեցի, որ ինքս եմ դրսից  
հետը խօսել, պատմասխան առել, աշխարհն է լսել կնոջ ու երե-  
խաների լաց ու շիւանը:

— Ե՛ւ ձեր ականջներն են սուր եղել, պարոն օդնական և՛ ձեր  
հետ եղողներինը, բայց թէ դուք, թէ ձեր մարդիկը՝ բոլորդ էլ  
սխալուած էք. ձեզ յեռ ներելի է, անծանօթ մարդիկ էիք, բանն  
էն է, որ մեր անասուն դանուակըն էլ մոլորուել է. այնուիշ կին,  
երեխէլք, Յունո, բոլորը մի գլուխ էին, միայն մի մարդ էր ձեզ  
հետ խօսողը, Յունոն ինքն էր Գիւլօ դառնում; աղաջանք անում,  
նա էր երեխացի պէս լալիս, նա էր ձեր հետ պայմաններ անում:

— Միթէ:

— Այո, պարոն օդնական, ես ես վկացում եմ, որ գիշ հայրն  
ռւղիղ է ասում; միջամտեց վարդապետը:

— Այ տէրտէր, էդագիս բան չի կարող լինիլ, դարձեալ թերա-  
հաւափորէն երկմոռում էր օդնականը:

— Կարգնվս եմ երդւում, աղայ, Յունոն էդ շնորհքի տէրն է, հա-  
րիւր մարդ հերթ խօսի, հարիւրին իրանց ձենովը պատմասխան կը տայ:

— Ուրեմն ինչ անենք, ուսերը վեր քաշեց օդնականը:

— Էն արէք, աղայ, որ խեղճ արի իմ ժողովրդին, էս րոպէին  
հետիդ ձիաւորներից մէկին ուղարկիր ու հրամացիր, որ իմ ժողո-  
վը դիս ուները չըմրնեն, հանդիսար թողնեն:

Փահանացին ձայնակցեցինք ներկայ եղողներս:

Մեր խնդրանօք՝ Ա. գիւղն ազագուեց խուզարկութիւնից:

Օգնուկանը մի թեթև լնթրիք արեց վարդապետի մօպ ու  
նոյն գիշերը վերադարձաւ իւր պաշտօնաբեղին:

Թ.

Արդէն տսուած է, որ ինձ վիճակուած էր Գեղարքունի գա-  
ւառի այցելութիւնս վերջացնելից յեպոյ՝ շրջան կապարել Արևելաց  
աշխարհում:

Այդ ճանապարհորդութիւնը, արդէն ասել եմ, որ անելու էի  
Վայոց ձորով: Խակ Վայոց ձորը մուտք գործելու էի ես Վերին Ղա-  
քանալուխ զիւշով:

Ես մի մեծ շեղումն արի: Մենք զիտենք, որ Բասարգէչար զիւլը, որ նոյն է նախկին Վասակաշէն աւանը, Նոր-Բայազիդի գաւառի վերջին հայաբնակ գիւղն է:

Աւարդել եմ այնպեղ գործս և լուսադէմին դուրս եկել ծառացիս հետ թեքուել դէպի արևմուտք, վերադառնում ենք մեր եկած ճանապարհով դէպի Ղարանլուխ գիւղը:

—Այս զիշեր մնալու ենք Ա. գիւղի վանքումն, ասացի ծառացիս, վարդապետին խօսք եմ տուել, որ վերադարձին մի զիշեր իւր մօս մնամ:

—Վանքումը քնի լու տեղ էլ չըկայ, ծառաս պարասիսնեց տհաճութեամբ, տէրպէրի տունն աւելի լաւ է, խոր ու դարման շատ ունի, ես իմ ձիու...

—Բարձվ, աղայ ջան, հնդ ես, զլիսիդ զուրբան, հնչեց եփեից ականջիս տակ մի ծանօթ ձայն:

Սիրաս թունդ ելաւ, մազերս քսրմնեցին, ծառայիս խօսքը նմանապէս շրթունքների մէջ առողից, երբ իսկոյն մեր տուաջն անցաւ ողջոյն տուողը և զբակը հանեց, պատկառանքով երկրպագեց ինձ:

—Օ՛հ, բարե նադօ, այս մրգեղից, երկիւղս զսողիլով՝ հարց դուի նախկին ուղեկցիս:

—Դիմացի սարիցն եմ զալիս, աղայ ջան, մեր տաւարի մի մասն էլ էս կողմերումն է, գնացել էի տեսնելու, պարասիսնեց լրջութեամբ բարեկամու:

—Ուրեմն լաւ եղաւ, մինչեւ ձեր զիւղը միասին ճանապարհորդ ենք:

—Բացի, աղայ ջան, ինչքան միգքս է, հրամանքդ անցեալ օրն ասացիր, թէ գնալու ես Տաթե, միգքդ փոխեցի՞ր՝ ինչ է:

—Դարձեալ գնալու եմ. էս զիշեր ձեր վանքումը վարդասի դիմակին հիւր կը մնամ ու էգուց վերին Ղարանլուխ զիւղից կանցնեմ Դարալազեազ:

—Մէկ էլ ընչի ճանապարհդ երկարացնես. թէ կը կամենաս էսօր մինչեւ իրիկնապահ ես հրամանոցդ կը հանեմ Դարալազեազի վերջին գիւղը, որտեղից մինչեւ Զանգեազուրի հողը մի զիւլի մանգգիլ է (բարածութիւն):

—Իսկ վերին Ղարանլուխ զիւղնի:

— Վարանլուխից մինչեւ իմ ասած տեղն երեք չորս օրուն՝  
դժուար հասնես, վճռաբար ասաց նադօն:

— Բայց ինչպիսի ճանապարհ է, նադօ, երկիւղալի՛ չե՞ք  
ասած կողմերով գնալը:

— Երկիւղն ի՞նչ է, աղայ ջան, ոսկին գեփուրի (վախճեաց բո՞-  
լորշի սկուպղ) մէջ լցրու, գլխիդ դիր, արձակ համարձակ ճանա-  
պարհութ բռնի, գնա, ոչով ասող չի լինիլ, թէ աշքիդ վերևն յօնք  
կայ:

— Հանգիստ ճանապարհ է:

— Թէ որ մի երկու ժամ՝ քարքարութներին չեսկարող դիմանալ,  
աղայ ջան, լաւն էն է՝ մզքումդ դրած ճանապարհը բռնես, գնաստ  
Ասենք՝ ողջ Վարալաղեազի գաւառն էլ շափ քո հաւանած ճանա-  
պարհներ չունի, բայց, ինչքան լինի՝ իմ ասած տեղերից հանգիստ  
է: Մի երկու ձոր ու սարեր կան, ուզես չուզես՝ ձիուցդ պիտի իջ-  
նես, քաշելով գնաս: Մեր Յունօն էլ էն տեղերումը Լայաղ է անում՝  
(բարեհաճում է), ձիուց ցած է գալիս:

— Հինգ ժամ, վեց ժամ, տասը ժամ, հարց տուի ես:

— Ոչ էլ՝ թէ երեք չորս ժամ, աղայ ջան, մի երկու դարիդու-  
դարիվերը չըլնէին, ձորի էս գլխից ձէն տացին, էն գլխից պագաս-  
խան կը սրանային: Դէ, սարի ճանապարհ է ինչ որ սարերին կը  
սաղի, մէկեր հօ՛ չըպիսի անցկենացին:

— Աւրեմն, եթէ քեզ նեղութիւն չի լինիլ, առաջ անցիր,  
ասացի նադօյին և ձիուս զլուխը դէպի արևելք թեքեցի ու ծա-  
ռայիս հետ հետեւցի հաւարարիմ ուղեկցիս:

Ճիշդ դասն և մէկ ժամն էր, երբ նադօն իւր ձիու սանձը ձգեց,  
դարձաւ ինձ ու ասաց.

— Աղայ ջան, էս ոլորանը որ անց կենանք, կը մրնենք մի խոր-  
ձոր, որորեղ ոչ խոր կայ, ոչ ջուր: լաւ չի լինիլ, որ էս վոշակի՛  
(պուրակ) աղբրի ափին իջնենք, ձիանքը թողնենք՝ արածեն, կը շ-  
տահան, մենք էլ մի քիչ ափամներիս տակը բան դնենք, շաղաց-  
ներս գործի քցենք, հանգարանանք, յեղոյ մզնենք ձորը:

— Իջնելն իջնենք, նադօ՛, ասացի, բայց բնադուն չըկայ, որ  
Ջրաշացներ բանացնենք, քաղցած փորով պիտի զլուխներս դնենք  
քարին, քնենք, որ սրամոքսներիս խարենք, ևս չըգիտէի, թէ մենք

անմարդաբնսակ գեղերով ևնք անցկենալու՝ նախաճաշիկի պատրաստութիւնն չըտեսայ:

—Հրամանոցդ ծառան, աղայ ջան, առանց պարրասպութիւնի գրանիցը չեմ դուրս գալիս, ես էլ որ չուզինամ հետո պաշար վերցնելու, մեր ընդանին ինձանից թաքուն Աստծու փուածից ինձ համար բաժին պիտի հանի:

Եւ նադօն իջաւ ոլորտապոյզու ձորաբերանին, ինձ էլ իջեցրեց ու ձիանոնց սանձերը հանելուց ու կանաչ խորումը կապելուց յետոյ, վերցրեց իւր ձիու թամբից ճանապարհորդական պայուսակն ու եափունջին: Նա եափունջին փոեց բակիս ու խուրջինի կապը չետ բացեց:

Ամէն բան մոռացայ, երբ սպիտակ, լաւաշ հացերի մէջ փաթաթած խաշած հաւերը, խորոված իշխանաձուկը, ոչխարի պատուական սառը խաշլամանն, չում ու կարագը, պանիրն և մի շիշ դինին դարձածու եցին առաջիս:

—Սուփրէն քցած՝ բանն անիծած, ասացի յայտնի առածը և համեցեքի չըսպասած՝ ծուափեցի հաւի փափուկ կուրծքն և հարցը.

—Խուրջինիդ միւս հակումն ի՞նչ ես պահում; Նադօն:

—Ես սարի մարդ եմ, աղայ ջան, շաբաթներով չոլերումն եմ վինում, օրապաս, շաբթապաս է գալիս, հայ—քրիստոնեաց ենք, քալցած հօ չիպիտի մնանք, խուրջինիս մէկէլ կողմումը պասուաց պաշարն է:

—Այ դոլայ, դաշտերում մանեկողի համար պաս ուրիսս մըն է, կեր՝ ինչ որ ձեռքդ է ընկնում, գեսնող չըկայ, նադօյին փորձելու համար՝ զարթնացրի այս խնդիրը:

—Առաջինն, աղայ ջան, մի աչք կայ, որ գետնի բակին էլ թէ թագինանք, մեզ գետնում է, էդ մեր սպեղծողի աչքն է, նրան խաբել չի լինիլ, մարդ խորելուց էլ շահմունք չըկայ, երկրորդը՝ որ ձեր պէս զիտուն աղաներն են պաս ուրիսի նշանակութիւնը հասկանում, սրբներն ուզած ժամանակը՝ նախնեաց զիրքը քանդում են. բայց մենք որ կանք, խեղճ, անհասկաղող հայ—քրիստոնեաց ենք, մեր պապերի զնացած ճանապարհից որ ծոռւնցինք, կը մոլորուենք, դժոխքի բաժին կը լինինք:

—Յունօն պաս ուրիսւմ է, Նադօ, յանկարծ հարց դուի ես:

Նադօն սարսափահար եղաւ անսպասելի հարցիցը, նա մի բոպէ շփոթուեց, բայց շուր ուշքի եկաւ և ասաց.

—Ինչքան ինձ յազմի է, Յունոն իր կեանքումը պասը խախոսած չի, բայց, աղայ ջան, էս ամայի անսպագումը Յունոյի անունը մրցելից միզքդ եկաւ, նրա անունն ընչը յիշեցիր:

—Նրա համար, որ ես զիփեմ՝ որ կան մարդիկ, որոնք մարդ կը սպանեն ու պաս չեն ուտիլ. բանից դուրս է գալիս, որ քո գոված Յունոն էլ նրանցից մինն է, անմեղ մարդկանց հաւի պէս կը մորթի՝ մեղք չի համարիլ, չորեքշարթին քանդելը մահացու մեղք կը կարծի:

—Մէկ՝ աղայ ջան, որ մարդիս սիրաը քննելը մեր բանը չէ, քննողն ինքը սխալների մէջ կը թաղուի, կը մոլորուի, մէկ էլ՝ որ Յունոյի համար ես մի քանի օր յառաջ արզ արի, թէ նա անմեղ արիւն չի թափել. Յունոյին որ հարցնենք՝ ինքն իր Ասպիծու առաջ պարզերես է: Եղ թողնենք, աղայ ջան՝ էծն իր ոսքիցը կախ կը դան, ոչխարն իր ոսքիցը, Յունոյի դարդը մեզ չեն դուել, դու հացդ անուշ արա ու պառկի էս քարափի հովումը, մի քիչ հանգստացիր, դեռ բաւականին ճանապարհ կայ կորելու:

Ես պարտուակուեցի, իբր թէ չեմ հասկանում Նադօնի յանդիմանական նկատողութիւններն և շարունակեցի:

—Աւրեմն և չըվախենայի Յունոյից, եթէ յանկարծ գար ու քո կանդնած տեղը ձեռքը ձգէր սրի դասպակին ու աչքերը չորս կողմը ման ածէր, ինչ որ հիմայ դու ես արել:

—Եդ կը նշանակէր, որ Յունոն իր սիրած մարդի գլխավերելը ղարաւուլութիւն է անում, որ չըլինի, թէ էս երկիւղալի տեղումը, յանկարծ՝ ձորիցն աւազակները դուրս գան ու կամենան մօրենալ բայց, աղայ ջան, հերիք է, սրբիցդ կասկածները հանի ու հացդ վայելի, Յունոյի սայիցը՝ (ի շնորհա Յունոյի)՝ քո հափ մազին խէժ աչքով մորիկ դուռդ չի լինիլ, ամենքը գիրեն, որ ես Յունոյի քեռու դղէն եմ և չեն համարձակուիլ մկաներովը շարութիւն անց կացնել:

—Եթէ այդպէս է, եկէք դու էլ, Միքայէլն էլ (Միքայէլն իմ ծառան էր) նսրեցէք, հաց կերիք, երկուտդ էլ հիմի անպարհառ ձեր սրբումն ինձ հայնոյում և մեղադրում էք, թէ լաւ մարդ, ոք,

քարանիրք, էդ որ դժւ կուշպդ դնում ես (կշրանալ) ու փորդ փողացնում, մրածում էլ ես, թէ մարդիկ կան, որոնց փորերը վեց-վեց են անում: այն, հիմի դուք դադապարտում կը լինիք անպարճառ ինձ:

—Դու անուշ արա, աղայ, մենք յետոյ էլ կուփենք, մենք ի՞նչ կը համարձակինք քո առաջին նստել, կը համբերենք, փորը որ կայ՝ ներքեն է, վերել չի, որ չըհամբերի. դու մեր մեծաւորն ես, դեռ քեզ է վայելում կշրանալ, յետոյ քո որ ու ձեռի (սպասաւորների) բերաններին կողչելու բան կը մնայ:

—Այս բաց երկնքի գակ, մեծաւոր ու փոքրաւոր չըկայ, եկեք, հրամացեցի ես, էդ պատիւը դուք ինձ դուեք բազմութեան մէջ եղած ժամանակ:

—Զէ, գլուխ մեռնիմ, դաշուումը թէ որ մեր չափը կորցնենք, վասր սովորենք, մարդամիջի էլ անքաղաքավարի կը գոնու ինք, ասաց նադօն և հեռացաւ ինձանից:

Ես շաբ էի ցանկանում նադօնի իսկական անձնաւորութիւնը ճանաշել, բայց բասնելով՝ որ ինքը գախտ է պալիս, չուզեցայ չարը գործ դնել նրա անձնուիրութիւնը, վճռեցի այդ մասին այլ ևս խօսք չըբաց անել:

—Աղայ, մօգնեցաւ ինձ ձորը մգնելուս նադօն, չըլինի՛ թէ երկիւղ անես, կամ ուրիշ կարծիքներ գանես. եթէ էս ձորումը կենու ու կունդ մարդիկ կը պատահին, որ ինձ գասնելուս՝ ձեռք-ները կը գանեն գլուխները, զբակներին կամաց կը զարկին, իմացիր; որ նրանք բոլորը մեր մարդիկն են, որ զիշեր ու ցերեկ իրանց համար գործ են շինել, որսերի եփերց հոգ քաշելով ման ին զալի՛ Յաջողութիւն բուողն Աստուած է, մի վեզ՝ որսկանն է զաղանին սպանում, ուրիշ անգամ՝ գազանն է իր որսորդին որս շինում:

—Ի՞նչ ես առակներով խօսում, նադօն, պարզ ասմ, որ էս ձորն աւագականոց է ու վերջացրու: Զըսկիսի գայինք, եթէ եկել ենք՝ պիտի գանինք՝ ինչ որ գալու է. մեր արիւնը քոնից հօաւելի կարմիր չէ, ինչ որ քեզ՝ այն էլ մեզ, մահը թէ այսօր՝ թէ հարիւր բարուց յետոյ:

—Մգքովդ թող վասր վասր բաներ չանցկենան, աղայ ջմնի քեզ մօգենալու համար պիտի իմ լաշի (Դիսկ) վրայովը լոք բաւ

անց կինալ, իսկ քո սացից՝ (ի շնորհս քո) ինձ մօտենալը հեշտ բան չի, ասած է «անասրուած տեղը կաց, անարխայ (առանց հովանաւորի) տեղը մի' կինալ, ողջ կինան իմ հաւատարիմներն ու արդիաննըը, հազամ թէ չէ հաւի. ձագերի պէս գլուխները հազար ծակերից դուրս կը հանեն»:

—Մենք էնպէս կանենք, մինօրինեց նադօն. դու Մուքէլ եղ՝ քօրս հետ կամաց-կամաց կը գաք, ևս ձեզանից մի ձիու մանդպիլ (ասպարէղ) յառաջ կերթամ. աչքներդ վրաս ունեցէք, որդեղ կանդնեցի, յեւս միիկ տուի՝ դուք էլ կանգնեցէք, ու մի գաք՝ մինչև ես ձեզ ձեռքով չանեմ:

—Ի՞նչ արած, ընկել ենք՝ պիտի կրենք, ուսերս վեր քաշելով՝ համաձայնութեան նշան դուի և զնացքս ծանրացրի:

Մենք հասանք մի ժժուարանցանելի զարիվացրի, ուր մեզանից յառաջ հասել էր նադօն: Նա բջել էր ձիուց և սանձը գրաստի պարանոցին ձգած՝ հետեւակ ցածանում էր: Մենք էլ նրան հետեւեցինք:

Զորի խոր անդնդում մի զետակ էր վազում, նադօն կանգնեց ջրի ափին, հրացանն ուսիցը ցած թերեց և սկսեց ձին ջրել:

Յանկարծ՝ քարափի տակից մի սուր ելեէջներով սուլոց ևսուեց:

Նադօն իւր բութ մատի և ցուցամատի ծայրերը օլականման միացրեց, բերանը կոլսեց և նոյն ելեէջներով սուլոցը կրկնեց և դարձաւ մեզ ձեռքով արեց:

Ես հասկացայ պաշմանական սուլոցը, որ անշուշտ նադօնի ընկերների կողմից էր: Սկսեցի յառաջ զնալ:

Այնուհետև՝ ինչպէս ձորումը, նմանապէս և սարի հարաւային արորուումն և լեռնադաշտի անհարթութեան վրայ՝ մեր ճանապարհորդութիւնն անցաւ առանց միջնադէպի:

Վերջապէս հեռւումն երեւեցաւ Վայոց ձորի և Սիւնեաց աշխարհի սահմանագլխի Առշշիբիլակ գիւղը, ուր մենք գիշերելու էինք:

Նադօն կանգնեց և մեզ ձեռքով կանչեց.

—Աղայ ջմն, ցուցամատը մեկնելով դէպի վայր, ասաց նադօն, այ քո էս գիշերուայ կացարանը, Ասրուած բարի ճանապարհ արմայ, առել պակասը կը բաշխես, որ քեզ նեղութիւնն դուի, չըթողի

գնաս սովորական ճանապարհովը, քեզ բերի աւազականոցները քցեցի,  
փառք իմ սրեղծողին՝ մօդոյ սևերես չըմնացի:

Մինչ բերանս կը բանացի պատրասխան պալու, Նադօն արդէն  
լեռան լանջը բարձրացել էր: Ուշիլ դաստիած՝ ի՞նքս մնացի Նադօյի  
մօդ ամօթով, դարարկ խօսքով շնորհակալութիւն, գոնէ, միջոց չու-  
նեցայ անելու:

(Եարուհակելի)

## ԸՆԿԵՐԻՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Ակ ամպերին ամող մ' էլ հասաւ,  
Ուռիները լուռ կուլան.  
Ախ, դարդերիս դարդ մ' էլ հասաւ,—  
Ո՞ւր ես, ազիզ ընկեր ջան:

Արեն ընկաւ ծովի խորքը,  
Աւ, մուժ շուքը ծովն առաւ.  
Ախ, ընկեր ջան, ծաղիկ թոռմար,  
Քու սև սուզը սիրոս առաւ...

Գերեզմանդ հողին հաւսար,  
Կորար, չկմս, հոգի ջան,  
Հիմա քամին վրէդ կուլայ,  
Չես իմանում, ընկեր ջան...

1898 թ. Օդեսա.

## ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԶԱՆԳԸ

Ակինչեաբ ի ՍԱՀԱԿԵԱՆԻ

Եւ իս ապարում, և անապարում  
Հոգիս ծանրացած լուռ թափառում եմ,  
Եւ ես զգում եմ, ահա տեսնում եմ  
Ողջ տիեզերքը, մի մեծ, անհուն զանդ,  
Եւ հոգիս նրա լեզւակը վսեմ...

Եւ հրաշքներով, վեհ լոռութեան մէջ  
Տիեզերքն անչափ՝ խոր զօշանջում է  
Երդն անհունութեան և յաւէրժութեան.  
Եւ տիեզերքը խոր զօշանջում է,  
Բայց իմ հոգումն է, իմ նոգին է այն,  
Որ զօշանջում է—ես մարդարէ եմ...

Եւ ահա այնորեղ ամբոխն է ծփում՝  
Ծանր ու թանձր ովկիանոսի պէս.  
Եւ դորշ, հարթ է այն—մի հակայ զանգւած:  
Եւ հոգուս խորքից բարբառ եմ լսում—  
Պօշանջը զանդի տիեզերական:  
Եւ դէպի ամբոխն իջնում եմ ահա  
Նոր կրտիներով, նոր պարտամներով.  
Դէպ' նրա հոգին գահավիժում եմ  
Նրան խայթելու, և' քարողելու,  
Եւ արրասւելու, և' այրւելու...

1899 թ. Ալեքսանդր.  
Սեպտեմբեր

# ԱՆՑԱԾ ԳՆԱՑԱԾ ՕՐԵՐԻՑ

ՅՈՎ.Հ. ՏԵՐ-ՄԻՐԱԲԵՍՅԵՒ

## I

### ՀՐԱՋԵԱՆ՝ ԴՈԿՏԱՐ

Հրաչեացի ուսանողական կեանքի վերջին, կիսամետկ Գերմանիացի Խնա քաղաքում արդէն սկսւելու վրայէր, բայց դոքորական աշխարութիւնը դեռ յեւ էր մնացել շնորհիւ մի չարաբասրիկ հիւանդութեան Քանի մօգինում էին վերջին ամիսները, այնքան աւելի բորբոքում էր նրա սիրուրը նա շափ անգամ զգում էր իրան, կարծես, մի շքեղ հարսանիքի հիւրերից մէկը, որի ոչ արգաքինը և ոչ էլ ներքինը համապատասխան է ուրախ ու զւարթ հարս ու փետացին ու սրանց հմայքով լողորւած հարսանքաւորներին։ Մինչդեռ նա հայրենիքում այնքան անհամբերութեամբ սպասում էր ուսանողական կեանքին, հիմայ երբ թաղւած էր այդ ցանկալի կեանքում, նա իրան օգար էր զգում և նորից ու նորից հաշւում անցած ու մնացած օրերը բաւական է, բաւական—շափ անգամ մրածում էր նա, —վերադառնալ պէտք է վերջապէս այդ սպասնալից փրականու կեանքը մոնելու համար։ Նա այս խոհերի ժամանակ լնկնում էր մի տենդացին անհամբեր դրամադրութեան մէջ, որ յափուկ է սպափերազմի դաշտում երկար ժամանակ դրազիկութեամբ ճակարամարգին սպասող զինւորին։

Առաւօպից մինչեւ երեկոյ Հրաչեան կամ համալսարանումն էր կամ զրադարանում, իսկ տանը մինչեւ ու շ զիշեր զերի էր դառնելի թերթիկներին։ Վերջապէս նա պատրասփ էր։ Սլոր նա զրեց իր աշխատասիրութեան վերջին փոլը, ցնծութեամբ վեր ցափկելով հայրենիքն յիշեց, որ մինչեւ վերջին վացրկեանը ոչ էր տալիս նրա զգացմունքներին և լուսաւորում նրա միոքը։ Մեր հայ

ուսանողի թեման էր «Հայութիւնն իբրև կենսունակ պարը մարդկացին ազգի մէջ»: Նա օրարազգի հին ու նոր աղբիւրները քրքրելով ու պրապելով քաղել էր այս խնդրի հետ առնչութիւն ունեցող գնահատելի նիւթերը, աշխատել էր ցոյց պալ, թէ հաւանաբէն ինչ դեր կարող էր խաղալ այդ պարը ապագայում»

\*  
\* \*

Երբ քննիչ ուսուցչապետները կարդացին այս գրւածքը, նրանցից մէկը հարցրեց միւսին.

— Ընկեր, ի՞նչ փառաւորութիւն սփացաք այդ հայ ուսանողի աշխատասիրութիւնից:

— Ես քանի շատ կարդացի, — դիտեց միւսը, — այնքան աւելի մեծ հաճոյք պարձառեց ինձ այդ երիտասարդի ուշադրաւ հետազոտութիւնը: Առ նման չէ մերսնց շափերի քաղւածական աշխատութիւններին. մի թարմ հոսանք քեզ առնում փանում է: Երբ մարդ կանգ չառնելով արայացած մոքերի վրայ՝ անընդհատ յառաջ է լնթանում, կարծես մի բանաստեղծութիւն է կարդում: Իսկ երբ խորասուզում է նա խմասոների մէջ՝ զմալլում է այս հայ ուսանողի լուրջ ու խորազննին խոհերի վրայ: Նա թէև թոյլ, սակայն շահորսակ ձեռքերով քաղիլ է ժամանակակից գիտութեան հիւթալի պրուղները: Հին ու նոր պատմութիւնից, դարսինականութիւնից, ազգագրութիւնից, քաղաքագնակնեսութիւնից, ինչից ասես, որ չէ ձգութել օգուտ քաղել իւր թէզիաներն աւելի ծանրակշիռ հիմունքների վրայ դնելու համար:

— Այս, ես էլ մօրաւորապէս նոյն փակաւորութիւնն սփացաց, — յարեց խօսակիցը: Զգիրես այս հայրենասիրի թափածը մի յուսահարական ճիդ է արդեօք, թէ մի խիզախ ողորում, բայց և այնպէս զնահատելի է: Այնքան համարձակ են նրա մոքերի զուգակշիռները, այնքան արայացած ու կորովալից նրա զգացմունքները:

— Տեսնենք, ես շատ հետաքրքրած եմ այս հայ ուսանողով, որ ինձ միայն երկու կիսամեակ<sup>1</sup> է ունկնդրել: Եւ առհասարակ առաջին անգամն է, որ ես հայ ուսանողի հետ գործ ունիմ:

<sup>1</sup> Գերմանական համալսարաններում դասախոսութիւնները կարդացում են կիսամեակներով (=սեմեոգր):

\*  
\*\*

Եւ Հրաչեան ի. թ քննիչներին ներկայանալու կազմ ու պարագասկ՝ սրբադրով դուրս ելաւ դանից։ Նա հագել էր, ինչպէս այս առթիւ դոքտորացուների մեծամասնութիւնն է անում, «Փրակը», փայտուն ցցիկներն էլ դրած, ի հարկէ առանց մոռանալու սպիտակ ձեռնոցները։

Որովհետեւ այս քաղաքում կառք տած բանը գործածական էր, մեր դոքտորանորը <sup>1</sup> ուսով պէտք է տնէր իւր այցելութիւնները։ Թխադէմ արևելցին իւր սեւ սեւ ու գանգուր մազերով դրաւում էր հանդիպողների ուշադրութիւնը։ Խոկ հարևանի աղջիկներն ասեցին։ Ծեսէք, փեսէք, սեւուկն էլ է հետամուր դոքտորութեան։ Քննութեան նախընթաց օրը այցելութեան պէտք է ենէր յաջորդ օրւան քննիչներին։ Հայ ուսանողը ուսուցչապետներից, այս պարզ մարդկանցից, սիրալիր ընդունելութիւն գտաւ։

— Գլխաւորը, իմ սիրելի, — ասաց նրանցից մէկը, — գրաւոր աշխագութիւնն է. և ձերը, պ. Ուաֆայէլեան, արժանի է ամենայն գնահավութեան իւր լուրջ ու հետաքրքրական բնաւորութեամբ։

— Պարոն ուսուցչապետ, — դիմուց մեր ուսանողը, — մենք, իհարկէ, դիմուց, որ կիսաքաղաքակիրթ ժողովրդի զաւակներ ենք. էն, աշխագում ենք, որքան հնարաւոր է, նմանիլ մեր գերմանացի ընկերներին։ Կայ բան, ուր մեր նախապատրաստութեան պակասութիւնները այնքան աչքի չեն ընկնում, բայց կայ ել ուր շապ զդալի են։

— Ինչպէս երեսում է, պ. Ուաֆայէլեան, — դիմուց միւս ուսուցչապետը, — ձեր զրւածքի ամեն մի վոլլը յուզւած սրբի արդադրութիւն է։ Ես լսեցի ձեր ընկերութեան անդամներից որ այդ ուսումնասիրութեան ամենապաք ժամանակը ծանր հիւանդութեան մէջ էք ընկած եղել։

— Այո՛, իմ պ. ուսուցչապետ, խեղճ հայրենիքիս անհռւն պահնջները մի կողմից, իսկ իմ սահմանափակ գիրական պաշարը միւս

<sup>1</sup> Դոքտորանորը նա է, ով դոքտորութեան քննութիւն է ուալիս, լաջող քննութիւն ուալուց լեռոց նորան չնորհում են «Դոքտոր» (այս ինչ դիմութեան) ուիտլուը։

կողմից ծանր սպարականութիւն էին դնում վրաս ջանք չխնայելու Գիրեք ինչպիսի սպարականութիւններ է դնում՝ մեզ վրայ մեզ Նւրոսա ուղարկող հասարակութիւնը, ինչպիսի սիրելի յոյսերով է նա մեզ ճանապարհ դնում:

— Այս, ես վերջերս մի քանի հայ ունկնդիրներ ունենալով աւելի հետաքրքրւեցի ձեր ազգի անցեալով: Տեսայ, որ նա որոշ կուլուրական ապագայ ունի: Ի սրբէ յաջողութիւն ձեզ և ձեր ազնիւ զգացմունքներով փոգորւած հայրենակիցներին: Ազգերն էլ կարող են անհափի պէս հիւանդագին տագնապների մէջ ընկնել, նրանք կը պոչորեն, բայց դիւրաւ կեանքից չեն զրկւիլ: Հին ազգերի մարմինը կարծես պապւասուած է լինում և նորամոց թոյնը նրան միայն անցողակի ցնցումներ է պարճառում:

\* \* \*

Հայ ուսանողը վերջապէս քննութեան ներկայացաւ: Նա առաջին հարցումներին վեհերուր պապուսխաններ էր տալիս, բայց նրան քանի աւելի էին հարցնում: այնքան ևս առաւել ոգեորւում էր:

— Այս հայը, Դիւրեց քննիչներից մէկը,—կապարեալ կրակ է:

— Այն, նա արժանի է ամենայն խրախուսանաց, — յարեց միւսը:

— Cum laude<sup>1</sup> շշո՞նջ բարձրացաւ քննական սրահի առջևն սպասող ուսանողների, Հրաշեալի, հայ ու օդար ընկերների մէջ: Cum laude, կեցցէ: Դէհ, ուրեմն մի հար էլ դոքանրական դակառ, հրճանքով ասում էին գերմանական ուսանողական ընկերութեան Հրաշեալի անդամակիցները:

Հրաշեան իւր հնգամեայ ուսանողական կեանքում ընկերակիցների շատ դոքանրական դակառների դամարկելուն արդէն մասնակից էր եղել, հետեւարար հիմայ էլ իւր հերթն էր ընկերական կեանքի այս սիրուն զւարճալիքին նոր առիթ ներկայացնելու:

Եւ ահա աշդ նիստի օրը ընկերութեան մէջ արփաքոյ կարգի ոգեորութիւն է տիրում: Ծոլովագեղին մի բուռական ընդարձակ սենեակ էր, որի չորս պատերի վրայ էլ կախուած էին այլ և այլ ընկերութիւնների կիսամեայ խմբանկարներ, առանձին լուսանկար-

<sup>1</sup> Գովասանոք:

ներ, շրջապատւած գոյնզգոյն Դրօշակներով։ Խակ գարեջրի փայլուն պոզերը ծոսկերով ու փնջերով զարդարւած կախ էին արւած տցի բոլորից ներքեւ Խերաքանչիւր պատ իւր այս արդ ու զարդով մի զար ուսանողութեան սեփականութիւնն էր համարւում։ Այդ գոյքի լրացուցիչ մասն էր կազմում փոքրիկ մատենադարանի (մեծ մատով հին ու նոր ընկերակիցների աշխատութիւններից) պահարանը, որի մօսի դրւած ամբիոնն էլ արենախօսին էր սպասում։ Սենեակի մէջ փեղը մի մեծ սեղան էր դրւած, որի վրայ այսօր իբրև ցանկալի հիւր բազմած էր սպառվառելի ու հասրափոր զակառը։ Ուսանողների երեսները խսկոյն գեղածիծաղ արտայացութիւն էին սպանում, երբ այսօր որք էին դնում ժողովադեղին։ Փայլակ ու կայծակ, ահան և Հրաշեան, — հրճւանիքով ձայնում էին նրանք, մի-մի անդամ էլ պահառի փորքը դաւաղանով պնդղելով։

\* \*

«Ճեմարանական» քառորդ ժամ երեկոյեան 8-ից անց՝ նախագահի զանդակը հնչեց։ Գիւսական հերթական ապենաբանութիւնը, որ կատ չունէր նորընծաց դոքասորի քննական աշխատութեան հետ, սկսւեց և թէե օրհնեալ պահառի փորն արդէն ծակւել էր, սակայն ուսանողներն լսոր հնաւանդ ազգացին սովորութեան՝ սկզբում դեռ կումեկում էին խմում։ Երբ արենախօսը վերջացրեց, բուռն ծափահարութեամբ ընդունեց։ Նա առ ջեւը դրած բաժակի վերջին կաթիլները ծձեց ու դեղը զնաց։ Ապա ընկերներից մէկը, որ օրւայ նշանակւած կոր-բեֆերէնու կամ քննադադն էր, իւր տանն արած նկատողութիւնները կարդաց, միւսներն իրանցն աւելցրին, միքիչ դէս ու դէն քաշքշեցին ու այսօր շուտով սուս ու փուս գիւտական մասը փակեցին։ Երկում էր, սր աւելի տրամադրութիւն չկար վիճաբանութիւնը ձգձգելու։ Եսոր գործ ունէին։

Նախ հնչեց՝ իբրև նախերգանք Եrgo bibamus, Յեփոյ նախագահը որքի ենելով մասպէս խօսեց։

—Պարոններ, այսօր ուրախակից լինելով մեր սիրելի ընկերին, Հրաշեայ Արաֆայելեանցին, միւսնոյն ժամանակ նւիրական պարպականութիւն ունինք, նրա Շոքորորական կարգը կարարելուց առաջ, այս մարդուն մկրտելու, որովհելու, ինչպէս բանից դուրս է գա-

լիս, ըստ մեր լրտեսա աղւէսների<sup>1</sup> պեղե՛յութեանց՝ նա Լազպցիգում  
էլ արարողութիւնից խոյս փւած լինելով մինչև հիմայ Հանհաւասու  
է մնացել։ Ու թող միւս անկնունք մնացած աղւէսներն էլ պար-  
րապութիւն փսանեն ու խոսքովանահացրեր ընդունեն։

Այս առաջարկութեան վրայ «աղւէսները» իրանց համար մի մի  
աղւեսապես կամ, ինչպէս իրանք են ասում, Փուքսմայեօր լնորբե-  
ցին, իսկ Հրաշեացին, որ արդէն աւագ ուսանող էր, կարող էր  
միայն նախազահը խոսքովանեցնել։ Ապա բոլոր «անհաւագները»  
աթոռների վրայ ձի-ձի խաղալով դուրս արշաւեցին ու նորից թախկ-  
ու թուխկով իրար հրմշտկելով խուժեցին ներս ներսը մնացած  
աւաղներն էլ աթոռները սեղանի վրայ դրած ծանր ու մեծ բազ-  
մած սորորաքարշ ճորտերին էին սպասում։ Զիաւոր աղւէսները  
առաջընթաց աւագի հետ երեք անգամ սեղանի շուրջը թափոր անելով  
կանգ առան՝ իւրաքանչիւրը իւր խոսքովանահօր առջեւ։

Նախ Հրաշեան՝ իրեկ աւագ՝ քննութեան ենթարկւեց։

— Զի՞ն, ինդրէ մոլորեալ ոչխարս այս, — հարցընց խոսքովա-  
նահայրը։

— Հաւափ, գարեջուր և սէր, պարասխանեց խոսքովանողը։

— Կեցցէ, կեցցէ, բուռն ծափահարութիւնը օդը թնդացրեց։

— Ինչպէս փեսնում եմ, — դիմեց քննիչը, — դու հաւարացեա-  
լին պիտանի բոլոր իմաստութիւնը արդէն ձեռք ես բերել, ուրեմն  
այլ ես արգելք չկայ և դու արժանի ես մկրտութեան։

Այս խօսքի վրայ նա բարձրացրեց ահազին եղիւրը, որ լի էր  
գարեջրով և երեք անգամ վազեցնելով Հրաշեացի գլուխն ի վայր,  
իւրաքանչիւր անգամ ասում էր. եղիցի և եղիցի հաւարարիմ ծա-  
ռայ այս ախտաբոյժ հեղուկին։

— Կեցցէ, այսօրւայ առաջին հաւագեալը, ձայնեցին հան-  
դիսականները և միւսները շարունակեցին մկրտութիւնը։ Երբ այս  
ծէսը աւարգւեց, նորընծաները դարձեալ նախկին եղանակով ար-  
շաւեցին ու հասան իրանց գեղերը։

Թնդաց ՅՈՒՆ, հին բուրշնշախիք երգը։

<sup>1</sup> Ուսանուլական ընկերութեան մէջ նոր մրնուները Գելմանիազում  
Փուքս (աղւէս) են կոչւում, մինչև ընկերութեան խմական անդամ «մկրտ-  
ուիլը»

\* \*

—Պարոններ, ասաց նախագահը, երբ երդը վերջացաւ։ Նիւթերը (գարեջուրները) պատրամափ են, Հրաչեայի կենաց սալամանդր<sup>1</sup> և նոք խմելու։ Այս բառը լսելուն պէս բոլորը կազմ ու պատրաստ պէտք է լինեին։

—Իսկ հիմնյ, կրկնեց նախագահը, —նիւթերը պատրամափ են։

—Պատրաստ են, —միաձայն պատրասիանեցին ամենքը միասին։ Հիմայ Հրաչեայի կենացը։

—Սալամանդր։

Բոլորը մէկէն որպի կանգնեցին ու բաժակների բերանները բաց արին։

—Սալամանդր մէ՛կ, —գոչեց նա։

Սկսեցին բաժակները սեղանին քսմելով պարզոցներ։

—Սալամանդր երկն, կրկնեց նա։

Բաժակները շրթունքներին մօգեցրին։

—Սալամանդր…

Դեռ երեք չասած՝ բոլորը մի ակնթարթում՝ կէս.կէս բաժակ կոնծելուն պէս սկսեցին բաժակները սեղանին մի անդամ զարնելուց յետոյ թխթը սկացնել։

—Երեք, լսեց նախագահի կիրուկ ձայնը, և սալամանդրը վերջացաւ, երբ բոլորը միասին բաժակների լսորակներով մի-մի ուժգին ու կիրուկ հարւած բռին սեղանին ու բեղները նախորեցին։

Հիմայ վեր կացաւ դորպորը ու այսպէս խօսեց։

—Եմ սիրելի եղբայրներ։ թէև զերմանացիներիդ մէջ շաբէլ ընդունած չէ այսպիսի առիթով ճառեր ասելը, բայց թոյլ ուեկը ինձ՝ այս անդամ իբրև արևելցու՝ սովորականից աւելի ձեր համբերութիւնը խնդրելու։ Ի սրբէ շնորհակալութիւն ձեր սիրալիր ընկերակցութեան համար։ Հրաժեշտիս օրերը աւաղ մօգենում են, հրաժեշտի, որ պիտի բամ ձեզ, մեր սիրելի ու զթառար ալմամատերին<sup>2</sup>, որ ինձ էլ իւր շնորհաբուլիս սուրբ ձեռքով բաժին հա-

<sup>1</sup> Սա մի բառախաղ է «բոլորդ միասին կոնծեցէք» լարինական բառը որոշ դառներից կազմւած։

<sup>2</sup> Համալսարանին։

Նէ իւր ճոխ սեղանից, հրաժեշտ պիտի դամ ձեր մեծ հայրենիքին ու հեռանալ նրա հոյակապ կեանքից: Ես շաբ անգամ տեսայ, թէ մինչև անգամ զերմանացի ուսանողներդ ինչպիսի ծանր սրտով էք հեռանում այս հմայիչ ուսանողական կեանքից: Բայց միայն՝ ուսանողական կեանքից: Իսկ մե՞նք: Ո՞հ, համեմատութիւն չկայ ձեր իրական կեանքի և այն կեանքի մէջ, որ մե՛զ է սպասում: Դուք իրաւունք ունիք վայելելու ձեր ճակրի քրտինքի վասրակը, իսկ մենք ոչ ամեն փեղ և միշտ. Դուք արագ թուիչքով յառաջ էք մղում քաղաքակրթութեան զործը, իսկ մենք շաբ անգամ մեր ունեցածիցն ել ենք զրկուում:

Հրաշեացին ի պատասխան նախագահը վեր կացաւ ու այսպէս խօսեց:

—Մեր սիրելի ընկեր, դու այսօր մի երկու խօսքով ներկայացրիր մեզ ձեր հայրենիքի անցեալն ու ներկան: Բայց քանի որ դուք թէև վհագում էք, բայց չէք յուսահարուում, մեզ մնում է միայն յաջողութիւն ցանկալ քեզ և քո ընկերներին այդ վշուր ասպարէզում: Վարեցէք, ցանեցէք, սիրելիս, այն սերմերը, որ դուք բանում էք Եւրոպացից. Նրանցից շատերն անշուշտ կը բեղմնաւորւին:

\*  
\* \*

Աղւէսապեպները իրանց ամբողջ հմբութիւնն ու սրամրութիւնը բանեցնել սկսեցին՝ խեղճ աղւէսներին ու Հրաշեացին ժամ առաջ կոնծաբանութեան զագաթնակէփին հասցելու համար, որպելից Բաքոսեան հրաշագեղ աշխարհը նրանց պիտի ներկայանար իւր ամեն հմայքներով: Եւ որովհետեւ համաձայն ուսանողական խիստ օրէսութբութեան՝ աղւէս ասած մարդը և ոչ մի դէպքում իրաւունք չունի զլիսաւորներին ընդիմանալու, հակածառելու, նրանց ծալլելու և նոյն իսկ որ և է առարկութիւն անելու, ուստի այդ մեծաւորներն ամեն վայրկեան հնարաւորութիւն ունէին ճորտերին կէս և նոյն իսկ ամբողջ բաժակ մի անգամից դարարկել դալու:

—Կոնծիր, աղւէս, չըհամարձակես խելք թափել, հրամայում էք մէկը:

—Կոնծիր, կոպիտ աղւէս, չափդ ճանաչես պէտք է, —բարկանում էր միւսը:

— Կոնծիր, հա կոնծիր, բայց դու ախր քանի վեցամսեակ ունիտ բողոքում էր Փուկսերից մէկը:

— Չնրս:

— Դէ որ այդպէս է, մէկ դու շնորհ արա, վերցրու. մոռացել ես համ, որ ես հինգ ունիմ:

— Օհօ, թնչ շափ ես երկարացրել լեզուդ, մէջ էր միտում երրորդը. դու մոռանում ես նւասոր դիբքդ, ով Շուլցէ:

— Ի՞նչ էք հրամայում: Զերը քանի՞ է:

— Երեք. վայ երկուսիս ուղերին էլ քարին եկաւ: Դէհ, կոնծենք:

Աղւէսապետները շնորհ էին անում երբեմն էլ այս կամ այն աղւէսին քրուդըշաֆու կամ եղբայրութեան թաս խմելու: Նախ թեանցուկ էին անում և բաժակները բռնած բերանների մօդու իրար ասում. Քրոջս կնութեան չառնես ու պարզերս վճարեսու: Այնուհետեւ բաժակները դադարկելուց յետոյ միայն այս ընկերներն իրար հետ դուռվ իսուելու իրաւունք էին սպասնում:

Դեռ մեծաւորները գլուխները չէին կորցրել, երբ նախագահը հրամայեց Անսանդական սիրու երգն ասել: Ապա նա մի փոքր ընդմիջումից յետոյ լցնել գուեց եղջիւրը մի կում խմեց ու գուեց հետեւեալին՝ ամքող ըրջանառութեան համար:

\*  
\* \*

Ժամանակն արդէն բաւականին անցել էր: Պատկառելի տակառը սկսել էր յուսահագուական արձագանք գուլ, որ շափ անախորժ էր կոնծապետներին:

Քիչ էր մնացել, որ մեր դոքուրն էլ շարերի պէս գլուխը բոլորովին կորցնէր, երբ նախագահը շրապեց վերջին երգն ասել գուլ:

Մի քիչ յետոյ ամենասագահները մօպեցան գալասին ու նրան վերջնական օգերացիալի ենթարկելով՝ ծուծը քամեցին: Արդէն հիմաց նրա արձագանքը կադարեալ էր: Հիմայ նախագահը կարգադրութիւն արաւ հէռ. (=պարոն) դոքուրի վերջին արարողութիւնները կադարելու: Չորս հոգի դուրս գնացին, երկու ձողերի վրաց մի կորորած դուռ ուսերին առած ներս մդան: Միւսները այս պարզաբանի վրայ պառկեցրին համարեա ուշաթափ դոքուրին ու դէպի Զաալ գետի եղերքն ուղեորւեցին՝ հիմայ էլ նրա յուղարկաւորութիւնը.

կապարելու։ Անձունի երգեցողովթեամբ, ճըւճը ոյտվ ու հրհըռոցով ծանր ու բարակ յառաջ էին ընժանում։ Նրբ տեղ հասան, ննջեցեալին վայր Դրին և դանբանական ճառից յեզոյ մի այնպիսի վայնասուն բարձրացրին, որ ոստիկանը ափալ թափալ վրայ հասաւ։ Թէև նա զիտէր, որ այսօր էլ ուսանողների հետ կոիւ ու քաշքոց էր ունենալու, սակայն ինչ անէր։ Այս քաղաքը Լավացիկ ու Էկրալին չէր... Նրա փայլուն սաղաւարու մթութեան մէջ փայլիեց։

—Պոլիսը <sup>1</sup> գալիս է պարոնացք, ասեցին Պղերքը և աւելի թունդ զեցին իրանց համերգը։

—Լռութիւն եմ խնդրում, պարոններ, —առաջի բերան անխոռվ սրբով ասեց ոստիկանը։

Աւսանողները շփեսնել ձեւանալով՝ նորից աւելի մեծ գոռում գոչում դրին։

—Պարոնացք, կրինում եմ լուռւթիւն, —այս անդամ մի աստիճան աւելի բարձր ձայնեց պոլիսը։

Բայց ամենքը խուլ են՝ Ընդհակառակն սկսում ինչ մի քանիսը կապւի պէս մաւել, շան պէս ունալ ու վընկարալ Մի կապարեալ «կարւա-համերգ»։ Ոստիկանի համբերութեան բաժակը լցւում է։ մօքենալով մէկին թափով ձերբակալում է և դէպի բանուր է հրաւիրում։ Այս խօսքի վրայ մեր ննջեալը սժափուում է, պարութիւն է առնում և նրա մինչպէս էք համարձակումն ասելն ու հրմշացիոցին խառնւիլը մէկ է լինում՝ ընկերին ազարելու դիրաւորութեամբ։ Սրբամուած պոլիսը առաջին կալանաւորին թողնելով այս ըմբսպին է բռնում ու սուլել սկսում։ Կալանաւորը ընդդիմադրութիւն է ցոյց դալիս, քաշքոցը ճըւճում, բռոքը ուժում է։ Միւսները քաշքոցը դնում են, պոլիսը նորից և աւելի ուժգին սուլում է, պաշտօնակիցները վրայ են հասնում։ Եւ ահա երեք ոստիկան իրանց որսերով բռնում են ամութ ծակին ճանապարհը։ Նրբ որ փողոց են մընում, ընկերութեան նախադահը միջնորդում է, որ իւր երաշխաւորութեամբ այդ երկու բռնաւորներին այս գիշեր

<sup>1</sup> Պոլիսոդ բազմաթեամն կենդանին, որ ծովում ամենաճն դիւրութեամբ որս է անում։

թողլ գան երթալ քնելու: Նորա այցեփոմնն սփանալուց յեփոյ պո-  
լիզները բարեհաճում են ազատել լմբոսպ որսերին:

\* \* \*

Միւս օրը՝ վաղ առաւոփ Հրաշեալի հայ ընկերները շփապեցին  
նրա բնակարանը՝ քէֆն ու հալը հարցնելու և բանի էութիւնը  
իմացնելու, թէ նրա վրայ հասարակ գործ չէ բացւելու, այլ քրէա-  
կան, և այն էլ մնչպիսին: «Ով դիմէ ինչ ծանր պարժի պիտի են-  
թարկեն» շարախնդացութեամբ աւելացնում էին նրանք:

—Զահլէս մի գանէք է, անպիտաններ, թողէք մի քունս առ-  
նեմ: լուսուծէգին թնչ ներս ընկաք, մըութմաթաց մասմուրը:

—Սիրելի հայրենակից, մեր ոգարգականութիւնը շուրափոլթ  
կագարելու զգացումն էր որ մեզ այսպէս շփապեցրեց:

—Ո՛հ, ինչ անձնւիրութիւն, էլ խօսք ունիմ: Հայդէ դուրս,  
—հրամայեց քնաթաթաթախ և միւս կողքին դարձաւ:

Ընկերները առաջին անգամ այս պորցիան բաւա-  
կան համարեցին ու սպառնալիքներ կարդալով դուրս ելուն: Չորս  
օր յեփոյ կոչնագրերն եկան: Գործը սոտիկանութիւնը նախ Վայ-  
մար մայրաքաղաքն էր Ղրկել, բայց դարարանը Դիմելով, որ այս  
էլ ուսանողական չարութիւնների կարգիցն է», այլ ընթացք պուեց  
դարավարութեանը: Իաց և այնպէս կոչնագրի մէջ չէին մոռացել  
հետեւալ ահաւոր խօսքերը: «Դարի է կանչում սոտիկանի վրայ  
ձեռք բարձրացնելու համար՝ սրա պաշփոնավարութեան միջոցին<sup>1</sup>:  
Հրաշեալին ացդ խօսքերով շափ էին վախեցնում դղերքը, շեշտելով  
որ այդ «ծանր ամբաստանութիւն է»: Յանցանքը քրէական է ու  
քրէական, ասում էր մէկը: Յանդարկութեան հոգ է գալիս ու գա-  
լիս, յարում էր միւսը....

«Աւսանողական չարութեանց» դարավարութեան համար նշա-  
նակեալ օրը մայրաքաղաք Վայմարից<sup>2</sup> ըստ ընդունւած կարգին:

<sup>1</sup> Thätig angegriffen, առած էր կոչնագրում:

<sup>2</sup> Վայմարը մայրաքաղաքն է Սաքսէն-Վալմար-Էլզենախ կոչւած  
գերմանական մեծ-դքսութեան, որի մէջ է և համալսարանական փոքրիկ  
նոս քալաքը:

մասն...ւորածէս առանձին դարձաւոր էր եկել, որ երկու շաբաթը մի անգամ բաւականին գործեր էր ունենում այս քաղաքներից ամենաազափ քաղաքում, ուր խեղճ ոսդիկանները անգուսոյ ուսանողների ձեռքը կրակն էին ընկել:

Նոյն օրը մի գործ էլ քորշպուդէնսների<sup>1</sup> ժարանին ընկերութիւնն ուներ:

Այս մենամարդիկ ու կոնծաբան ընկերութեան շունը կիրակի առաւ օրեան ժամերգութեան ժամանակ եկեղեցու դուանը հաչելու անխոհեմութիւնն էր ունեցել Եւ որովհետեւ այս առաջին անգամը չէր, ուստի այդ կենդանու յանցանքն է թեթև չէր: Բայց, ի հարկէ, մեղադրւածը ներկայ չէր, այլ նրա տեղ ընկերութեան իրաւաբան նախազահն էր եկել՝ իբրև պատասխանագուու: Հանդիսապես ուստանողները, նրանց բարեկամուհիները, նշանածները, հետաքրքիր Փիլիսոփրներ (—քաղաքացիներ) նիստից շտու առաջ բոլոր տեղերը բռնել էին: Մինչև անգամ Հրաշեալի պառաւելիկ տանտիկինն էլ էր եկել՝ իւր շփուդէնսի (—ուսանողի) միակ խենդութեան դասավարութիւնը լսելու: Վերջը՝ առաւօպեան կոնծաբանութեան կամ Փրիւշոպէնից յերոյ՝ միանիւ ալլակիր սալլակով եկաւ երկրի պեսի, Վաշմարի մեծ դքսի, ուսանող որդին, որ նոյնպէս անդամ էր այդ «ազնւականաց ընկերութեան»: Զահելները ներս ու դուրս էին անում, վրսպավրագում ու քչիչում էին: Քորշպուդէնսների ընկերութեան իրաւաբան ընկերները նորից ու նորից գործը պաշտպանովի ականջով խորհուրդներ էին փափում, իսկ Հրաշեալի ընկերներն ընդհանառակը նրան վհաբեցնել էին աշխատում:

— Այսօր էլ, Հրաշեալ,— ասում էին նրանք, — համբարձմանդ հանդէսը կը կատարի:

— Անշուշպ կարժանանաս ուսանողական բանորի վերնագանը,

— Զեռ վերցրէք, — պարասպասնում էր նա կեղծ ժալիբով: Մեր հայ ուսանողը թէև այդպիսի բաներ շատ էլ աւանումը ձգող դղայ չէր, բայց վերջին ժամանակներս զլուխը կորցրել էր, քննական աշ-

<sup>1</sup> Քոր նշանակում է մարմին, աւախնքն կորպուս, քորշպուդէնս (կորպուսի ուսանող) կոչւում են այն ընկերութիւնների պատկանող ուսանողները, որոնց կանոնադրութիւնն մէջ մենամարդութիւնը պարտադիր է:

խափութիւններից, մորմոքիչ մքածմունքներից նրա ջղերն ուժապառւել էին։ Նա մեծ կարիք էր զգում հանգստութեան՝ այս ուսանողական կեանքի վերջին օրերը անդորր սրբով վայելելու։ Բայց ահա և քեզ բանսարկութեան խնդիր։ Verfluchtes Bier (անթծեալ գարեջուր), ասում էր նա իւր մոքում։

\* \* \*

Վերջապէս հանդիսաւորապէս դուրս եկան դարսաւորները։ Առջևից գլխաւորը, պաշտօնական դադաւորը, մի բարձրահասակ պարմեա մարդ, երկար բեխերով ու սափրած երեսով։ Նրա աջ կողմից կողքէ կողք ընկնելով յաւաջ էր գալիս երշիկավաճառ կարմրաթշիկ Աթուշհառուպուր և հասրավորիկ վաճառական Վերմերթը։ Երկուսն էլ կարծահասակ, միայն թէ Աթուշհառուպուրի վիզը ի բնէ միքիչ ծուռ էր։ Խւրաքանչիւր անգամ, երբ վկաններից մէկը ափեան էր գալիս, դարսաւորը յիշեցնում էր օրէնքի հետեւեալ ահաւոր սպառալիքը։

—Պարոն վկայ, յանուն սուրբ օրէնքի նախազգուշացնում եմ ձեզ՝ իբրև ազնիւ մարդ՝ վկայել առանց կողմանակութեան։ Հակառակ դէպքում՝ օրէնքի 1425 յոդ։ Մրամադրութեամբ սուստ վկայութեան համար կարող էք ծանր բանբարզելութեան ենթարկւել։ Հրաշեացի վկաններից առաջինը, որ զիբընբուրզցի էր, սասպիկ վախեցաւ։ Առանց այն էլ նրա սիրոն անհանգիստ էր։ Ապա դարսաւորը հրամացեց։

—Բարձրացրէք ձեր երեք մարն մյամէս և կրկնեցէք իմ խօսքերն իբրև երդում։ Ես Մորից կլոց, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ երդում եմ դալ հետեւեալ ճշմարիտ վկայութիւնը։ Վկան կրկնեց մի քիչ դողդողալով։ Ընկերները ծիծաշում էին կամացուկ։

—Ես, իբրև ազնիւ մարդ, երդում եմ, կարծես սժափելով ասեց նա, —որ ինքս էլ բաւականին հարբած լինելով ամեն բան երազի պէս եմ յիշում։ Արսինելու մենք այդ փորձանքի մէջ ընկանք մեղադրւած Ռաֆայէլեանի դոքուրական դակառը քամելուց յեփոյ, ուստի շատ բան չեմ յիշում։ Միայն այնքան դեսայ, որ մեղադրւածն ու զիշերապահ ոսպիկանը քաշքշում էին։ Իմ գլուխ էլ պարուր էր դալիս։ գուցէ նրանք իսկի էլ չեին քաշքշում։ ով է

իմանում. գուցէ և աչքերս խար առան, իլլիւզիայի հնթարկւեցին:

- Աւրիշ ի՞նչ ունիք աւելացնելու, — հարցրեց նախագահը:
- Այլ ևս ոչինչ:
- Բրաւծ, — կամացուկ հաւանութիւն պւին ընկերութեան անդամները:

- Այդ վախկուրից մվ էր սպասում մի ացդպիսի վկայութիւն:
- Ներս հրաւիրեցէք երկրորդ վկայ պ. Ռաշին, — հրամայեց նախագահը:

Սա համարձակ ներս մփաւ և որովհետեւ շաբ վարժ էր ացդպիսի վկայութեանց մէջ, ներածման բանը շուպով վերջացրեց ու շարունակեց.

— Ես, պարոնայք դադաւորներ, զլուխս այնքան էի կորցրել, որ այն պահուն զարմանքով մփմում էի, թէ այս ինչպէս է եղել, որ ոստիկանն հարբել է. բայց բանից դուրս եկաւ որ խօհապէս ես ինքս եմ արբած եղել: Այսպիսի հանդամանքներում, պարոնայք դադաւորներ, ես խշճիս թողլ չեմ դալիս մեկին պաշտպանել և միւսին մեղադրել:

— Բարի, — ասեց նախագահը, — թողլ հիմայ ներս դայ մեղադրուած պ. Ռաֆայէլեանը:

Երբ Հրաչեան ներս մփաւ, նրա թխորակ երեսը, սև-սև ու կրակոփ աչքերը, նրա երկար մազերն անմիջապէս գրաւեցին հանդիսականների ու շադրութիւնը: Նա աշխափում էր իրան հանգիստ ու անփարբեր ցոյց դարլ:

— Այս սևուկն ի՞նչ ազդից է, — հարցրեց օրիորդներից մէկը իւր խօսակից ուսանողին:

— Ասում են Արմենի (≡հայ) է:

— Ռումէնիէր (≡ռումանացի):

— Ոչ, օրիորդ Կոլէշ, երեխ մոռացել էք և ինչպէս շուպ՝ նոյեան դապանի պատմութիւնը, Արարամը, Արմենիան:

— Այն, այն, զիշեցի, ուրեմն սա մեր ամենիս նահապեսի հին ցեղիցն է համ: Այս քեզ հետաքրքրական բան: Երեխ մեր զարեջրին չեն դիմանում նոյեան թթու գինի խմող վայրենիները:

— Պր. Ռաֆայէլեան, ի՞նչ ունիք ասելու ձեր վրայ բարդած մեղադրութեան վերաբերեալ:

— Պարոնայք դաւրաւորներ, ես երկար բան չունիմ խօսելու։ Կարծում եմ որ վկաներս բանի էութիւնը ճշմարտապէս ներկայացրած լինելով՝ հաշորժած կը լինին ափեսնին իմ վերին ասորինանի հարբած լինելու գործին վերաբերեալ ժամուն։ Ես միայն այնքան եմ յիշում, որ ինձ մեծ զայրոյթ պարճառեց գիշերապահին միջամբութիւնը մեր քէֆին։ ի հարկէ մոռացել էի, որ գիշերապահին քաղաքացիների հանգիսու խոսնդարելու իրաւունք չունէինք։ Այլ հարան չունիմ ասելիք, միայն խնդրում եմ խոնարհաբար ի նկատի տոնել, որ այդ օրը իմ դոքանութեան փակառի հետ կապւոծ բոլոր ծիսակագարութեանց ենթարկւելու պարբականութիւնն եմ ունեցած եղել։

Նոյն կերպով քննութեան առնելով նաև Ռաֆայէլեանի ընկեր Ռոսբախի գործը, դաւրաւորները հեռացան ափեանից ու խորհրդարան մերան։ Այնպեղ երկար ու բարակ խորհրդակցելուց յետոց եկան այն կարծիքին, որ ուստիկանութիւնը այդ գործն խկապէտիզուր էր այնքան ուռեցրել և մայրաքաղաքը լրկել։ Ուստի վերջնական դուգանք նշանակեցին Ռաֆայէլեանին 5 և Ռոսբախին 8 մարկ։ Ասպա նորից ափեան եկան, բազմեցին ու այս վճիռը հանդիսաւոր կերպով յայրաբարեցին։

\*  
\* \*

Վերջապէս սկսւեց անկարդ շան դագուր։ Նեքուոր էր շան անունը՝ Վերոյիշեալ ընկերութեան նախագահը մեծ հմտութեամբ ու ճարտարութեամբ պաշտպանում էր Նեքուորի գործը։

— Մեր ընկերութեան ժողովարանը, — ճարտարանում էր նա, — եկեղեցուն կից է։ Ժամասացութեան միջոցին պարասիստարու Հեկուորը մեր բակումը հանդիսաւ պառկսծ էր, երբ եկեղեցու դռնից լանկարծ մի հաջոց լսեց։ Մի ակնթարթում կարաղած դուրս վազեց նա ու նորեկ շան վրայ վազեց։ Մենք քանիցս չարաչար պատրժել ենք այդ չարաճճիին, զանազան զրկանքների ենթարկել, որ այդ պեղումը չհաջէ, բայց էլի իւր շնութիւնից ձեռք չի վերցնում ու չէ...

— Բայց, ող. պարասիստանագուու, — դիրողութիւն արաւ նախագահը, — խնդրեմ պարասիստանագուութեան փեսակէորից չշեղւիք և

աւելորդ մանրամասնութեանց մէջ չմինէք. ձեր շան ոգեկան յուզման պարճառներն և այլն և այլն մեզ չեն կարող հետաքրքրել խօսեցէք, ինուրեմ, գործի էութեան մասին (sachlich):

— Ես այլ ևս ոչինչ չունիմ աւելացնելու, — յարեց իրաւաբան ուսանողը: Հանութիսականները մազ էր մնում, որ հրահը ուղղը դնէին նախագահն իր արենակիցների հետ հաղիւ էին բանում իրանց ծիծաղը: Նա կծորում էր շրմունքները. շունչը փորն էր քաշում՝ որ չծիծաղի ձարպար իրաւաբանի ընկերները շշուկներով հաւանութեան մեջմ ցոյցեր էին անում: Դարպաւորը վերկացաւ, նրա եփեից էլ հասպափոր խորհրդակիցները, և խորհրդարան մտան: Դարպավարութեան այս ընդմիջման ժամանակ դահլիճում մեծ քըրքիջ բարձրացաւ: Ներսը Փիլիսոր դարպաւորներից մէկի համրերութիւնը կորւեց:

— Փայլակ, կայծակ, — գուեց Խուշհառուպուր, — գժուում են, ի՞նչ է սցը ուսանողները:

— Զահել են, ջահել, — նկատեց ընկերը:

Հեքփորի գործը այս կողմ քաշեցին, այն կողմ քաշեցին և համաձայնեցին նախագահի կարծիքին, որ ալս լանցանքն էլ թեթև բան է: Բայց որովհետեւ ընկերութիւնը սրանով երրորդ անգամն է որ թերանում է, ուսպի 10 մարկ փուգանքի պէտք էր նրան ննթարկել: Կրկին հանութիսաւորապէս դուրս եկան ու յայրարարեցին:

— Վայ ձեզ, դոքտոր Հրաշեայ և կանութափ Խոսրւ իւ, — ծաղրում էին ընկերները, — փեսամք, շանն աւելի մեծ պապասխանագլութեան հնթարկեցին՝ քան բանաւոր արարածներիդ: Հրաշեայ, այս ազագմանդ տութիւ էլ մի դակառ չմնք խմում, ասում էին նրանք: Մեր հերոսը միայն ժգուում էր:

Եւ այսպէս վերջացաւ այս ուսանողական գործերի դարպավարութիւնը: Դարպարանից դուրս ելնողը յակամալից կը միշէր ուսանողական երգերից մէկի այն խօսքերը, թէ ամեն բան լոկ հանաք էր: Այն, մինչդեռ արևելցին ծերացած է լինում երիտասարդ հասակում, եւրոպացին մինչև մահ առողջ է մնում: Բարձր դիրքի հասած ծերացած մարդիկ, երբ զալիս են իրենց վաղեմի ուսանողական ընկերութեանց յոթելեաններին, այնպէս նիսր ու կաց են անում, այնպէս նրանք սրբանց հրճում, մասնակից են լինում ուսանողական գժութիւններին, որ կարծես թէ 50—60 դարիները նրանց վրայից սահել անցել են՝ առանց հեղոք թոշնելու:

\*  
\*\*

### ԱԻԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Թափւեցին տերևներն չորցած ծառերից —  
Դեղնած ու դժգոյն.  
Թափւեցին երգերս ջարդւած սրտիցս —  
Թօշնած ու անսէր;  
Թափւեցին ասողերը անհուն երկնքից —  
Թալուկ ու տվուր.  
— Թափւեցէք, արցունքներս, սրտիս խորքերից —  
Անյնիս ու մռայլ...

## ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԾՆՈՒՆԴ

(1811)

ՓՐԱՆՍՈՒԻԱ ԿՈՊՈՅԵՒԾ ԹԱՐՁ. Մ. ՆԱԱԱԱՐԴԵԱԱԲ

1811 թւականի Ծննդեան նախարօնակն է, գիշերւայ ժամը քասից ի վեր, նաևոյեւնը պարտապում է մենակ իր կաբինեգում Տիւյիլը իրի սյալափի մէջ:

Ընդարձակ սենեակը գրէթէ բոլորովին մնութ է: Դէս ու Դէն իւաւարի մէջ պողում են մի քանի ոսկեզօծ առարկաներ գարբամծորէն, մի անգեսանելի պարկերի կրկալը, բազկաթոռի յենարանին ծալքերը զարդարող երկու առիւծի զլուխներ, վարագոյրը բռնող մի մեծ ծոպր Զոյդ ջահերի մեղրամոմերը մետաղէ լուսամիովի գակից լուսաւորում են միայն մի մեծ սեղան՝ բեռնաւորւած խառնի խուռն աշխարհագրական ազլամներով և սոււրահասպոր արձանագրութիւններով, որոնք կանաչ քիմուխորի կազմ ունեին ու իրանց վրա կրում էին N. և թագադրոշմ:

Ահա մօյ երկու ժամ կը լինի, որ Տէրը աշխափում է. աշխափում է աշխարհագրական քարտէզների ու իր զօրքերի բռնած Դիրքերի վրա ահազին ճակապը խոնարհած, որ կիսւած է սև քոչորով, մաքերով լիցուն իր ճակապը, որը ծանր է որպէս ինքը այն աշխարհը, որին գիրել է մփածում:

Բաց արլասը ներկայացնում է Ասիան, ու կայսրի նեարդուր, կանացի ու սքանչելի ձեռքի ցուցամարը, որոնում է Դանդաղաբար հեռու-հեռու Պարսկաստանի վրացով մի ճանփա դէպի Հեղիս Հեղիսափան,

Այն, դէպի Հնդկաստան: Յամագային ճանփով: Խնչմու չէ: Քանի որ իր նաւագործը յաղթւած ու ոչնչացած է, որիրողը այս ուղին

ունի միացն այնպեղ զնալու համար՝ արմաւենիների առասպելական անդառների միջով ուղիկից ունենալով իր արձիւները, որոնց ոսկին փայլվում է պողպատէ և ինների միջից, Անգլիացի հենց սիրութոցելու համար, հենց սիրութ, նրա գաղութային պետութիւնը, նրա գանձը:

Ինքն ունի արդէն հետարի ու նարլըմայնի մեծութիւնը, կամ մենու մէ սուսնալ նաև Ալէքսանդրինը: Նա անրջում է այդ առանց զարմանալու: Նա ճանաչում է արդէն Արևելքը, և թողել է այնպեղ իր մասին մի անմահ առասպել: Նեղոսը տեսաւ նրան մի օր երկարամազ հասարակ գեներալի համազգեւարով ու դրի կանալը հեծած: Գանգէսի ափերին, գորշ սերդուկաւոր ծանրակշիռ Կայսրին հարկաւոր կը լինի Թերոգի փիլլը: Ինքը զիտէ թէ ինչպէս են քշում ժողովուրդներին, թէ ինչպէս են նրանց մոլեուանդ դարձնում: Այնպեղ նա կը հրամացի կինա հոնագոյն դէմքերով և զլուխներին սպիտակ մարմաշէ ապարոշ փաթթած զինւորներին, կը տեսնի իր սպիտակոցին միացած թանգագին ակներով զարդարուն ռաջաներին: Ե իր ճակարագիրը կը հարցընի շողակնեաց գայխոնից վեր կարկառած փառը ձեռնանի հրէշաւոր կուռքերից, քանի որ երբեմն Եղիստում՝ գրանիդէ գրափակադէմք ամբինքու, որի առջև երկու ձեռքը իր թուրին չենած երածում էր, չցացոնեց նրան իր գալանիքը:

Կայսր եւ րոպացի. Սուլթան Ասիացի: Անպ այն միակ երկու տիտղոսը, որ կը փորադրեն նրա դամբանի վրայ: Մէկ արդելք միայն լայնածաւ ալ Խուսասպանը:

Բայց որովհեգու չկարողացաւ գրաւել Ալէքսանդրի գաղանւող բարեկամութիւնը՝ կընկճէ նրան: Եւ Կայսրի փոքրիկ ձեռքը թերթում է ագահաբար կանաչակաղմ խոշոր հաւորներն ու արձանազրութիւնները, որոնք միաբերան ցոյց են գալիս նրա անհամար զօրքի թիւը, որ հաւաքւում է արդէն նևմանի ափերին: Այն, նա կը ցաղթէ Հիւսիսի ինքնակալին և կը քշէ նրան, այդ արդէն հպատակ ցարին իր վայրենի հեծելազօրք օրդուներով դէպի ցաղթութիւնը Արևելքի:

Կայսր եւ րոպացի. Սուլթան Ասիացի: Այս գործը վեր չէ նրացանկութիւնից ու հանճարից: Եւ երբ այդ իրականանաց, նրա գերահրաշ պետութիւնը երկիւղ չի ունենայ երբեք բաժան-բաժան

լինելուց պեղապահների ձեռքով ինչպէս երթեմն Մակեդոնացունը:

Սարդի քսանից ի վեր Կայսրը մի որդի ունի, իր փառքի ու մեծութեան ժառանգը. ու կայսրի շրթունքների վրայ ծաղկում է մի զեղեցիկ ժպիր՝ մոռաբերելով անդորր պալատում իրեն այնպէս մօպ քնացող երեխային:

Սակայն, յանկարծ, դլուխը բարձրացնում է զարմանքի շարժումով: Այնպէս լաւ գոցած կարինէքում, որի հասր վարագուրները իջեցրած են, որպեղից է լսում այն բարօրինակ և խորունկ շրջիւնը: Կարծես թէ մեփաքսէ պաստառների վրայ ոսկէթելով բանւած խոշոր մեղուները բոլորն ել սկսում են բզզալ: Կայսրը լսում է աւելի ուշադիր, և ահա այդ շշուկի մէջ նա որոշում է արոցրի թռթիւը:

«Ամ, այս... Ծնունդ... Գիշերային հսկման ժամն է»:

Եւ իրօք, Պարիզի բոլոր եկեղեցիների զանդակներն են, որ տօնում են Յիսուսի Ծնունդը. այն զանդակները, որ Քոնապարպը երթեմն կախել պուեց բոլոր աշբարակներից և զանդակներից, երբ նա, իբր խաղաղաբար բդեշխ, հաշուեցնում էր Ֆրանսիայում այնքան իրար թշնամի եղբայրներին:

Քանի քանի անգամ են շոշանջել այդ զանդերը նրակայարի պատուին, փառաւոր մաշտանքների առիթով: Աւ թնապէս զանդահարում էին աւելի ջերմ և առաւել ուժգին, հազիւ քանի մի ամիս առաջ, Հռոմի թագաւորի ծննդեան օրը. յիշարակելի թւական, երբ երկինքը հերոսին տղայ ընծայելով՝ կարծես թէ աշխինք. էր կռում նրա հետ՝ ճանաշելով նրա արաբքի օրինականութիւնը ու խոսպանալով նրան յարաւեռութիւն:

Սակայն այս երեկոյ զանգերը շոշանջում են նոյնպէս զւարժ, նոյնպէս յաղթական, ինչպէս Առւաբերլիցի կամ Վագրամի առիթով, շոշանջում են պարզ ու սառը գիշերւայ մէջ անմեղ մանուկի համար, մի հիւմնի զաւակի սպազմառով ծնուած ախոսի մէջ շարուշապ բարիներ առաջ, մինչդեռ խորհրդաւ որ ձայները աղաղակում էին ասպեղազարդ երկնակամարի բարածութեան մէջ Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն:

Կայսրը ականջ է դնում Ծննդեան զանգերի շոշանջին: Նա երազում է, մոռաբերում է իր մութը վայրենի մանկութիւնը, Այս-

շխօի գառնարում իր հօրելքայր Թեմերէցի գիշերացին ճրագալոցը, բազմանդամ գերդասպանի վերադարձը դէպի հին բնակարանը, որը վկայ է եղել հապարտութեամբ կրած ացնքան խեղճութեան, ցիշում է նաև իր մայր տանորիկնոջ գեղեցկութիւնը, որ նախագահում էր աղքատիկ նաւակարպիկին, երբ նրանք շագանակներ էին ուղում իր որդին, յաղթող արքացի ու Աւագրի Մեծ դուքսի անվական զաւակը կանգիրանաց այդ թշւառութիւնները, նա միայն աշխարհի տէրը կը լինի:

Դուրսը, սառնամանիք գիշերւայ մէջ, զանգերը հնչում են շարունակ Ծննդեան գոնը:

Տիւզիցը պալատի դռան մօտ մորթէ գդակը զլիսին՝ հին զինւորը քացլում է իր պահակագան առջե զայրացկուր քայլուով ուրները քիչ տաքացնելու համար. նա այդ վայրին մրաբերում է գուցէ գիւղում իր մօր ծնկների վրայ երթեմն բերան սովորած մի ազօթք կամ մի մեղեդի. ու ժողովում՝ է մեղմիւ իր բիրդ բեխերի տակից, մնուրի մէջ դրւած Յիսուս-Մանուկին: Իսկ ինքը Կայսրը չի լսում զանգերի բարեպաշտ կոչը. նա միայն իր որդու մասին է մրածուն և յանկարծ անդիմադրելի ցանկութիւն է զդում նրան տեսնելու: Կանգնում է որի ու ծափ է զարկում: Բացւում է իսկոյն պատրասների ցերեւում մի գաղրնի դուռ, Ռուսանը երևան: Է գալիս: Տիւզը մի ամենարկի վրայ վերցնում է ջահերից մէկը ու Կայսրը լուսաւորւած հաւասարիմ մամլուքի առաջնորդութեամբ, ամայի նրբանցքներով գնում է ուղղակի դէպի փոքրիկ թագաւորի բնակարանը. մդնելով այնպեղ հեռացնում է նշանացի դայեակին ու յանկարծ զարթնած կանանցը և միում է կանգնած հրաշածնունդ նորամանուկի օրօրոցի առջեւ:

Հռոմի թագաւորը քնած է խորունկ քնով ձերմակեղէնի ու ժանեկիների սպիտակութեան մէջ, որի վրայով անցնում է Պապուի Լեգիօն շքանշանի մեծ ժաղաւէնը: Փակ աչիկներով սիրունիկ դէմքը կիսով չափ թաղւած բարձի մէջ ու թաթիկներից մէկը, բոլորովին փոքրիկ, փափլիկ ու պաշտելի, վերմակի վրայ հանդշած՝ մանկական մարմնի երկու կոտր են ներկայացնում: ու այս անսարապութեան, այս մաքրութեան և անմեղութեան վրայից, ինչպէս երեխան է օրօրոցում, անցնում է կաս-կարմիր լայն ժաղաւէնը, կարծես մի արիւնի վտակ, կարծես արիւնաներկ մի գեր, որը հոսեցնելու

Են այն յուսով՝ որպէս զի ացդ դեռ նազուկ գլուխը կրէ մի օր  
թաղերից ամենածանրը, և այս ողսորիկ թաթիկը, հիմա դեռ  
քնքոյց և գեղեցիկ ինչպէս մի ծաղիկ, բռնէ ապագայում գալիսոն-  
ների մի ամբողջ կապոց:

Նապոլէօնը դիմում է իր որդուն:

Ոչ մի ժամանակ մարդկացին հպարտութիւնը այնպէս չէ փա-  
ղաքշել նրա սիրոց, նա երեակայում է, թէ ինչպէս իր արքունիքի  
մեծամեծ ասրբնանաւորները, Հոմերոսի հերոսներից աւելի հաշ-  
կաւոր զեներալները, ոսկեբան շքազղեսոր նախարարներն ու սենա-  
տորները խոնարհուում են այս օրօրոցի առաջ երկիր-լուծ յարդանքով.  
և թէ նոյն իսկ ուրացող ֆակորէնները, այդ ծեր արքայասպան-  
ները, որոնք այժմ նկայտերական նշանազգեսոր հաղած հաղիւ կը  
համարձակւեն այս մանկական թաթիկը համբուրած լինելու շնոր-  
հովը պարենալու:

Կայսրը միրածում է և հսկման զանդերի զողանջից գոյացած  
շփոթ աշխատի միջից, թւում է իրեն թէ լսում է վաշտերի օրո-  
րուն քայլւածքը ու ռազմարկների դշրոցը այնտեղ հետու Գեր-  
մանիացի ու Աեհասպանի սառցաւար ճանփաների վրայ: Գինովյած  
ծնողական ինքնասիրութեամբ, առաւել քան երբէք նա մկածում  
է Մեծ Զօրքի մասին, Ռուսասպանն ու Հնդկասպանն արթելու մա-  
սին, և երդւում է ինքն իրեն Հին Աշխարհի բոլոր գաները դալ  
իր ժառանգին: Նրան գւել է արդէն իրը չանչիսուր Սուրբ Պետ-  
րոսի քաղաքը. նորածինը կունենայ շուտով իր խաղալիքների շար-  
քում՝ նաև ուրիշ սուրբ քաղաքներ:

Մեքքալի Էմիր. Իննարէսի Ռաջա. Ահաւասիկ պիտղոսներ,  
որոնք վայել են Հառմի թագաւորին:

Ա՛ս, ինչու Ֆրանսիացի կանացք առաւել արգաւանդ էն: Ին-  
չիւ նա ացդ անյաղթելի առաջնորդը իր հրամանի դակ չունի  
մէկ մէկիօն, երկու միլիօն զինւոր: Այն ժամանակ դիեզերքը ամբողջ,  
ամբողջ երկրագունդը կը դնէր ացդ փոքրիկ թաթիկի մէջ:

Նա երազում է, խուլ դէպի սուրբ կոչնակների հնիւնը,  
առանց միածելու նրա մասին, որ թագաւորում է երկիրում և  
ամենամեծ սիրութիւններին նայում է իրրեւ մրջիւնանոցների  
լիրայ: Նա երազում է, առանց ուսնելու ապագայում Քերեօգինացի

Ֆիւնի տակ թաղւած իր անթիւ զօրքը, առանց նկարելու իր արծիւների վերջին յաղթանակն ու Վագրերլոի սրբազան գունդի ոչնչացումը անգլիական միտրայլեօզի միջոցով, առանց դեսնելու Ավելիանի մէջ այն ապառաժը, ուր իրեն Պրոմեթէոսի տանջանքն է, ապասում, առանց դեսնելու նամանաւանդ Նէօնբրունի պուրակում, աշնացին երկինքի տակ, այն դժողովն և դիսուր ճերմակ համազգեստ հազին աւարրիական զօրքի նշանը կրոլ ջահէլ մարդուն, որ խաշամի մէջ քայլում է ու հազում:

Եւ մինչդեռ Կայսրը հերկեռմ է իր հրէշաւոր քիմերային, երեակայում է իր որդու ու նրա ժառանգորդների թագաւորութիւնը ամբողջ աշխարհիս վրայ, և մինչդեռ պարկերացնում է ինքն իրեն, Նպաղունը ապագայում և աւանդութեամբ դարձած մի առասպելական դիւցազն, մի նոր Մարս, իր տասներկու մարշալների Զոդիակոսում մի յաղթանակող արևասփւած—զանդակները հնչում են շարունակ յաղթանակօրէն, գւարթօրէն, մոլեղին Բեթղեհեմում ծնւած, խեղճ փոքրիկ երեխայի պապւին, որ իսկապէս տիրել է աշխարհիս տասնուննը հարիւր տարի առաջ, ոչ թէ արիւնով և պարերազմներով, այլ խաղաղութեան ու սիրոյ խօսքով և որ Կիշխի հոգիների վրայ յաւիրեանս յաւիրենից:

## ԴՐԱՆ ԱՌԱՋ

ՈՒԻՒԿԻԵՐԾ'Ից՝ ԹԱՐԳՄ. ՎԱՀՍՆ ԹԱՒԱՐԲԷԳԵԱՆԻ.

Պինդ զարկի դուռը ես Հարաբութեան՝  
Վերից մի սև-փող նեղեցին միայն.

Սիրոյ տան առաջ շատ մարդ կար խռնած՝  
Եւ զուր ես երկար մնացի կանգնած.

Բաղխեցի դուռը Փառքի ամրոցին՝  
Զիւռոր չէի, դուռը չը բացին.

Վ ախեցայ մինեմ տունն Աշխատանքի՝  
Չայներ էր զալիս խուլ հառաչանքի.

Շար հարց-փորձ արի Բաղդի եպեից՝  
Նրա տան ճամբան ոչ-ոք չասաց ինձ.

Այժմ ինձ համար լոկ մի՛ դուռ մնաց,  
Այդ վերջին դժւռը կը բաղխեմ կամաց.

Տեղ, անշուշոր, այնպեղ ինձ էլ կը բանան,  
Թէև լեցուն է նեղ դուռը Մահւան:

## ԱՅՆԱՆ ԼԱՑԸ

ՎԱՀԱՆ ԹԱԻՄՐԲԷԳԵԱՆԻ

Մռայլ, սև' ամպեր, ամպեր թախծալից  
Եկել, խմբւել են աշնան գորշ դէմքին.  
Ցողում են հանդարս արդասուք անբիծ,  
Լալիս են լոիկ, լալիս վշտաղին:

Տերեւ ու դալար թոշնում են, թափւում,  
Ու կանանչ կեանքին հրաժեշտ տալիս.  
Ա՛, վերջն ամեն բան մի՛շտ մահն է խլում,  
Ահա ինչու է աշունը լալիս:

## ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Մեթազել, ՅովհաննիսԱնի»

(Շաբանակութիւն \*)

Քրիստոնէութիւնն էր, որ մահացու հարւած գուց գերութեան սիստէմին—ասում են յաճախու Այդ վկայութիւնը, սակայն, չի համապատասխանում ճշմարգութեան Մենք արդէն քանից շեշտել ենք, որ կրօնական-բարոչպիտական հրահանգները անզօր են փոփոխելու դնդեսական էւոլյուցիայի ընթացքը։ Քրիստոնէութիւնը, իրաւի, պաշտպան էր կանգնում մարդկացին արժանաւորութեան և բոլոր մարդ-կաներին հաւասար էր հռչակում Աստուծոյ առաջ։ Սակայն դրա հետ միասին եկեղեցու հայրերը սկզբունքով ընդունում էին մարդկանց պայմանների անհաւասարութիւնը, դասակարգացին անարդար յարաբերութիւնները։ Դրա հետ միասին յալպարարում էին նրանք, որ գերութեան հիմքը սկզբնական մնդի մէջ է... Երբէք եկեղեցին ճակար առ ճակար չի կռւել սրբութեան դէմ և երբէք սկզբունքով չի պահանջել նրա բարձումը։

Քրիստոնէութիւնը ոչ միայն ըրմբերացրեց մարդկանց անհաւասարութիւնը, այլ առելի ևս խորացրեց այն, սպեշճելով մի այլ ձրիակեր դասակարգ՝ կղերը։ Սկզբներում ինքնավարութիւն էր քրիստոնէական համայնքների մէջ. եպիսկոպոսներն ու երեցները ընսրւում էին համայնքի անդամներից և իրենց իսկ շրջանից Եկեղեցական կայքերը, նրանց արդիւնքները աղքարների համար

էին սահմանում: Բայց երբ հետզհետէ համայնքները յանեցինք հարստացան, ան ժամանակ զործերն էլ բաղմացան, և աշխատանքը ակսեց բաժանում զանազան պաշտօնների մէջ: Այդպիսով ժամանակի ընթացքում առաջացաւ կղերական մի թիւրոկրատիա, մի էաղէս կեղեքի: Համարաբութիւն, որ մինչեւ օրս էլ տարաբախորաբար գոյութիւն ունի: Եկեղեցական կալւածները ենթարկւած էին եպիսկոպոսների տնօրինութեան, սրանք էին եկամուգի բաշխողը: Նրանք հետզհետէ դառնում էին անկախ իրենց ընտրողներից, և վերջիններս՝ ընդհակառակը՝ միշտ աւելի կախած նրանցից:

Այդ էւոլիցիայի հետի զուգընթացաբար առաջ էր լնթանում քաժան-բաժան համայնքների ձուլումը ի մի լնդհանուր քրիստոնէական եկեղեցի: Արդէն Զորդ Դարից սկսած՝ քրիստոնէական զոնազան եկեղեցիները Արևելքում պատրիակներ էին ուղարկում, կոնդրէսներ էին կաղմում: Վերջապէս ամբողջ հոռովմէական կայսրութեան մէջ գոհնըւող եկեղեցիները՝ միացան, կազմեցին մէկ ամբողջութիւն և 4-րդ դարում (325 թ.) գումարւեց համայն իշխանութեան սինդը նիկիայում:<sup>1</sup>

Այդ սինդըներում եպիսկոպոսների մէջ գերակշիռ ազգեցութիւն նա էր ունենում, ով ներկայացնում էր ամենահարուար, հետքւապէս և ամենաուժեղ համայնքը: Այդպիսով Հռովմի եպիսկոպոսը բարձրացաւ դարձաւ զլուխ Արևելքան քրիստոնէութեան:

Եկեղեցուն սպասում էր դեռ յետպացում հսկայական մի կարիէր. նա դառնում էր հետզհետէստի սոցիալական մեծ զործոն, աւելի հզօր, քան թէ փթող քաղաքական իշխանութիւնը: 4-րդ Դարի ակրում՝ Կոնսուլանդին կայսրի օրով քրիստոնէութիւնը դարձաւ պաշտօնական, պիրապետով կրօն հոռովմէական կայսրութեան մէջ: Քրիստոնէութիւնը մրաւ պիտական հովանաւորութեան ներքոց եկամուգի նոր աղբիւրներ համարակացին, տասանորդը սահմանւեց քանիչ պետական հարկադրութեամբ: Եւ շնորհիւ այդ հովանուրութեան՝ կղերը դարձաւ միշտ աւելի անկախ ժողովրդից: Կղերը և ժողովրդ աւելի և աւելի զարւեցին իրարից: Նրա հա-

<sup>1</sup> Որին մասնակից էր, ինչպէս լալտնի է, նաև Հաւաստանեաց եկեղեցու պատրիարքը՝ բանձին Արքայութէափ, Արքայութէ որդւութէապատագան:

բըսրութիւնները աճեցին, բազմացան։ Աղքատների բաժինը միշտ աւելի նւազեց. կղերը դարձաւ հարստահարութեան մի հրէշացին։ մեքենայն Դեռ 5-րդ դարում հռովմէական եկեղեցու եկամուռը բաժանուում էր չորս մասի. մէկ մասը պատկանուում էր եպիսկոպոսին, միւսը՝ սուրբին կղերական պաշտօնեաններին, երրորդ մասը՝ հաւատոյ պաշտօնանց պէտքերին, և միայն մէկ մասը՝ աղքարներին։ Ուրեմն այդ վերջինները միասին սունուում էին այնքան, որքան եպիսկոպոսը՝ մենակ! <sup>1</sup>

\* \* \*

Գերմանների յաղթական արշաւանքով մի նոր դարագլուխի է բացւում քաղաքակրթութեան զարգացման մէջ։ Միիդք է դրւում սոցիալական նոր յարաբերութիւնների։ Մարդկացին հասարակութիւնը մի քայլ ևս անուում է յառաջդիմութեան ճանապարհի վրայ։ Որքան աւելի ենք առաջանուում, այնքան աւելի է ապահովուում աշխատաւոր ընդհանրութեան վիճակը, այնքան աւելի է շահւում թոյլի, սուրադրեալի ազապութիւնը։ Ազապութեան էւոլյուցիան ընթանուում է սպանիչ դանդաղութիւնմբ, բայց հասպատուն քայլերով։

Ամբողջ միջնադարեան էպոխան, սկսւած Հռովմի անկման ժամանակներից (5-րդ դարից) մինչև 17—18-րդ դարը բնորոշւում է ծորտութեան դիրապեպութեամբ։ Ճորդութիւն, աւագականութիւն կամ ֆէօդալիզմ՝ միևնույն տնտեսական սիստէմի արդարացուիչ անուններն են։ Ֆէօդալական սէժիմի ծագումը բակաւին պարզւած չէ. և նրա դիրապեպութիւնը միակերպ չէր ամերոջ Եւրոպայուում։ Չենք կարող, ի հարկէ, մինել այն մանրամասնութիւնների մէջ, որ այդ ուժիմը ներկայացնուում էր այլ և այլ երկիրներում և կը բաւականանք նրա ընդհանուր, բնորոշ գծերը ի փես դնելով։

Գերման բարբարոսները հասպատուելով իրեն իշխող դարր հռովմէական մեծածաւալ կայսրութեան մէջ, կամաց-կամաց իւլ ացրին հռովմէական քաղաքակրթութիւնը, սովորեցին երկրագործութիւն, արհեստներ, ընդելացան նախակեաց աշխատանքին։ Մինչ այն՝ աստիճանական կեանք էին վարուում նրանք, պարագելով գլխա-

<sup>1</sup> Geschichte des Sozialismus. Kautsky etc.

առապէս խաշնարածութեամբ։ Եապէս պատերազմիկ էր գերման-ների հասարակութիւնը։ Նրանք կազմում էին կուողների (guerrier, մարտիկ) ազատ, կամառ որ լնկերակցութիւններ՝ մէկ լնդհանուր առաջնորդի հրամանաբարութեան վակ։ Վերջինս առաջնորդում էր նրանց որսի ու պատերազմի ժամանակ։ Ոմանց ասելով՝ այդ նախ-նական լնկերակցութեան մէջն է հէնց Փէօդալական երարխիայի սկզբնաւորութիւնը։ Նւաճելով նորանոր հողեր, այդ առաջնորդ-ները բաժանում էին իրենց լնկերակիցների մէջ։ Սրանցից իւրա-քանչիւրը հասրապւելով իրու բացարձակ պէր իր առաջնորդից պարզեապրած հողաբաժնի վրայ՝ պարբառուում էր 1-ին մաս-նակցել զինուորական ծառայութեան, 2-րդ վճարել իր իշխանաւո-րին (առաջնորդին) որոշ պատրք, լինի փողով թէ բնական բերքե-րով։ Երբեմն ազատ դաշինքով՝ միացուծ՝ զինուոր-հրամանաբարն ու իր լնկերակիցը դառնում էին այդպիսով պէր և հպատակ, Փէօդալ և ծորդ (վասսալ)։ Անկայն առաջ է գալիս մի ուրիշ աւելի դառն հպատակութիւն։ Երբեմն ազատ՝ գերման ժողովրդի մի սպաւար մասը ենթարկում է այժմ ծորպերի ու ծորպագէրերի լծին, և ժամա-նակի լնթացքում կորցնելով զինուորական լնդունակութիւնները, դառնում է սորուկ (serf) և բռնի կերպով կապվում է հողին։ Այդպեղ կապարւում է, ըստ երեսովին, մի բէգրէս, յեղախաղաց մի շարժում ազատութիւնից դէպի սորիկութիւն։ Բայց դա նման է այն շարժման, որ պեղի էր ունենում կենսական կարգերի քայ-քայման միջոցին և որ մենք արձանագրել ենք արդէն իբրև։ — լնդ-հանուր քաղաքակրթութեան վեսակէտից — պրոգրէսի և ոչ բէգրէսի նշան։ Զըպէսքէ անգետել միւս կողմից, որ այդ միւնոցն գերման ժողովրդի մուտքը Եւրոպայում միանգաման թարմութիւն ներշն-չեց հին աշխարհի վիթած, կազմալուծուող օրդանիզմին և մղեց դէպի առողջ ու նորմալ քաղաքակրթութիւն։ Զպէտքէ մոռանալ, որ հին աշխարհի բանուոր լնդհանրութիւնը ևս այնուհետեւ մի փոքր ազատ շունչ քաշեց ֆէօդալիզմի հասպարութեամբ։

Միջին դարերում ազգաբնակութեան ահագին մասսան, աշ-խագաւոր մեծամասնութիւնը, կազմում էին սորուկները<sup>1</sup>։ Այդ

<sup>1</sup> Սորուկ — serf (servage — սորիկութիւն) գերի — esclave (esclavage — գերութիւն)։ Մեր լիդուն Համախ շիոթում է այդ երկու հատկացողութիւնները։

մասսան էր, որ իր աշխատանքով դոհացնում էր ամբողջ միջնադարիան հապարակութեան նիւթական կարիքները: Սորոկութիւնը նախնական գերութեան շարունակութիւնն է, նրա փոքր ինչ մեղմացած ձեւը Երկու դրութիւնների միջև զգալի տարբերութիւն կայ: Միջին դարերի սորուկը, իրաւեւ, դարձեալ զուրկ էր հողաշին սեփականութիւնից և քաղաքացիական իրաւունքներից, ծանրաբեռնութեած ամեն գեսակ տուրքերով և յաճախ ենթակայ հողաբէր ֆէօդալների կահայականութիւններին, այնուամենանիւ նա ունէր, աշակէս ասած, իրաւաբանական անձնաւորութիւն, որով և գրաբերում էր վաղեմի գերիից: Նա ունէր իր ընդունիքը, ճանաչում էր իր ծնողներին ու զաւակներին, ամուսնանում էր առանց տիրոջ համաձայնութեան, յաճախ պահպանում էր ցմահ իր հողաբաժնը և թողնում էր իր զաւակներին ժառանգութիւն: Նա այլ ևս չէր վաճառում որպէս մի անշունչ իր, ընդհակառակը՝ շար անդամ սպրուկները կարողանում էին գնել իրենց ազատութիւնը: մանաւանդ սկսած 12-րդ դարից, երբ դրամը մուգ գործեց պնդեսական կեանքի մէջ:

Սորուկները ապրում էին սովորաբար իրար վրայ թափւած խրճիթներում, տիրոջ կամ ֆէօդալի պան շուրջը և կազմում էին այդպիսով զիւղեր: Ֆէօդալի պունը ներկայացնում էր մի դժեսկ շրջապատւած ազգիներով: Եթէ զիւղական ազգաբնակութիւնը անձում էր չափից դուրս, անհամապատասխան ապրուսրի միջոցներին, վրայ էր հասնում Մալթուսի անողոք օրէնքը, (որ այնքան զօքաւոր էր վաղեմի ժամանակներում, երբ աշխատանքի նահապեսական զործիքները դեռ շար քիչ էին արագացրում), զալիս էր սովորակամ համամարակը և հաւասարակշռութիւն էր հասպագում՝ ապրուսրի ու ազգաբնակութեան միջև:

Ազնւական էր ֆէօդալների հասարակութիւնը և այդ ազնւականութիւնը հողաբնական էր ու զինւորական: Երբեւ արդիւնագործութիւն՝ երկրագործութիւնն էր տիրապետողը, առևուրն ու ինդուստրիան աննշան էին<sup>1</sup>: Հողը ամեն բան էր: Նա միւնոյն դերն

<sup>1</sup> Դրամը շար սուկաւ էր շրջանառութեան մէջ, ոնդեսութիւնը բնակուն էր (Naturalwirtschaft).

Էր խաղում, ինչ որ զբաթը կապիտալիսկական հասարակութեան մէջ և ամ միջոց էր մասնաւոր ծառայութիւնների փոխանակութեան Հողը ոչ միայն հարաբութեան աղբեր էր, և այլ և դիրապիտիւթեան մի գերազանց զէնք: Նրա միջոցով կարելի էր իշխանութիւն ձեռք բերել ժողովրդացն մասսայի վրայ:

Ամեն մի Փէօդալ իր փոքրեկ աշխարհում միահեծան պետ էր: Թագաւորը միջին դարերում յաճախ ամենասարուսը Փէօդալն էր և նու կոչում էր գերիշխան: Եթէ աղքատ է ան՝ գուրկէ ազդեցութիւնից: Աւելի թոյլ Փէօդալները մինում էին աւելի ուժեղների հոգանակութեան գոկի, և ացդպէս ժամանակի ընթացքում ուժի ու կարողութեան համեմակա գողանում է Փէօդալների դասակարգի մէջ որոշ աստիճանաւորութիւն (կոմա, դուքս և այլն):

Թագաւորի գերիշխանութիւնը մերժ իրական էր, մերժ անւանական: Իրական երբ հաղափակ Փէօդալների ոյժը ջլապւած էր զինում փոխադարձ մրցակցութեան ու պայքարի մէջ և երբ ինքը թագաւորը բաւականուափ ոյժ էր ունենում: Նրանց սանձահարելու Սնւանական էր նաև սրանց հակառակ պայմանների մէջ: Բայց առ հաստրակ թագաւորը չէր հոգում իր կրթի ժողովրդի, մասին: (Հոգացողութիւնը ըստէոք է անսպարծառ հասկանալ դրական մոքով) Նրա իշխանութիւնը գարածուում էր գրեթէ միայն Փէօդալների վրաց: Իսկ այդ վերջինները զինւորական ծառայութիւնից և որոշ մուրքից զապէ ուրիշ պարագաւորութիւնները չունեին դէպի: Գերիշխանը: Նրանցից ամեն մէկը իր հողի վրայ թէ թագաւոր էր, թէ կառավարիչ, ամեն մէկը կենտրօնացնում էր իր մէջ թէ օրէնսդիր ու զըրծադիր և թէ դապասպանական իշխանութիւնները: Ֆէօդալը ունէր իր սեփական զօքը և նա ինքնուրոյն ու անկախ շահագործում էր տրրուկ մասսաների աշխագանքը: Հողը օրէնքով նրան էր պարկանում և դրւում էր գիւղական համայնքներին: Միջին դարերում դիշտիկել զոյութիւն ունէր նաև ազար գիւղացիութիւն: Ճորպութիւնը բայցարձակապէս չէր իշխում համայն արևմտեան Սւրոպացի վրաց, ինչպէս որ գերութեան դիրասիլութիւնը ևս հնադարեան էսլույսում բացարձակ չէր:

Միջնադարեան արդիւնազործութիւնը (Երկրագործութիւն, արհեար) կլղիացած էր առանձին համայնքների մէջ: Ամեն մի հա-

մայնք իր համար գոյութիւն ունէր, առանց յարաբերութիւնների՝ արտաքին աշխարհի հետ։ Այդ համայնքները կամ զիւղեր էին կամ քաղաքներ։ Վերջիններս հետզհետք աճում էին, արհեստի ու առևտրի զարգացման շնորհիւ։ Միջնադարեան արհեստը սահմանափակւած էր այսպէս կոչւած՝ համքարական կարգերով (Zunftverfassung)։ Անհապին ձեւնփու չեր այդ անապահով ժամանակներում՝ կղզիացած մնալ. արհեստագործութեան այս կամ այն ճիւղը։ Երեք աստիճաններ կային արհեստաւոր դասի մէջ՝ վարպետ, քարգահ և աշկերդ։ Համքարական կազմակերպութեան կանոնադրութիւնը սահմանում էր ծառայութեան գողովութիւնը, աշկերդութեան ժամանակամիջոցը, աշկերդների ընդունելութեան դինը և այն։

Համքարական կազմակերպութիւնը շահագործման մի ուրիշ մեքենայ՝ էր. աշկերդը ապրում էր վարպետի գնում. ոռնիկ չկայ։ Որքան կարելի է՝ երկարացնում էին նրա ծառայութեան ժամանակմիջոցը։ Վարսեփների զեղծութերը աշակերտների վերաբերմարտ անհաշիւ են։ Աշակերդ դաւնալու համար բազմաթիւ խոչընդուռների պէտք էր յաշթել. այդքեղ ի նկատի է. առնւում կրօնը, ծագումը, օրինաւոր կամ ապօրինի ծնունդ լինելը և այլն։ Որոշ թիւ տարիներ ձրի աշխատելուց յետոյ՝ աշակերդը դառնում է քարգահ։ այնուհետեւ միայն նա վայելում է որոշ արգունութիւններ, սրանում է ոռնիկ, հարկ չէ վճարում, վարպետը աւելի յարգանքով է վերաբերում նրան։ Սակայն քարգահը ևս շահագործման առարկայ էր դեռ։

Արհեստի արդիւնագործութիւնը համայնքներում մենաշնորհ էր փոքրաթիւ վարպետների ձեռքում։ Այդ հանգամանքից գութում էր ի հարկէ սպառող ժողովուրդը։ Ազատ մրցում չկար. արդիւնագործութեան առաջադիմութիւնը կաշկանդւած էր։

Միջին դարներում արհեստաւոր բանւորների մէջ չկար ի հարկէ ժողովների, գումարման աղակութիւն։ Պիրող օրէնսդրութիւնը խստիւ արգելում էր այդ յաճախ խուլ, երբեմն էլ բացարձակ կուով։ Միջնադարեան շրջանում բանւորական խոռովութիւնները, գործա-

Դուշները անսպակաս էին: Սակայն՝ բնորոշ Փակփ. միջին դարերում եթէ բանորոշները կազմակերպում էին գաղղոնի ընկերութիւններ, դաւադրութիւններ, երբեմն նոյն իսկ մասսացին ապստամբութիւններ իրենց հարստահարիչների դէմ՝ դա ոչ թէ տիրող կարգերը յեղաշրջելու համար էր, այլ մեայն վարձագինը աւելացնելու կամ աշխաղանքի ժամանակամիջոցը պահսեցնելու և այն: Երբէք այդ բանորական շարժումների մէջ հասարակական կարգերի հիմնական յեղաշրջման խնդիր չէր դրւում, և այդ է, որ էապէս զանազանում է այն ժամանակւայ և այժմեան բանորական շարժումները:

\* \* \*

Պարտիկուլարիզմը (բաժան-բաժան լինելը) միջին դարերի յարկանիշն է: Զկար քաղաքական մի կենտրոնական իշխանութիւն. տիրում էր ֆէօդալական ու էժիմին յարուկ ապահենորոնացումը: Զկար սնգամ մի ընդհանուր, ազգային լեզու, որ շաղկապէր ցիր ու ցան համայնքներին: Տիրապետում էին բարբառները:

Միակ հզօր ու աղեցի՛ կազմակերպութիւնը միջնադարեան այդ պարտիկուլարիզմի մէջ՝ տիրեղերսկան կաթոլիկ եկեղեցին էր իր համաշխարհացին լատին լեզով և իր համարած հողացին սեփականութեամբ: Նա միակ շաղկապող օղակն էր կղզիացած, բաժան-բաժան համայնքների: Եկեղեցին՝ աստիճանաբար բարձրանալով, հարստանալով՝ կանգնում է ֆէօդալական հասարակութեան դէմ յանդիման, հոգարգ, վեհապանծ, իրրե՛ համայն քրիստոնեայ աշխարհը միացնող գործօն, և իրրե ժողովուրդների ընդհանուր դաստիարակ: Եւ որպէս հզօր հոգեւոր մի իշխանութիւն՝ նա հաւակնում է զեկավարել նուև աշխարհիկ պետութիւնների ճակարտիրը: Յիշեցէք միայն խաչակրաց արշաւանքները, կրօնական և աշխարհիկ իշխանութիւնների կարաղի մրցումը, որ իր գագաթնակէտին հասաւ պատղ Գրիգոր VII Հիլդերդան դի օրով: Գերազանցապէս՝ կաղմակերպւած մի պետութիւն էր եկեղեցին իր գերագոյն պետն ունենալով յանձին պա զի: Ամբողջ արևմտեան աշխարհում նա զգալ էր տալիս իր աղեցութիւնը և ինքն իրան բացարձակ թշնամի էր յայտարարում ֆէօդալական իշխանութիւններին: Նա որում էր ֆէօդալական կամացականութիւնների և տիրող անիշխա-

նութեան դէմի Միենոցն ժամանակ կափարում էր մեծ սոցիալական պաշտօն, հովանաւորութիւն ու ապաստան գալով թուլերին, հալածւածներին: Նկեղեցին մի հսկայական օճախ էր կազմակերպւած անկելանոցներով ու հիւանդանոցներով, ուր ապաստանում ու կերակրում էր մաւրացիկ պրոլետարիատը, ֆէօդալական ճանկերից ազարուած անորուն, թափառական բազմութիւնը:

Սակայն կաթոլիկ կլերկ իր համասիիւռ կալւածներով ինքը ևս արդէն բռնւած էր, այսպէս ասած, ֆէօդալական կազմակերպութեան ցանցի մէջ: Նաներկացացնում էր կլերական ազնւակաթիւնը՝ համապատասխան ֆէօդալական աշխարհիկ սպնւականութեանը: Այդիսկ պապմառով նա պիտի կործանւէր ժամանակի ընթացքում...

Ֆէօդալիզմի լուծը գնալով՝ աւելի ու աւելի ծանրանում էր բոլոր մարդկանց և մանաւանդ սրորին դասակարգերի վրաց: Ֆէօդալիզմը երբէք չեղաւ խաղաղ, օրինաւոր մի հասարակութիւնը Միշտ իրար Միշտ իրար դէմ լարւած՝ ֆէօդալները ոչնչացնում էին իրար Բռնի ոչքը խեղդում էր մրաւոր-կուլտուրական դործունէութիւնը և ծնում՝ էր ամենուրեք անիշխանութիւն ու խուզութիւններ...

Այն ինչ՝ գնափեսական էւոլիւցիան յամբաքաց ու հաստատուն գծում՝ էր իր ճակապագրական ուղին, նախասպարժասրելով ֆէօդալական վիթխարի ռէժիմի տապալումը: Խրկագործութեան ու արհեստի հետ միասին կամաց-կամաց սկսեց զարգանալ վաճառականութիւնը: Խաչակրաց արշաւանքները, յայտնի է, որ մեծ զարկ ու ինտելեկտին: Սրեմուաքի և արևելքի միջև սկսեց կենդանի հաղորդակցութիւն: Պոլսից, Եգիպտոսից և Սրեմուաքի ուրիշ ծայրերից սկսեցին փոխադրել հում բերքերը դէպի Եւրոպա: այդպէս մենք որեսնում ենք, որ 12-րդ դարում մերաքսազործութիւնը մուսք է դործում արդէն հարաւային նուալիա Դա սիրզին էր մանուֆակտուրայի, ձեռագործ արդիւնաբերութեան: Վաճառականական կապիտալին վիճակւած էր մեծ յեղարջում կարարել 14-րդ, 15-րդ և 16-րդ դարերում: Նա նոր կեանք բերեց ֆէօդալական կաշկանդութիւնը կարգերի մէջ: Նա ծնունդ պաց համաշխարհային առևտրին: Երեան եկան միջազգացին շուկաներ: Բնական գնափեսութիւնը (Naturalwirtschaft) հետզհետէ վերածւեց փողացին գնափեսութեան (Geldwirtschaft):

Տնտեսական զարգացման սլացքը տրագանում է: Վաճառականը մի տեսնդային եռանդ է ծաւալում: Նա որոշ մոքով կոսմոպոլիտ է

(համաշխարհաքաղաքացի)։ Նրա առջև բաց է ամբողջ աշխարհը նա զնում է, հեռաւոր, անյափ երկիրներ է թափանցում, դառնում է ԴՐԴԻՑ նորանոր գիւղերի Որքանն նշանակալից էին առևտրի ու արդիւնագործութեան համար 15, 16-րդ դարերի պիեզերական անցքերը՝ Ամերիկացի գիւղը, Հնդկաստան վանող ծովային ճանապարհի բացւիլու և այն և այն Դա կապիտալիզմի նշանաւոր էրան էր, որ նախապատրաստում էր Դա բուրժուազիան է, որ ձնունդ է առնում ու կամաց կամաց կերպարանաւորում, այն բուրժուազիան՝ որին սրբական ենք նորագոյն ժամանակների տնտեսական ու քաղաքական աշխարհում կապարւած վիթխարի թռիչքները։

Միջազդացին շուկացի բացման հեր պկուում է գենդացին մըրգում՝ բարբեր ազդութիւնների պարկանող վաճառականութիւնների մէջ։ Եւ յաղթանակիլ բանում՝ են բնականարար այն ազգերի ներկայացուցիչները, որոնք ունին աւելի մեծ զօրք ու հզօր՝ քաղաքական կազմակերպութիւնն Ուստի և բոլոր երկիրներում, գլխաւորապէս քաղաքացին, ազգաբնակութեան մէջ առաջանում է մի ուժեղ հոսանք՝ ոչնչացնելու ֆէօդալիզմի ջլագու կապանքները և կենդրոնացնելու իշխանութիւնը։ Բոլոր երկիրներում վաճառականութիւնը գիւղակցում է ֆէօդալական պարտիկուլարիզմի ծանր վնասները և ձգուում է միանալ, ամբողջանալ, միւնոցն երկրի բազմաթիւ վաճառականութիւնների փոխարէն սփեղծել մէկ ամբողջական, ազգային բուրժուազիա, և ընդհանուր ուժերով շահագործել համաշխարհացին շուկան։ Սզդայնական գդացումը, որ գրեթէ բացակայում էր միջին դարերում՝ զգալի կերպով աճում է վաճառականութեան զարգացման հետ։ Որքան ուժեղ է վաճառականի հայրենիքը, այնքան աւելի հովանաւորւած ու ապահով են նրա շահերը միջազդացին շուկայում, այնքան հաւանական է նրա յաղթութիւնը մրցութեան մէջ։ Ճիշտ միւնոցն երևոյթը՝ այսօր։ Նահերի անորագոնիզմը (հակառակութիւնը) համաշխարհացին վաճառանոցում դասոնում է ազգայնական անդադոնիզմ։ Առևտրական մրցումը հարկադրում է բոլոր ազգերին (Անգլիա, Ամերիկա, Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսաստան և այլն) ամուր կազմակերպւել ներսում, և բարձր պահել ազգացին դրօշը։

Այն ժամանակներում ևս պատերազմները անպակաս էին, ինչ-

այս ներկայումս եւ ամեն մի պատերազմ, որ մշտում էր յանուն առևտրական շահերի՝ աւելացնում էր երկրի իշխանի ազդեցութիւնը, որովհետեւ նրա ձեռքումն էր զօրքը՝ աջող մրցման միակ զրաւակնը։ Զօրքը այն ոյժն էր, որի միջոցով կարելի էր կռւել թէ արտաքին թշնամիների դէմ և թէ ներքին, վնասակար բարբերի՝ իրար ոչնչացնող և անջափական ոգով բողոքւած հետք Փեօդալիների դէմ։ Իշխանական արսոլիւտիզմը այլ ևս պնդեսական մի անհրաժեշտութիւն էր։

Ֆէօդալական կարգերի դէմ յամառ ու համերաշխ կոիւ են մշտում ժողովրդի բոլոր բարբերը՝ կաթոլիկ եկեղեցին, սուրբին, ճնշած բասակարգերը՝ վաճառական, գիւղացի, արհետաւոր և այլն, և վերջապէս երկրի աշխանը։ Սկսում է միարար, ամբողջացնող շարժումը, որը հարւածելով ֆէօդալիզմի իշխանութիւնը առաջնորդում է քայլ առ քայլ դէսի միապետական ռէժիմի հաստափումը։ Ոչ ամեն բեղ, սակայն Անդլիայում, ուր իշխանի ազդեցութիւնը աւելի մեծ էր, քան որևէ ուրիշ ուժ, ժողովրդի սպարին դասերը ձգրելով հանդերձ ազատւել ֆէօդալիզմի լծից, զինուում էին միաժամանակ միապետութեան յաւանութիւնների դէմ, նոյնքան երկիւղ կրելով միապետի բռնակալութիւնից, որքան և ֆէօդալի Յաճախ նոյն իսկ տեսնում ենք անդլիական պատմութեան մէջ, որ արհետաւորները և գիւղացիք փոխանակ կռւելու ազնականութեան դէմ, միանում են նրա հետ՝ ընդդէմ միապետութեան։ Այդ է պատճառը, որ Անդլիան դեռ վաղուց (13-րդ դարից) սահմանադրական միապետութեան օրինակ ուեց եւրոպական ցամաքին։

Ամենից աւելի ցայրուն կերպով կարարւեց միապետութեան գարգացումը ֆրանսիայում։ Եկեղեցու, իշխանի, վաճառականութեան և սորորին դասերի ներդաշնակ գործակցութեամբ՝ միապետութիւնը իր բացարձակ ձևով ու լիսկարար զօրութեամբ յաշթանակեց ֆրանսիական հողի վրայ։ Միահեծան պետը կենուրոնացրեց իր անձի մէջ բոլոր քաղաքական-հասարակական ֆունկցիաները։ L'Etat c'est moi! Պետութիւնը ես եմ! բացականչում էր Լուդովիկոս XIV այն ժամանակ, երբ միապետութեան սկզբունքը իր զարգացման զարգաթնակիցին էր հասել։

Այնուհետև ֆէօդալների դասակարգը, մինչ այն՝ ըմբռուր ու ամբարգաւան թագաւորի նկազմամբ՝ խոնարհուում է նրա առջեւ, հպատակուում է նրան: Այնուհետև ազնւականութիւնը բղխում է արդէն թագաւորից և այդպիսով կորցնում է իր վաշեմի բնաւորութիւնը: Դեռ աւելին. նա դառնում է գույքապէս աւելորդ... Այնուհետև նա մի բնու է հասարակութեան վրայ: Միջին դարերում, երբ նա իրը ինքնիշխան պետ՝ իր բարձրաբերձ ու անառիկ դղեակներից հրամայում էր աշխագաւոր մասսաներին, այն ժամանակ նա, այդ ֆէօդալ-ազնւականը իր բացասական պաշտօնի հետ միասին կարարում էր նաև դրական, հանրօգութ պաշտօն: Նա ապահովում էր իր հպատակ ազգաբնակութիւնը հարեան գիշապիչներից և ուրիշ անյալու թշնամիներից: Այժմ, երբ անցել են այդ արհաւրսլից ժամանակները, երբ կազմակերպւել է նորագոյն պետութիւնը իր զօքերով, ժանդարմներով, իր բանտերով ու ոստիկանութեամբ, այժմ այլ ևս աշխագաւորը պէտք չունի ֆէօդալի հովանաւորութեան, այժմ այդ վերջինը արդէն բացարձակապէս ծըլսւկեր է, պարագիսու եւ իրեւ այդպիսին՝ նա դափապարգւած էր վաղ թէ ուշ կործանւելու: Այդպէս կործանւում է ողարմութեան մէջ ամեն դասակարգ, որ քաղաքակրթութեան լնթացքում ապացուցանում է իր աւելորդութիւնը գնդեսական ու հասարակական դեսակէտից<sup>1</sup>: Այդ նոյն վիճակին ենթարկւեց և պապական կղերը իր

<sup>1</sup> Կործանում բառը չըպէտք է հառկանալ բառացի մոթքով, ձևականացնելու համար առաջարկ է այս բառացական բարբերը իսպառ չեն ջնջում աշխարհի երեսից, ոչ Ասցիալական էւոլյուցիան առաջ քշելով հասարակական կենցաղի նոր ու առելի կարարելազործւած ձենքը լիով է մլում հին ձենքը, որոնք չեն կարողանում այլ ես լորմարել առաջադիմուշ քաշաքակրթութեան նորանոր պահանջներին: Աական, չետ մլուելով հանդերձ այդ հնացած ու չեռաղէմ ձենքը շարունակում են (արդէն սնանկացած, ի հարկէ) իրենց գոյութիւնը: Դա տիեզերական էւոլյուցիալի հիմնական օրէնքներից մինն է, որ դիմելի է նաև օրդանական (բռասական-կենդանական) զարգացման մէջ, ուր ամենաբարձր կարարելազործւած մարմինների կուլքին դեմնում ենք ամենասորորին, մանրիկ, հոմոդէն օրարածներ:

ԾԱՆ. ԽՄԲ. Նոր դարերի ազնւականութիւնը, կորցնելով միջնադարեան ֆէօդալի բնաւորութիւնը, դարձաւ միապետականութեան մի աղբիբուր այն մոքով, ինչպէս Մոնղոլութիւնն այդ բանաձեւել է: այնպէս որ ազնւականութեան դերը այլ ես չի կարելի միապետականութեան պատմուկան դերից կարարելապէս բաժանել:

տիեզերական գիրապեպութեամբ։ Առեղուրն ու արդիւնազործութիւնը զարգանալով՝ կղերի մէջ ևս բորբոքւեց փող, հարաբութիւն գանձելու գունչանքը, որը գնալով, աւելի և աւելի խոր արմագներ ձգեց։ Դրա հետ միասին աճեցին կղերական կեղեցումները, որոնք իրենց գաղաթնակէտին հասան ինըուլգենցիանների հրապարակական, անամօժ վաճառման ժամանակ։ Միւս կողմից՝ հնչուն դրամի պաշտամունքը սովորում է կղերին՝ կամաց կամաց թողնել հովանաւորի, ապասպանողի վաղեմի դերը սովալլուկ պրոլետարիատի նկարմամբ։ մի պաշտօն, որ նա դիւրութեամբ սփանձնում էր միջնադարեան զնական տնտեսութեան շրջանում, երբ բնութեան բերքերը մեծ առաքութեամբ ամրարւում էին՝ եկեղեցական լայնագարած հոլերից և վաճառանոց չեին դուրս բերւում։ Այժմ, երբ դրամը ասպարէզէ եկել, երբ հարնի էր ամեն բարիք փոխանակել այդ յաւերժապէս թարմ ապրանքի հետ՝ այլ ևս ձեռնորու չէր քրիստոնեաց եկեղեցուն լինել հիւրասէր ու մարդասէր, ապասպան գուլ թշւառներին ու անկեալներին։ Այդպիսով եկեղեցին կորցրեց իր միակ դրական հասարակական փունկցիան, առաջ մշղելով միմիայն բացասականը—կեղեքում ու յափշտակութիւն յանուն կրօնի, Ասպուծոյ ու Քրիստոսի։ Նրա լուծը աշխարհաւոր ընդհանուրութեան համար ոչ պակաս ծանր էր, քան ֆէօդալինը։ Նրա շահագակութիւնները աւելի զգալի եղան գերմանական հողի վրայ, ուր սկսւեց մի ռէակցիա եկեղեցու դէմ, մի հզօր, շառաչալից շարժու լ, որ վերջացաւ կութերի վիթխարի հերձւածովը։ Խէակցիան այսուեղ ևս յաղթանակեց, անբուժելի հարւած դալով պապական ազդեցութեան ու յաւակնութիւններին։

(Եարունակելի)

# ՀՈԳԵՊԱՅՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐԱ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ ՄԵԶԱՆՈՒՄ

Ա. ՏԵՐ-ՊՈՂՈՍԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ<sup>1</sup>)

Եկեղեցին որոշ օրեր է նշանակել մեռեալների հողիները պատմելու, պաշտելու համար. դրանք են հինգ նաւակարիկներին յաջորդող օրերը—մեռելոց օրերը. բացի դորանից մի օր էլ չափկապէս եկեղեցում տօնելու համար—Տօն ամենայն սրբոց հնոց եւ նորոց (Allerseelenfest, Allerheilgen): Մարտալը—մեռելածաշը օրինելու համար քահանայի բձեռքով որոշ հրօնական արարողութիւններ են կարդացում և, կարծեմ, Մաշտոցից աշօթքներ կարդացուում:

Հոգուն պաշտօն կատարելը մեռածի մերձաւոր ժառանգների պարտաւորութիւնն է: «Ձինացուն ամենամեծ դժբաղդութիւն զգում եթէ երեխայ չունի, որ այս պաշտամուքնը մարտոցանէ»<sup>2</sup>:

<sup>1</sup> Տես Մուլճ 1900 թ. № 1:

<sup>2</sup> Bastian—Preuss. Expedition. (=Ա. Բաստիան, —Պոռուսական գիրքն: արշաւանք), I, էջ 205.

Աբեղեան, նոյնպես էջ 20, 21. «Ամին մէկ մեռեալի բաժանւած հոգին՝ բաց մանաւանդ ծերերի հոգին, մահանից լեզու առաջին օրերում և ամբողջ առաջին դարւակ ընթացքում առանձին խնամքի է կարօգուում: Այդ պատճառով հայ զիւշացու համար անդաւակ մեռնիլը մի մեծ դժբաղդութիւն է, բայց եթէ մէկը մեռնում է օդարտութեան մէջ, ուր հոգու՝ արժողներից սպասած հողածութիւնը լանձն առնալ մէկը չըկան դժբաղդութիւնը աւելի մեծ է»:

Այսպէս է և հայի համար Անգաւակ ամուսինները ինքզինքնին խիստ անմլսիթար են զգում, որ իրենց աջախի կրակը<sup>1</sup> վառ պահող լինելու չէ այլ ես, որ ազգականների, գնացող եկողի առջեւ գուռու պիտի փակւի», բայց ամենից աւելի մասպահնջութեան նիւթն է այն, որ իրենց հոգու մասին մտածող չի մնալու: Օգնութեան հնարքը գոնուում է սակայն—վերցնում են մէկը իրըն որդեգիր, որի վրայ ծանրանում է հոգուն պաշտօն կագարելու պարուրութիւնը: Բայց և եկեղեցին իր վրայ է առնում այս սկարպատուորութիւնը. անգաւակ ամուսինները կարող են իրենց ինչն ուստացւածըլ փոխանակ ու է որդեգրի թողնելու, կուակել եկեղեցուն, և վերջինս դարեկան մէկ կամ մի քանի անգամ (նայած կուած գումարի բանակութեանը և դրած պաշմանին) նոցահոգւ յիշակին պաշտօն կը կագարէ: Ամենասպահովն ի հարկէ մի եկեղեցի կառուցանելն է, որովհետեւ ամեն պատարագի ժամանակ նոցա հոգին կը յիշւի և կաղօթւի յագաւագէս զգեկեղեցիս շինողաց, երախրաւորաց, պարաբիրից համար: Այնքան բազմաթիւ եկեղեցիների զոյութիւնը Հայաստանում այս տեսակէստից հասկանալի է դառնում: Եւրաքանչիւր քայլափոխին հանդիսած մագուսները մի մի դամբարաններ են ու է մէկի մի սուրբի նշխարներով, ուր կոյնաւ մի սեղան, գարեկան գէթ մի անգամ նորա հոգուն մէկ պատրագ մարուցանելու համար:

Հոգիներն՝ ինչպէս կենդանի մարդիկ, ցանկանում են կերակրել. Դրա համար նոր հանգուցեալի սենեակում ամրողջ շաբաթը մի կոոր հաց և ամանով ջուր են թողնում, այն յարսնի դիրաւորութեամբ, թէ հոգին՝ որն անմիջապէս չի հեռանում սենեակից, կամ սենեակը կրկին այցելելիս քաղցած և ծարաւ չմնայ: Ննջեցեալին պատահնքելիս՝ բերանումը մի կոոր նշխարք են դնում և կամ հէնց մի կոոր հաց սրբի վրայ են քցում և այնպէս<sup>2</sup> թաղում: Ընծայ-

<sup>1</sup> Հմմթ. Արելեան նոյն տեղ էջ 70.

<sup>2</sup> Տես Արելեան, նոյնուել էջ 21 համաձան «Ազգ. հանդէս» II. 179. և I. 310. Բայց վերուիշնալներից պէտք է եզրակացնենք, որ այս և ուրիշ հոգածութիւնները, ինչպէս մոռեալի քթում խունկ դնելը, հանգուցեալի հոգու և անապարհորդութիւնը դէպի միւս աշխարհ դիւրացնելու և ախորեւ հոգու ապագատ կեանքը բարելաւելու» համար չեն, ինչպէս պէս Արելեան:

ւած նուերին զգայական վայելումին մեռեալ հոգին ոչ միայն կարող եւ կարօպ է ենթադրուում<sup>1</sup>, այլ նա նոյն իսկ մասնակցում է մարդկացին գւարձութիւններին Այս կերպ ըմբոնելը յարափեռում է դեռ այսօր հայերի մէջ<sup>2</sup>: Մեռելածաշի (քելեխ) ժամանակ ննջեցիալի հոգին ընդունուում է իբրև ներկայ, նոյն իսկ իբրև ինքը—հիւրասիրողը: Անպեսանելի կերպով այդ մասնակցողից քաշւելով, սովորութիւն դաշի ժամանակ նորա մասին գովասանքով խօսել և առհասարակ մեռեալների մասին լաւ ասել կամ ոչինչ (de mortuis nil nisi bene): Ճաշին մասնակցողները ուգուում և խմում են մեռեալի հոգու ներկայութեամբ և նորան. Էլ մասն ուրածին հանում, զերեզմանի նոր հողակոյցի վրայ մի բաժակ գինիածիլով (ինչպէս այդ անում են օրինակ Թիֆլիսում) և աւելացած ուգելիքն ու խմելիքը զերեզմանի մօդը թոշնելով հեռանում են: Մեռելածաշը մատաղի կամ հոգեհացի անւան գակ կրկնւում է յաճախ մեռեալի հոգու չիշագակին<sup>3</sup>:

Է ենթադրում, այլ պարզապէս հոգին քալցած շըթունելու համար: Հոգինինամելը ամեն բանից առաջ ուշւած է դէպի նրա ֆիզիկական կեանքնու բարեկառումը: Դնջեցեալի քթածակերի մէջ խունկ զետեղելը, մեռեալը օրհնած ջրով լւանալը, սպիրտկ սաւանով փաթթելը, նրա զգեստները մաքրելը, կրօնական ծէսով անբիծք կատարելը և նպառակ ունին հոգու կրկին միացումը մարմնի հետ ախորժ և մաքուր դարձնելը Հոգին սովորաբար քթի միջովն է կատարում իր ելումուգը և խունկը, իր հոգի ախորժակի զբառումովը հաճելի կը դարձնի նրա վերադարձը (գես նաև Արեւեան, նոյն գեղ, էջ 23): Մաքրութեան համար էլ լւանում են թէ մարմինը և թէ չորերը և պարանքում են միան սպիրտակ կոռորդի, որով հետեւ աշխոր մարմնի և շորերի մէջ՝ հոգին էլ կաշորուի: Մանւանից չետու ամրութ ուին օր՝ ինչպէս և կիրակնամուբներին, ճրազ վառ թոշնելը ոչ թէ «հոգու ճանապարհը դէպի միւս աշխարհը լուսաւորելու» համար է, այլ հակառակ ուշենորութիւնը լուսաւորելու համար, որպէսզի վերադառնալիս (և ոչ այն կողմը զնալիս) ճանապարհները խաւարի մէջ չըմցնեն ու նեշանան, կամ ինչպէս ինքը պ. Արեւեան մի ուրիշ տեղ (էջ 24) գրում է՝ «երդիքից ներսը թքելով և անիծելով» չը հեռանան, իրենց ները դանելով դան բարդաւորութիւնը:

<sup>1</sup> Նուլցէ. Նոյնուել, էջ 253.

<sup>2</sup> Արեգեան, նոյնուել, էջ 60. «Նախնեաց հոգիները իրենց սերունդի գւարձութիւններին մասնակցում են ևն».

<sup>3</sup> հմմոր. Արեւեան, նոյնուել էջ 23.

Խնչպէս մի հնդկական ասացւած էլ պատմում է՝ «ինն անցքեր ունի մարմինը, որոնցից կարող է հոգին դուրս փախչել»<sup>1</sup>: Նրբ ինքն իրան խեղդողը (ինքնասպան թա excellence, քանի որ հրազդէններ զոյսութիւն չունեին դեռ ևս), արգելում է հոգուն մաքուր անցքերով իր ճանապարհը գտնելու, առ արիստած կը լինի անմաքուր ճանապարհներով անցնել: Հետեւանքը կը լինի այն, որ կը պղծւի հոգին, որի հետ և մարմինը. որովհետեւ հոգին կարող է կրկին միանալ մարմնի հետ և կընորդի միշտ այն ճանապարհը, որով նա հեռացել էր: Այս թէ ի՞նչով մեկնելու է որ եկեղեցին մերժում անքնասպաններին մաքուր մեռեալների շարքում—հասարակաց գերեզմանոցում ապաստարան լրաւը:

Սկզբում մեռեալների համար առանձին հանդսրարաններ չեն եղել, այլ իրենց հանգիստը գտել են ուղղակի այնորեղը, ուր նոքադադարել են ապրել: Մեռեալին թաղելը աւելի ուշ ժամանակաւայ սովորութիւն է և արդիւնք ոչ թէ առողջապահական կամ ուրիշ որևէ է տեսակիցի, այլ այն բանի, որ զիշակիներները ուստեղով դիակի միսը և, որ զլսաւորն է, դորա հետ միասին և արիմնը, կոչնչացնէին ուրիմն մեռեալի հոգին. այդ պարճառով սովորութիւն դարձաւ դիակը ծածկել քարերով. մեռեալին թաղելը ոչ թէ առողջապահական ոլաշոններին օրոշումն է, այլ միայն կրօնական զգի չառնւած կանոններին բաւականութիւն լրալու համար է, որ Անտիգոնը հողովթեթև ծածկում է իր եղբօր դիակ'ը. բարեպաշտութեան մաքուր զգացմունքներ կարող են միացած լինել սրան, բայց իսկապէս որոշող մրապապկերը արդէն իլիականում մեզ հանդիպածն է, այն է թէ շթաղւածի հոգին միւս կողմը հանգիստ չէ գտնում:<sup>2</sup> Թաղման արարողութեանը ներկայ եղողները չերմեռանդութեամբ մօքրենում են գերեզմանին և ամեն մէկը մի բուռն հող է աւելացնում զրան. այս միենոյն սովորութիւնը եղել է նաև Հոմերական լոյների մօք, որոնք մրածում եին թէ հոգին անքան ժամանակ հանգիստ

<sup>1</sup> Հուլցէ, Խորնուղ, էջ, 331.

<sup>2</sup> E. Rohde—Psyche. Seelenkult und Unsterblichkeitsglaube der Griechen (=է. Ռոհդէ—Պսիխէ առաջին և Եղիսական համարական հաւատքը Յուների մէջ) Freib. in B. 1890-ից.

չէ գդնում և չի հեռանում իւր դիակ մարմնից, որքան ժամանակ  
նու վարահ չէ, թէ դիակը ոչնչանալուց արդէն ապահովւած է:  
Մեր երկրի զանազան կողմերում պատահում է մարդ շատ գերեզ-  
մանների, աւելի ճիշգ՝ քարակոյցների, այս ինչ քաջի, այն ինչ  
հսկացի, դեի, և այնի անունով, բայց իրօք ո և է ցեղի, սերունդի  
նախահայրերի—ազնաւորների գերեզմաններին<sup>1</sup>, ուր ամեն ան-  
ցորդ իր բարի պարականութիւնն է համարում մի քար վերցնել  
և հայդ կոյցին աւելացնել: Մեր այժմեայ մեծ-մեծ գերեզմանաքա-  
րերը ապահովում են դիակը զիշակերներին ճարակ դառնալուց,  
այսինքն հոգու վերջին առասպարանը ոչնչութեան մադնելուց  
փրկում են:

Մի ժամանակ էլ մարդիկ իրենց մեռեանները հենց իրենց բնա-  
կարանների մէջն են թաղել, դան մի ո և է անկիւնում Վանում  
զոյութիւն ունեցող մի սովորութիւնից ապահովապէս կարելի է եզ-  
րակացնել, թէ մեր նախահայրերը մեռեանները թաղել են դան  
մէջ, ուր երբեմնակի այցելութեան էին զալիս հոգինները: Խըթման  
երեկոյեանները լնարանիքի ամենակրտսերը վառելով մի մոմ և խընկ-  
ամանի մէջ խունկ ծխելով, շրջում է դան բոլոր մասերը, մինում  
է ամեն մի յարկի և շինութեան մէջ, ասելով. «Հնորհաւոր Քրիս-  
տոսի ծնունդ և յայտնութիւն (կամ ըստ պատշաճի՝ յարութիւն),  
ծեզ և մեզ մեծ աւետիքն. մինսւմ է ամեն փեղ՝ ուր մարդ չկաց,  
ուր նոյն իսկ բնակութեան համար չէ սահմանուած. ամենուրեք պի-  
տի կրկնէ նոյն խօսքերը: Այդպէս էլ հարկաւոր է, որովհետեւ պա-  
տերից մէկը կարող էր այնպեղ թաղւած կամ նրա հոգին պատահ-  
մամբ այդ բոպէին այդպեղ լինել<sup>2</sup>: Այս սովորութեան միակ նորու-  
թիւնը անկասկած Քրիստոսի անունով շնորհաւորելն է:

<sup>1</sup> Հմմր. Արեւեան, նոխնեց, էջ 71.

Կարծում ենք թէ առջնաւուրիս (ազն-աւոր? Խմբ.) գլխաւոր նշանակու-  
թիւնն է ցեղի նախահայր. իսկ «հոկալ» (Riesen), ինչպէս Պ. Արեշեանն է  
թարգմանում, երկրորդական նշանակութիւնն է, ըստ որում նախահայրը,  
ցեղի սկզբնահայրերը, երեակալել է իրք մեծ, ուժեղ, քաջ—հսկայ մէկը,  
որով այս դաշտավարը միացել է առաջնին: Ազնաւուրների քարակոյցը գե-  
րեզմանները երբեմն մի քանի մէտր երկարութիւն ունին, ժամանակի  
ընթացքում կողուակւած քարերի պատճառով, բայց և աշնապէս ասւում է  
թէ, անաւուրը, շատ երկար լինելուն համար, ծանկից ծալած են թաղել:

<sup>2</sup> Հմմր. Արեւեան, նոխնեց, էջ 23.

Հոգիների սիրած մի բնակարանն էլ թոնիրն է, որն տըղէն ըստ ինքեան մի սուրբ տեղ է<sup>1</sup>. Թոնիր շէնքելը: այսինքն թոնիրի վերայով մի կողմից միւսն անցնելը, ինչպէս և թոնիրի շուրթը նստած ոդներ շարժելը մեղք է համարում, որովհետև հագիները կ'անհանգամանան: Թոնիր շէնքով պէտք է շէնքը քանդէր, ու սինքն նոյն շարժումը հակառակ կերպով կարարէ: Հոգին մեծ ոիրով է թափառում և մինչեւ իսկ բնակում դիակի մօտերքը, նորա շրջակայքը<sup>2</sup>: Տեղ-պեղ կայ այն հաւաքքը, թէ մեռեալի հոգին քաշ է գալիս դիակի շուրջը մինչեւ այն րոպէն, երբ թաղման արարողութիւնը կափարելիս՝ երգւում է պատք ի բարձունս. ասում են նոյնպէս թէ հրեշտակը առնելով ննջեցեալի հոգին, բարձրանում է մինչեւ ամսերը, ուր չար ու բարի հրեշտակները կոխեն մզում այդ հոգին տիրապետելու համար, մինչեւ պատք ի բարձունս երգելու րոպէն (երբ, ինչպէս յայբնի է, ծիսակարարութեան ժամանակ սկսում են փոսումը զետեղած ննջեցեալի վրայ հոյն ածել), որ ժամանակ բարի հրեշտակները յաղթելով՝ դանում են հոգին Ապուծոյ յանձնելու:

Նախամարդկանց մօտ նշանաւոր մեռեալների համար սովորութիւն է դառնում առանձին զերեզմաններ շինել, որոնցից առաջ են զալիս ապագայ մատուռները, վանքերը, տաճարները և այլն, որոնք դառնում են հոգիներին պաշտօն մափուցաններու կեդրոններ: Կամքարանների (Grabanlage) շինութիւնը տաճարների զարգացման սկզբնակետն է<sup>3</sup>: Եռլոր եկեղեցիների մէջ, որոնք շինւած չեն բոլորովին նոր ժամանակներում, ամփոփւած կան սուրբելու նշխարներ կամ նոյս մասունքները: Նշխարները կամ մասունքը զեգելւած են լինում մի գերեզմանում, որը սովորաբար մի առանձին բաժանմունքի՝ մափուռի մէջն է լինում: Այս սուրբերի գերեզմանները հրաշքի և բժշկութեան աշբիւրներ են և նոյս բժշկական

<sup>1</sup> Աբեղեան, նոյնտեղ, էջ 6, 67: Թոնիրի սրբութիւնը մեր պառաւները չաճախ այնպէս են բացադրում թէ այնտեղ եփումէ հաց, որը եկեղեցն ա. խորհրդի նիւթն է, ինչպէս և գինին, որոնց զերին թափողի եկոխոփով՝ «աչքերը կը կուրսան»:

<sup>2</sup> Հմմտ. Աբեղեան, նոյնտեղ, էջ 18.

<sup>3</sup> Լիպպէրտ-Կրօնները, էջ 243:

ամենալաւ դարման—ոչ թէ հողն է իբրև հող, այլ իբրև մի իր, որի վրայ սուրբի շւաքն է ընկել։ Մշոց Ս. Կարապետ վանքում իբր թէ Լուսաւորչի ձեռքով Յովհ։ Մկրտչի նշխարներից մի մասը թաղւած է այսպէս կոչւած։ Ը. Կարապետի գերեզմանառում։ Գերեզմանի կողքին կայ մի փոս, ուստից ուխտաւորները հող են վերցնում և տանում իբրենց հետ ու գործածում իբրև բժշկական միջոց, իբրև Դեղ (գերեզմանի հողը ամենեին չե պակասում, որովհետեւ վանքի ծառաները դորա հոգսը քաշում են)։

Հոգին իբրև նիւթեղին մի իր, ուրեմն պարածութեան մէջ, պիտի ունենա՞ր մի կերպարանք։ «Այնպիսի բացագրութիւններ, թէ հոգին քառակուսի է, ինչպէս Պիւթագորաս, կամ թէ նա մի շըրջան կամ գնդակ է կազմում, ինչպէս Արքիդասն է ենթադրում, կամ թէ նա ամենանուրբ արտօմներից է բաղկացած՝ ինչպէս Գէմոկրիս և Էպիկուր կարծում էին, իբրև վիլխովայական Խորհրդածութիւնների արգասիք, այսպեղ սպասել կարելի չէ դեռ ևս»<sup>1</sup>. Հոգին մարդուս միւս ինքն է. Հոգեբանական երգերի մէջ փոփոխակի կերպով մարմինը և հոգին ընդունում են իբրև փսկական մարդը, ևա ինքը<sup>2</sup>. այնպեղ մարդը կրկն գոյութիւն ունի—իւր զգայական երեսցմով և իւր անդեսանելի պարկերով (Abbild—յունաց օւծուու, հոռմ. ցոնիս, արաբ. ջին, պարս. ֆրաւաշի, եգիպտ. քա), որը մարդու մահւամբը ազատ է դառնում։ Երազը բացագրում էին նրանով, որ մարդուս քնած ժամանակը միւս-ինքը—հոգին—գործում է և ուրիշ հոգիների հետ յարաբերութեան մէջ է մքնում։ Մենք պահել ենք դեռ այսպէս կոչւած հոգեհամալու (Seelenzahl), այսինքն՝ մարդկանց թիւը իմանալու համար չենք հարցնում ո՞քքան մարդիկ, այլ քանի՞ հոգի, այն պարզ պարհառով որ նա ինքը, իսկական մարդը և նորա էութիւնը համարել ենք նորա հոգին։ Հոգին ունի սովորաբար մի երկրորդ մարդու, մի ուրիշ փոքր մարդու, մանրանկարի ((homme en miniature, homoneulus) կերպարանքը<sup>3</sup>։

<sup>1</sup> Շուլցէ, նույնութել, էջ 333.

<sup>2</sup> Ռոհդէ, նույնութել, էջ 5.

<sup>3</sup> Մի նկար կար կախւած՝ մի եկեղեցում, որը պատկերացնում էր

Բայց հոգիները պարկերացւում են նաև մի քանի որոշ կենդանիների կերպարանքով՝ փրբե թռչուններ, մասնաւորապէս իբրեալղաւնիներ, իբրեւ միջարներ, մեղուներ, յարկապէս իբրեւ թիթեռներ (psyche=հոգի և թիթեռնիկ): Հոգիները ներկացնում են նաև իբրեւ սողուններ, որոնց յարկապէս օձերը և մողեսները զերայաւում են: Չորքովանի կաթնասուններից հոգու կենդանիներն (Seelenthier) են մասնաւորապէս մուկը, աքիս և կարուն ։ Հայերը ամենայն երկիւղածութեամք են վերտքերուում իրենց շէնքի մէջ բնակութիւն հասպարած օձին, և նորան հալածելը կամ սպանելը ու է դժբաղլութեան նախադուռն համարում: Այդուհետև շաբ անգամ ընդունում է մարդկալին կերպարանք և նեղութեան դէպքում զալիս է օղնութեան, կամ անարդարութիւն կարարւած դէպքում պապազլի դեր սրանձնում:

Թոնիրների մէջ, մանաւանդ ական մէջ բնակում են նախահայրերի հոգիները<sup>2</sup>: Վանեցու համար մեծ ուրախութիւն է, եթէ մի թիթեռնիկ իր ապարանը դգել է իրենց թոնիրի ական մէջ, դապապերի հոգու ներկացութիւնն է աւելում և նշանակում է գանրալդաւորութիւնը<sup>3</sup>:

Մարդուս կենդանութեան ժամանակ ևս հոգին կարող է երբեմն հրբեմն հնապակ մարմնից, ասկայն այս ելումու զքը մեծ վասնդների հնիթակաց է. նա կարող է ճանապարհը կորցնել և այլ հովերադասնալ չկարենալ: Մի պարմ ածքում հոգին՝ մողէսի կերպարանքով, քնացողի բերանից դուրս է զնում, անցնում է մի սուռա վրայ դրած սրի վրայով, բայց յեպ վերադասնալ չէ կարող, քանի որ սուրը վերցւել էր: Քնայած կախարդի բերանից հոգին կապուի կամ կարմիր մկան կերպարանքով դուրս է վազում: կարելի-

Յովհաննէս Մկրոչի զլիապումը—արիւնաթաթախ մի զլուխ ափսէի մէջ դրած ներկացւում է մի թագաւորական զգեստով կնոջ, իսկ վերնումը մի խումք հրեշտակներ, որոնք ամպերի մէջ փաթթած մի սուռերամածերեխ—Յովհաննէսի հոգին—դէպի երկինք են բարձրացնում:

<sup>1</sup> Ծուլցէ, Եսէնդել, էջ 335:

Հմմո. Աբեհան, Եսէնդել էջ 74 և Հետիեալներ:

<sup>2</sup> Աբեղեան, Եսէնդել, էջ 67, և Հետիեալներ:

<sup>3</sup> Հմմո. Աբեղեան, Եսէնդել, էջ 55.

Է հոգու կրկին վերադարձը արդելել, ուրեմն կախարդը սպանելու հթէ նորա մարմինը շուռ տալով՝ բերանի մուղքը տեղափոխենք»<sup>1:</sup> Այդ պարմառով մեր պառաւները մեզ արգելում են զիշեր ժամանակ թուրքերի գերեզմանոցների («գէօռերի») մօպովն անցկենալու որովհետեւ հոգիները կարուի (սովորաբար սև կարուի) կերպարանքով ման են զալիս և քաղցած ժամանակ կարող են մեզ «ուփել» (Յացրնի է, թէ, թուրքերը իրենց մեռաւների դիակը գերեզմանում չեն ծածկում անմիջապէս հողով, այլ թողնում են մի աղաք բարածութիւն և դէպի դուրսը մի անցք, մի ծակ, որը յեպոյ դշակերների երթևեկութեանն է ծառայում):

Յաճախ գործ է ածում բարկացած մէկը՝ իր հակոռակորդի թուլութիւնը ցոյց տալու համար, այս ասացւածքը ձևա ինչ մարդ է որ, վղակոթիցը բո՞ւեմ; Հոգին ափիս մէջը կը դնի—Նա մի ճընճղկան չափ էլ հոգի չունիու երեւում է որ հոգին մի իր է, որը մի թոշնի պէս է երեակացում, որ հակառակորդը հազիւ ամենափոքր թոշնի—Ճնճղուկի չափ մի հոգի ո՞նի<sup>2:</sup> Աղաւնին, մտնաւանդ սպիտակ աղաւնին՝ իրքեւ արդարների և ու ազուալ՝ իրքեւ չարերի հոգին մգնելը սովորական է շար տեղի Խիար հասակաւոր պառաւը, յարկապէս չարախօս և կախարդ նկարւածը, դեռ ևս կենդանութեան ժամանակ կոչում է աև ազուաւ։ Մէկի վան կոտը կամ բակի ծասի վրայ նսպած ազուաւի կրկալը նշանակում է թէ մի չար հոգի վագախոսում է իրենց մտօին. Այդ պարմառով էլ զգուշութեան միջոցներ են ձեռք առնուում; օրինակ՝ չարախօս և չարաչք նկարւածի դրան շէմքի փայտից զողունի մի կոտը տաշում են ժանակով ու բերում թօնիրը զցում ու վառում։

Սրւերը իրքւ հոգի մասամբ պահել է դեռ իր նշանակութիւնը—պառաւները երեխաներին զգուշացնելով՝ ասում են. որ-

<sup>1</sup> Յուլցէ, Եովինթել, էջ 333.

<sup>2</sup> Պին. Արեղեան գրում է (Եովինթել էջ 10. համաձայն «Ակզ» հանդէսաւ 1. 317) թէ՝ «բուլոր՝ ինչպէս հասակաւորների, նողնպէս և երեխաների հոգիները հաւասար մեծ են նկարւում» կան տեղեր գուցէ, որ այդպէս էրաց վերոլիշեալասացածքը զործածելով Սալմասոցին ինչպէս և Վանեցին մրածում է իսկապէս հոգու մեծ և փոքր լինելու մասին. Հաւանորէն այդ մրածութեան ծնունդ են մեր մեծահոգի, փոքրողի բառերը։

Դիս, շաքի հետ չեն խաղաց. զիշերը երազում է կը տեսնես, կարող է գալ և խեղդել քեզը Տանը անկարգութիւն անող աշակերտին՝ արևի առաջ դրած մի ամանով ջրից պարի վրաց անդրադարձած շողը ցոյց տալով, զգուշացնում է պառաւ տափը, թէ՛ կարմիր պքաղալը կ'երթաց և վարժապետի ականջին մկը խօսին անկարգութեան մասին:

Նար բնական է, որ հոգին՝ իրրե խակական մարդ, իբրև մարդու գործող ևս ունենալու է մարդու կենդանութեան ժամանակւայ բարոյական արժանիքը Եթէ, մէկը իր կենդանութեան ժամանակը բարի էր, բարի է և նորա հոգին, եթէ հակառակը, այսպէս էլ սա: Բարի և չար որոշում է նոյց կենցաղավարութեան և գործունեութեան համաձայն, և միևնույն հոգին կարող է մէկը բարի՝ միւսը չար համարել: Այսպէս մեր դրացի ժողովրդի Ասկուծոյ անունը — Պարսկաց Դաևաս, հայերէն ղեւ — չար ողու նշանակութիւնն է արացել:

Ինչպէս կենդանի մարդկանց մէջ բարեկամներ և թշնամիներ կան, այդպէս և հոգիների մէջ. սակայն երկու սին ևս հարկաւոր է պաշտել, խնամել<sup>1</sup>: Ամենագարբական խնամքը կայանում է նոյց կերակրելու մէջ, որը ծնունդ է տալիս զոհաբերութեան սովորութեանը: Հոգիների ամենախոշոր կերակրութ նոյնպէս հոգին է, այսինքն մարդուս արիւնը: Մարդակերը խմելով ուրիշի արիւնը՝ կրկին նողարակի է հեգուեում: Նախ՝ դորանով իր հոգին է ոչնչացնում: (միաբերեք մեր արիւնուշտ, արիւնարբու, արիւնածարաւ բառերը): Այժմ դեռ շատ տեղ քուրդերի, Կովկասեան զանազան ցեղերի և լիուցնի հայերի մօր գոյութիւն ունի արեան վրեժ լուծելը մարդակերի նման: Եթէ սոցա թշնամին իր բնական մահով մեռել կամ ուրիշի ձեռքով սպանել է, բաւականութիւն սրացած չեն համարի դեռ. իրենք պէտք է սպանեն, յարկապէս նորա արիւնը

<sup>1</sup> Պ. Արելեանը հաւասորիացնում է (նոխոել էջ 7) թէ՛ մեղանում թէպէտ «վախենում են սև ծխանման դեերից, աշարունք»-ից, բաց նոյց չեն պատւում: Սակայն ուրիշ առթիւ գրում է՝ (նոխոել էջ 13)՝ «հանգուցեալ չար (վեասակար) հոգին հաշտեցնելու համար ուրելիք և խմելիք իրրե ընձայ, զոհեն տալիս նրանու: (Հմմո. նոխոել էջ 96): Երաց (Քիւրդերը) սիրելուց չէ որ պատւում են նրան (Ս. Սարգսին), այլ վախիցու:

Ժամեն կամ թափեն այն անձնաւորութեան զերեզմանի վրայ, որի մահւան վրէժը սոքա առաջադրել են լուծել Ենթադրւում է թէ նոր մորթած կենդանու տաք արիւնը խմելն էլ մէկին ուժեղ, արտոր կը դարձնի. այդ աղդեցութիւնն ունի նաև աքաղաղի սիրտը առանց ծամելու կուլ դալլ. սա ամենալաւ միջոցն է համարւում մուժից վախեցող երեխաները սրբուր դարձնելու համար: «Արիւնդ կը խմեմ, գոսում է իւր հակառակորդի վրայ սասպիրկ նեղացած մէկը, դրանով սպառնում է» թէ իր հակառակորդը մարմնով եւ հոգով, ամբողջովին ոչնչութեան կ'ինթարէի<sup>1</sup>:

Հոգեպաշտութիւնը սկսում է իրեւ առանձին առանձին ցրւած հոգիների պաշտամունք. բայց այսպեղից մի քայլ է միայն մինչեւ հաւալաշտութիւնը (նախահայրերի պաշտամունք, Ahnencult). ընդունիքի մեծ հօր հոգին դառնում է ցեղնորդների ընդհանուր պաշտամունքի առարկան: Ասու ածներ հայր կոչելլ, ինչպէս և իւրաքանչիւր ցեղի իր որոշ Ասքծուց՝ նախահօրից սերիլը սկսում է այս ժամանակ. իւրաքանչիւր ցեղ, ազգ, ունի իր յափուկ ցեղական, ազգային ասպածը, իր պաշտամունք, խնամնողը (երբայցեցոց Եհովան էլ մի ացդպիսի ցեղական ասպած էր): Ընդունիքի հայրերից մասնաւորապէս նրա հոգին առանձին պաշտամունքի նիւթ է դառնում, որը անսովոր, արսուաքոյ կարդի ոյժով և ձիբքերով օժգւած էր եղել և շատ քաջազործութիւններ արել—հերոսը, որի պաշտամունքը անւանում ենք հերոսապաշտութիւն (Heroencult):

Աւելի ուշ, երբ շատ ընդունիքներ ի մի ձուլեցան և կամ մի ընդունիք սասպիրկ ուժեղացաւ և իշխանութիւն ձեռք բերաւ միւսների վրայ, ընդհանուր պաշտամունքի առարկան այս յաղթող, իշխող ցեղի նախահայրը դարձաւ, միւսներին երկրորդական տեղ դալով. իսկ բանասպեղծները, երգիչները այս երկրորդական ասպւածները պիրող ասպուծոյ ընդունիքի թելերի մէջը հիւսեցին, համարելով որդի, թոռ, եղբայր, եղբօրորդի և այլն և այլն, յաղթւած ցեղերը շոյելու և յաղթողի լուծը դանելի դարձնելու համար (օրինակ Հայկի և Արմենակի վերաբերմամբ պատմածը): Բայց այսպիսի խառնուրդից և միաւորումից լեզոյ էլ դեռ այդ զանազան ասպւած-

<sup>1</sup> Հմմու, Արեշեան, նոյնուու էջ 11.

ները սպահանում էին իրենց մասնաւոր յարկութիւնը. մնում էր՝ արարչագործութիւնից որոշ մասեր վերագրել որոշ աստվածներին, որպէս զի սպացւէր բազմաստուածութիւնը (Polytheismus) իր խառնիմաղանց և բազմազան ասպւածներովը: Համեմարտաբար շափ ուշ միայն մարդը խորհրդածութեան առաւ, որ այսպէս բազմաթիւ ասորւածներ չեն կարող գոյութիւն ունենալ իրար կողքին, որ դռքա մարդկացին արեղծագործութիւններ են, այլ պէսք է լինի մէկը, մի բացարձակ էակ, ամենակապարեալ հոգին, մի խոկական Սարւած, որն սպեշնել է ամենքը: Այդ եզրակացութեան է հասնում միաստուածութիւնը (Monotheismus), իրը թէ միասպւածեանի Ասրւածը իր միահօղութեան արդաշրութիւնը և իր ցանկութեան մարմնացումը չլինէր:

# ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԱԶԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

«Deutsche Hilfsbünde für Armenien»

ԳԵՐՄԱՆԻՔ-ԿԱՐԱԳԵԶԵԱՆԻ

(Հարուճակութիւն \*)

Յարձակմունքներ չիլֆսունդի վրայ: Հիլֆսունդի (Օդ-  
նութեան միութեան) գորհունէութեանը շարերը թշնամաբար վե-  
րաբերեցին: Այդ բողբները կարելի է այսպէս դասաւորել. բողոք-  
ներ՝ 1) տաճկական կողմից, 2) կաթոլիկների կողմից, 3) հայկական  
և 4) գերմանական կողմերից:

Բնական է, որ Առութանը չի ցանկանում, որ օգնութիւն և  
համակրութիւն ցոյց պրւի իւր ապած հայերին, նա լաւ հասկա-  
նում է, ի հարկէ, նաև որբանոցների քաղաքական նշանակութիւնը.  
բացի այդ, պետական ինքնասիրութիւնից նա չի ցանկանում, որ  
Դրից անմիջական կերպով իւր հպատակներին օգնութիւն հասցնեի,  
ովքեր և լինէին այդ հպատակները, թիւրքեր թէ հայեր, այն  
մոլով, որ եթէ իրօք մի որ և է կարիք լինէր՝ ինքը կարող կ'ի-  
նէր օգնելու:

Կաթոլիկները, վաղուց ի վեր մրցելով Արևելքում ամերի-  
կան բողոքական միստինարների հետ, նայում են Հիլֆսունդի

\* Տես այսուլըն 1899, № 11-12, 1900 թ. և № 1:

վրայ եթէ ոչ որպէս մի նոր գործիքի բողոքականութեան գարած-  
ման Փոքր-Սսիացում և Հայաստանում, յամենայն դէպս ինչպէս մի  
կոշմնակի միջոցի, որը իրենց կաթոլիկական քարոզութեան դէմ  
կարող է դժւարութիւններ յարուցանել: Ի նկատի ունենալով պա-  
պականների գործելու ձևերը, որոնք միշտ խարդախութիւններով  
են ներշնչած և կուելու ոչ մի միջոց չեն արհամարում, պիտի  
զարմանալ, որ այս կողմից «Օգնութեան միութեան» վրայ մինչև  
այժմ չեն արւած նշանաւոր յարձակումները. սա, գուցէ, կարելի է  
բացաբրել այն հանգամանքով, որ Վասիլիկանը, առհասարակ, ու-  
րախ է Գերմանիացի զօրեղանալուն Արեելքում: Գերմանիացի մի-  
ջոցով նա ցոյս ունի աւելի լաւ պաշտպաննել իւր շահերը, Թիւր-  
քիայում, քան Ֆրանսիայի<sup>1</sup>:

Հայերի կողմից անբաւականութիւնը և թերահաւափութիւնը  
ծագած են դաւանական հողի վրայ. այսպեղ ասւում է, որ գերման  
Հիլֆսբունդ՝ օգտուում է հայերի աղեքալի դրութիւնից, նոցա մէջ  
իւր աւելաբարանական քարոզութիւնը առաջ քշելու համար: Այս  
թերահաւափութիւնը արդարացնուած է եղել և մեր մամուլի մէջ,  
որը հիմնուում էր, ինչպէս անմիջական աղբիւրներ—թղթակցու-  
թիւնների վրայ այն քաղաքներից, ուր Հիլֆսբունդը ունի իւր  
որբանոցները, որպէս և օպար թերթերի յօդւածների վրայ: Պատ-  
րիարք Օրմաննեանի նամակը մեծ վեզիրին, որը զբւած է եղել դա-  
ւանափոխութեան առիթով Հայաստանում, չի կարող չիշել այս-  
պեղ որպէս ացդպիսի թշնամական արդարացնութեան մի օրինակ.  
թէպէտ և այս նամակի վրայ, ինչպէս օրարները, այնպէս և հայերը  
յաճախ հիմնում են իրենց զանգարների Հիլֆսբունդ՝ նկարմամբ,  
բայց իսկապէս պատրիարք Օրմաննեանի գրութեան մէջ մի խօսք  
անզամ չի ասւած «Օգնութեան միութեան» (Հիլֆսբունդի) մասին,  
նոյն իսկ ասւած էլ չէ թէ բողոքական միասիօնարները, որոնց վրայ  
գանգարուում է նա մեծ վեզիրին,—գերմանացի են:

<sup>1</sup> «Zukunft» (=Ապագա) գերմանական շաբաթաթերթում, 1898, լուլիսի 16, կաև մի շահեկան յօդւած (Der Kaiser im Orient=կալսրը Արեելքում՝ խորագրով) Վասիլիկանի դիրքի մասին դէպի Գերմանիակի Արեելեան քաղաքականութիւնը:

Վերջապէս, դերմանական յարձակումները «Օգնութեան միութեան» վրայ անւում էին և մասամբ շարունակում են, երկու տեսակարից—քաղաքական ու բարոյական։ Նոքա, որոնք ջերմեռանդօրէն փափագում են Գերմանիայի հզօրանալը Տաճկատրանում, ամէն կերպ աշխատում են ապացուցանել, որ Հիլֆսբունդ՝ի գործունէութիւնը խանգարում է Գերմանիայի ազդեցութեան բնական զարգացմանը Կ. Պոլսում և ուղելով կորրել Հիլֆսբունդ՝ի անունը, սկսում էին նւազել բարոյականութեան լարերի վրայ, վերադրելով նորա գործիչներին բոլոքականութեան բարածման գործուգարշելի ձևեր. սորա նպագակն էր, ի հարկէ, զրկել Հիլֆսբունդ՝ը այն համակրողներից, որոնք փող են ուղարկում են նոցա յօգուր հայերի։ Բնականաբար գրնեցան մարդիկ, որոնք հայարեաց Հլիննլով, բայց չկարողանալով այս կամ այն պարճառով սրուգել այդ լուրերը, լոկ բարոյական գեսակէպից սկսեցին պախարակել Հիլֆսբունդ՝ին վերագրող վար գործերը։ Հերաքրքրական է, որ այս վերջինների թիւը շար աննշան է, և այս հանգամանքը կարելի է, երկի, բացապրել նորանով, որ մեծամասնութեան համար սպարզ էր Հիլֆսբունդ՝ի դէմ բոլոքողների անբաւականութեան պատճառը, այսինքն—Գերմանիայի քաղաքական և ելեմուական շահերը Արևելքում։ Ինչ վերաբերում է այն շրջաններին, ուր Հիլֆսբունդ՝ը վայելում է կարաբեալ համակրութիւն և նիւթական օդնութիւն, աշխատ յարձակումների հետեանքները բոլորովին հակառակ հանդիսացան,—ներարւութիւնները շափացան։

Ցոյց գալով «Օգնութեան միութեան» դէմ եղած բոլոքների շորտ գլխաւոր աղբիւրները, այժմ կը զբաղւենք աւելի մանրամասնօրէն գերմանական կողմից եղած յարձակումներով, և միայն սոցանով, որովհետեւ Սուլթանի և կաթոլիկների դժգոհութիւնները այն պեսակի են, որ նոցա աւելի լաւ պարզաբաննելը հաղիւ թէ կարողանաց նոր լոյս գցել մեզ հետաքրքրող հարցի վրայ. ինչ վերաբերում է հայկական գանգարակներին, ցաւում ենք որ մեզ յացունի չէ հայոց լրադիրների Թիւղքիալից այս ասիթով դրւած թշթակցութիւնների բռվանդակութիւնը. միւս կողմից էլ, ինչպէս ասացինք, հայկական գանգարները մասամբ հիմնւած են եղել նոյն գերմանական աղբիւրների վրայ։

Բնական է, որ պաշտօնական Գերմանիան, իւր ներկայ թիւրքամոլ քաղաքականութիւնը ի նկատի առնելով, չի կարող դրական կերպով, բացարձակօրէն, ոչ որևէ օգնութիւն հասցնել հայերին, ոչ էլ համակրութեամբ վերաբերւել դէպի նոցա: Զարմանալի չէ նոյնպէս, որ նոյն երկրի կառավարութիւնը չի կարող գոհ լինել, երբ մինչեւ անգամ ոչ-պաշտօնական Գերմանիան, ինչպէս, օրինակ, Հիլֆսբունդ'ը, օգնութիւն է հասցնում հայերին և այսպէս թէ այնպէս զանազան կասկածանքներ և տժգոհութիւններ է ծաղեցնում Սուլթանի մէջ: Այս կասկածանքները տաճկական շահերի տիսակէրից ևս կարող են բոլորովին անհիմն լինել. բայց գերման կառավարութիւնը չի կարող զբաղւել դոցա քննութեամբ, չի կարող հեռագրել իւր Պոլսի դեսպանին որ սա ապացուցանէ Սուլթանին, թէ սխալում է, և հանգստացնէ նրան: Սյդպէս կը գործէր ներլինը, եթէ նորա յարաբերութիւնները դէպի Բարձրագոյն Պուռը չէզոք լինէին. իսկ այժմ, միադրութիւն ունենալով մի ահագին և արեւելան ծրագիր իրագործելու, երբ նոյն ժամանակ բոլոր մնացած պետութիւնները, Սուլթանի գահը շրջապատած, անդադար մարդնանիշ են անում իրենց պահանջների վերայ, խնդրելով, որ այլ և այլ շինութիւնների արագութիւնները իրենց դրւի, և երբ այս կամ այն պետութեան յաղթանակը այդպիսի դէպերում, կախւած է լինում շատ անդամ Սուլթանի բոլոր կանոնական հաճոցքից, գերմանական կառավարութիւնը բնականաբար ոչ միայն չի կամենում միջնորդ լինել, հաշփեցնել Սուլթանին ոչ-պաշտօնական Գերմանիայի հետ, այլ ընդհակառը, ուշադրութեամբ հետեւում է Աբդուլ-Համիդի որամադրութեանը, մի՛շր պատրաստ նորա հետ միասին, և առանց ոնփական կարծիքին, յարձակի ելու նորան բարկացնողների վրայ, և գուրգուրալու նորա սիրելիների վրայ:

Ոմանք առում են, որ գերման կառավարութիւնը դադանի կերպով շատ է համակրում Հիլֆսբունդ'ին, ի հարկէ, ոչ թէ սորամարդասիրական դործունէութեան պարմառով, այլ այն մեծ ծառացութեան համար, որը Օգնութեան միութիւնը կարող է անել Գերմանիայի աղաքայ շահերի համար Տաճկասպանում, ինչպէս գաղութացին այնպէս և ելեմբական շահերի տեսակէփից: Սա անկարելի չէ: Ընդհակառակը, հաւանական է որ գերմանական հեռարելի քաղա-

քագէրները լաւ հասկանում են, որ 2.000 հայ որբերի դաստիարակութիւնը գերմանացիների միջոցով չնշին բան չէ Գերմանիայի արևելյան նպատակների համար. դիցուք մինչև անգամ, որ ներկինի կառավարութիւնը չի բաւականանում միայն բարոյական համակրոնքով, այլ և գործնականապէս օգնում է Հիլֆսբունդ'ին. բայց այս բոլոր ենթադրութիւնները, լինին նոքա ճիշդ թէ սխալ, այստեղ մեզ համար ոչ մի նշանակութիւն չունին. մեզ հետաքրքրում է դաւանական հարցը, և յայտնի է, որ Հիլֆսբունդ'ի վրայ գերման կիսապաշտօնական և անկախ մասնելի կողմից յարձակում ներ են եղել, պախարակումներով, որ նա զբաղւում է դաւանական գործերով։ Այդ յարձակումները կարող են կեղծաւոր կամ անփեղծ լինել. դորա պարզաբանութեամբ չպէտք է այսուել զբաղւել։ Այդ յարձակումները մեզ պիտի հետաքրքրեն այսպեղ, ինչպէս մի փաքր, մի երևոյթ, որ սլատահնել է, և պիտի միայն փորձել սրուցիլու, որքան այդ բոլորները համապատասխանում են իրականութեան։ ինչպէս առել ենք, այդ կարելի է մասամբ պարզել Հիլֆսբունդ'ի և ուրիշների գուած պատասխաններից։

1896 թւին, երբ եւրոպական և ամերիկական ընկերութիւնները դիմեցին հարձրագոյն Դրան, որ նոցա թոյլ տրւի սովեալ և վիրաւուած հայերին և մանաւանդ որբերին օգնութիւն հասցնելու, Բ. Դուռը նախ համաձայնեց, բայց վերջը թոյլ գուեց, միայն մի պայմանով, որ այդ օգնութիւնը լոկ մարդասիրական լինի, առանց որ և է քաղաքական կամ դաւանակուսական յետին նպատակների։ Անցաւ հազիւ մի երկու տարի, և գերմանական մի երկու թերթերի մէջ սկսեցին երեւան գոլ թշրթակցութիւններ և յօդւածներ Հիլֆսբունդ'ի գործունելութեան մասին, գովասանքներով և նկատողութիւնով, թէ Հիլֆսբունդ'ի գործը լաւ հիմք կարող է լինել ապագայ գերմանական գաղթականութիւնների համար Փոքր-Ասիա յում։ Թէափէտ այս և սորա նման կշռադարտութիւնները «Օգնութեան միութիւնից» չեն արդաշաբարում, ոչ անմիջապէս, ոչ էլ անուշակի կերպով նորա անդամների միջոցով, այլ յայտնւում էին բոլորովին կողմնակի անձերի կողմից, այնու ամենայնիւ, որովհետեւ վերուիշեալ հարծիքը սկսեց աւելի յանակ արդաշաբարել մամաւլի մէջ, գերմանական արդաքին գործոց նախարարութիւնը բաւականին

խիստ լեզով իւր կողմից հասկացրեց, որ գերման կառավարութիւնը այդ կարծիքների և «Օգնութեան միութեան» դործերի հետ ոչ մի կապ չունի. բացի այդ, անուշակի կերպով նա հասկանալ ոււց ում որ հարկաւոր էր, թէ որևէ թիւրիմացութիւնների դէպքում թիւրքաց կառավարութեան և Հիլֆսբունդի մէջ, վերջինը շպէտքէ սպասէ իւր կառավարութիւնից որևէ պաշտպանութիւն կամ միջնորդութիւն:

Իերլինի կենտրոնի տարեկան ժողովի արձանագրութեան մէջ կարդում ենք ի միջի այլոց հետեւալ խօսքերը. «Որովհետեւ «Օգնութեան միութեան» առաջարկւած էր, ի նկատի առնելով քաղաքական հանգամանքները, Հիլֆսբունդին ուրիշ անուն դալ, զանազան առաջարկութիւններ եղան, որոնց վերաբերմամբ մի ընդհանուր համաձայնութիւն ձեռք բերելը դեռ ևս չաջողւեց»<sup>1</sup>:

Ինչպէս յետոյ մենք իմացանք ճիշտ ալբիւրներից, այդ առաջարկութիւնը հետեւան է եղել. «Գերմանիայի արքաքին գործոց նախարարութիւնը առաջարկած էր «Գերմանական օգնութեան միութիւն Հայաստանի համար» (Deutscher Hilfsbund für Armenien) անւան մէջ, օգնութիւն» բառի փոխարէն գործածել «միսիօն» (=Mission) բառը, և «Հայաստան» կամ «Հայեր» բառերը ամենեւին չըիշել: Նախարարութիւնը առաջարկում էր Հիլֆսբունդին իր անունը դնել՝ «Գերմանական արեւելեան միսիօն» (Deutsche Orient-Mission): Այս անունը մերժւեց. բայցարդութիւնները յետոյ:

Հետաքրքրական է հետեւալ դէպքը, որ պատահել էր պատրոր Բրոկսի (Brockes)<sup>2</sup> «Օգնութեան միութեան» անդամներից մէկի հետ: Այս դէպքը կը բերենք այսպես իբրև օրինակ, թէ որքան չնշին բաներ են առիթ դալիս գերման կառավարութեան յարձակւելու գերմանական հայասէրների վրայ և մինչև ուրէ հանում գերման կառավարութեան պատրաստութիւնը կարարել առանց այլ և այլի Սուլթանի այս կամ այն հաճոյքը: Անցնելով Զէյթունից, Բրոկսը ցանկացել էր այսպես, լուսաւորչական մի եկեղեցում, առաւօպեան ժամերգութիւն կապարել. բայց այն բողէին, երբ նա ողափառատւում էր գնալ եկեղեցին, մի սուրհանդակ գալիս է

<sup>1</sup> «Aus der Arbeit d. arm. Hilfswerks 1899 April».

նորա մօր և արգելում է ժամերգութիւնը։ Այս արգելքի պարձառը եղել է մի բառ, որը նա արդասանել էր նախընթաց օրւայ երե։ կոյեան ժամերգութեան ժամանակ։ Խըլ Բրոկը այսպէս է պար-մում։ «Երեկոյեան ժամերգութեան ներկայ էր և մի ոստիկանական կոմիսար։ Ես խօսում էի փրկութեան մասին (Ղուկաս I, 68)։ Փիրկել թթքերէն ասում է կուրմարայց, որը նշանակում է նաև ազարել։ Կոմմիսարը, որը ոչինչ չի հասկանում կրօնական գործե-րից, այնպէս է հասկանում, իրը թէ ես խօսում էի հաջերի ազա-պութեան մասին դաճկական լծից։ Հերկւեալ օրը վաղ առաւօրեան երբ դեռ մութ էր, նա շրապում է լուսաւորչական քահանայի մօր և ասում՝ «օպարականը, որ այսօր քո եկեղեցում կամենում է քարոզ կարդալ, վրանգաւոր մարդ է, յեղափոխական է, որը ձեր ազգը կամենում է զրգուել, որպէս զի նա կառավարութիւ-նից անջապւի։ Ես արգելում եմ քեզ թոյլ դաշլ նորան խօսելու։ Դորանից յեպոյ քահանան ընդհարեց պարարագը, դուն ուղարկեց ժողովուրդը, փակեց եկեղեցու դռները և ուղարկեց ինձ վերոցիշեալ լուրը<sup>1</sup>։ Այս դէպքի հետևանքը եղաւ, ինչպէս նկարազրում է «Berliner Tageblatt»-ի թղթակիցը հերկւեալը։ Զէլթունի դայմա-գամը յալինում է Հալեպի վալիին, իսկ վերջինը՝ Կ. Պոլիս. Բարձ-րագոյն Դուսն էլ իւր կողմից յալինում է Կ. Պոլսի գերմանական դեսպանին, ինդքելով նորա աջակցութիւնը, որպէս զի այսպիսի դէպքեր այլ ևս չպարահեն աւագայում։ Այդ միջոցին Բրոկսը վե-րադառնում է Զէլթունից Կ. Պոլիս, ուր դեսպանագունը նորանից բացարութիւն է պահանջում։ Պաստորը բացաբրում է, որ ինքը խօ-սելով փրկութեան մասին, ոչ մի քաղաքական դիսաւորութիւններ չէ ունեցել։ Դեսպանագունը այդ բացաբրութիւնը Բ. Դրան գանգապի հետ միասին ուղարկեց Գերմանիայի արտաքին դործոց նախարա-րութեանը։ «Դորա վերջը այն եղաւ, որ, յանոն գերմանական նէ տաճկական կառավարութիւնների մէջ իշխող լաւ յարացերու-թիւնների, պատոր Բրոկսը, համաձայն կացսերական հրամանի, պաշտօնագուրկ եղաւ, պատուեր սրանալով առանց յեպաձգութեան վերադառնալ Գերմանիա։ Թղթակիցը ինքը խոսպովանում է, որ

<sup>1</sup> «Der Reichsbote», № 89, 1899.

Ֆրանսիան կամ Անգլիան այսպիսի դէպքում Բ. Դրան դիմումներին ոչ մի ուշադրութիւն չէին ընծացի, բայց, աւելացնում է նա, դա միայն նորից կ'ապացուցաներ այդ սեղութիւնների սխալ դիրքը (incorrecte Haltung) դէպի Թիւրքիան, և բացի այդ, նոցա վարմունքը Գերմանիայի համար օրինակ չէ<sup>1</sup>:

Բայց ամենանշանաւորն է գերմանական կիսապաշտօնական թերթի «Kölnische Zeitung»-ի արշաւանքը Նիլֆորունդի դէմ նա օգտեց իւր յարձակման մէջ ինչպէս պ. Բրոկուի հետ պատահած այս դէպքից, նոյնպէս և պարորիաբք Օրմանեանի յայտնի նամակից գաճկաց մեծ վեղիրին, որը գրւած է մօտաւորապէս նոյն ժամանակները: Որովհերկ Օրմանեանի այս գրութիւնը մեծ թիւրքացութիւնների պատճառ եղաւ, և 0դն. միութեան ինչպէս թշնամիները նոյնպէս էլ համակրողները հիմնւում են նրա վրայ իրենց յարձակման և պաշտպանութեան ժամանակ, մենք կը բերենք այդ նամակից քաղաքացներ գլխաւոր կէտերի մասին<sup>2</sup> ևս սփիպւած եմ, գրում է Օրմանեանը, դարձնել կառավարութեան ուշադրութիւնը մի դրութեան վրայ, որը վազուց գոյութիւն ունի և այժմ՝ վագացել է, և որը մեծ նշանակութիւն ունի մեր եկեղեցու և համայնքի համար:... Բողոքական և կաթոլիկ միսիոնարները գացթակլեցնում են հայերին, որոնք այժմ զրկւած են կենսական միջոցներից, պաշտպանութեան և օդնութեան զանազան խոսքութներով, և հէնց Վան քաղաքում և նրա շուրջը, ուր տիրում է ոչ միայն աղքաքութիւն, այլ և սով, հայերին խոսրացւած է եղած փող այն պայմանով, որ նոքաթողնեն իրենց եկեղեցին, և անցնեն Հռոմի գիրկը, փոխեն թեսկերէ-ի-օսմանիէն, փոխեն ցուցակները... (Zu Rom ubergehen, ihr Teskeré-i-Osmanié wechseln, die Register ändern...). Նոցա ասւած է եղել որ թոյլ կը պրւի նրանց ճամբորդելու երկրի մէջ և փող վաստակելու: Այսպիսի խոսքութներից բրդւած, յուսալով որ պաշտպանութիւն և օդնութիւն պիրի սփանան այն ազգերի կողմից, որոնց հաղորդակներն են դառնալու, խեղճ մարդիկը, շնորհւ Վանի միսիոնարների սփիպւած են եղել անցնել հռոմանական եկեղեցին:

<sup>1</sup> «Berl. Tageblatt»ի լաւելւածի մէջ «Der Zeitgeist» № 32, 1890.

<sup>2</sup> Չունենալով բնադիրը, թարգմանում ենք գերմաներէնից:

